1242-ան

2004

6-59 808-Ա Հ

# ԾԻՍԱՐԱՆ

որ կոչի

# ՄԱՇՏՈՑ

Յորում առանձինն [illegible] արարողութիւնք [illegible] ըստ սահմանադրութեան սբ եկեղեցւոյս հայոց ։

'ի Հայրապետութեան սբյ Էջմիածնի Տն և Տն Եփրեմ սրբազնագոյն կաթուղիկոսի ամ Հայոց ։

Եւ 'ի Պատրիարքութեան սբյ Երուսաղէմի Տն Գաբրիէլ [illegible] ։

Եւ 'ի Պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ Տն Կարապետի [illegible] արք Եպիսկոպոսի ։

Նորոգ տպագրեալ ըստ հնագոյն և ընտիր օրինակաց 'ի պէտս արժանաւորաց վերստին ։

1824 ՅՕՐԹԱԳԻՒՂ

'ի Տպարանի Արապեան Պօղոսի ապուչեխցւոյ, և երից որդւոց նորա՝ Ածատրոյ Գէորգայ և Գալուստի ։

Printed in Turkey
Printed in Turkey

264+243



Որք 'ի քրիստոս մկրտեան ցայք·
Ուրախ լերուք զի փրկեն ցայք:

Printed In Turkey

Կանոն չէնդանաւոր ոչ Մկրտութեանն ։
Տանին զնորածին երեխայն ՚ի դուռն եկե-
ղեցւոյն , և ասեն ․

ՕՐՀՆԵԱԼ ՀՈգիդ սուրբ Աստուած ճշմարիտ ։

Ողորմեա ինձ ած ըստ մեծի ողոր''։
զփոխն ըմն ասա՛ ․

Փառք հօր''։ Եւ այժմ''։ Օրհնու''։

Տէր ո՛չ բարձրացաւ սիրտ իմ, և ո՛չ զբօսան աչք իմ։ Ո՛չ գնացի ես ընդ մեծամեծս , և ո՛չ ընդ այնոսիկ որք քան-

սքանչելի էին քան զիս։ Բայց թէ
խոնարհեցայ ես ո՟պ մանուկ հատու-
ցեալ ՚ի ստենէ մօր իւրոյ. և դարձ-
ն՟ր անուրէն ՚ի նոյն։ Այլ հպարտա-
ցուցի արդեօք զանձն իմ, այսպէս
եղիցի հատուցումն անձին իմոյ, յու-
սացաւ իսրայէլ ՚ի տէր յայսմհետէ
մինչև յաւիտ՟ենն։ զՓառս Երրորդութեան։

Փառք Հօր"։ Եւ այժմ"։ Օրհնու"։

Առ քեզ տ՟ր համբարձի զանձն իմ,
ա՟ծ իմ ՚ի քեզ յուսացայ, մի ամաչե-
ցից, և մի ծիծաղեսցին զինև թշնա-
միք իմ։ Ամենեքեան որ համբերեն
քեզ մի ամաչեսցեն, այլ ամաչեսցեն
անօրէնք յունայնութ՟ե իւրեանց։
Զճանապարհս քո տ՟ր ցո՛յց ինձ, և
զշաւիղս քո ուսո՛ ինձ։ Առաջնոր-
դեա՛ ինձ ՚ի ճշմարտութ՟ե քում և
ուսո՛ զիս, զի դու ես ա՟ծ փրկիչ իմ.
և ես քեզ համբերի զօրհանապազ։
Յիշեա՛ տ՟ր՝ զգթութի՟ս քո և զողոր-
մութի՟ս որ ենն յաւիտենից։ Զմեղս
մանկ-



(Կարգ Սաղմոսերգեան)

մանկութե՟ իմոյ և զանգիտութեան
իմոյ մի՛ յիշեր․ այլ յիշեա՛ զիս տէր
ըստ ողորմութե՟ քում՝ վ՟ս քաղցրու-
թե՟ քո, զի քաղցր և ուղիղ ես տ՟ր։
Վ՟ս այսորիկ օրէնսդէտ առնես ըզ
մեղաւորս ՚ի ճանապարհի, առաջնոր
դես հեզոց ՚ի դատաստանի․ ուսու-
ցանես հեզոց զճանապարհս քո։
Ամենայն ճանապարհք տ՟ն ողորմութ՟
և ճշմարտութեամբ են այնոցիկ, որ
խնդրեն զուխտ և զվկայութի՟ ն՟ր։
Վ՟ս անուան քո տ՟ր քաւեա՛ զմեղս
իմ՟ զի բազում եղեն․ ո՛վ է մարդ որ
երկնչի ՚ի տ՟նէ, օրէնսդէտ առնէ
զնա ՚ի ճանապարհ յոր և հաճեցաւ։
Անձն ն՟ր ՚ի բարութե՟ հանգիցէ, և
զաւակ ն՟ր ժառանգեսցէ զերկիր։
Զօրութի՟ է տ՟ր երկիւղածաց իւ-
րոց, և զկտակարանս իւր ուսուցա-
նէ ն՟ց։ Աչք իմ յա՟մ ժամ առ տ՟ր․ և
նա՛ հանէ յորոգայթէ զոտս իմ։
Նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ, զի
միամօր և աղքատ եմ ես։ Նեղութիք
սրտի



(Կարգ Մխիթարեան)

սրտի իմոյ բազում եղեն յոյժ, և՛ի վշտաց իմոց հա՛ն զիս։ Տե՛ս զխոնարհու-հութիւն իմ և զվաստակ իմ, և թո՛ղ ինձ զա՛մ զմեղս իմ։ Տե՛ս զթշնամիս իմ զի բազում եղեն, ատելութի, զոր ՛ի նանիր ատեցին զիս։ Պահեա՛ զանձն իմ և փրկեա՛ զիս, և մի՛ յամօթ եղէց զի յուսացայ ՛ի քեզ։ Անբիծք և ու-ղիղք կցո՛րդք եղեն ինձ, և ես քեզ համբերի. փրկեա՛ ած զԻէլ յամ նեղ ութեանց նորա։

Փառք հօր"։ Այ– և յա"։ Օրհնեա"։

Դատ արա ինձ տր, զի ես յան"։
Փորձեա՛ զիս տէր և քննեա՛ զիս։
Ողորմութիւն քո տէր առաջի աչաց"։
Ո՛չ նստայց ես յաթոռս նանրաց"։
Ատեցի՛ ես զժողովս չարաց. և"։
Լուացայց սրբութ֊ զձեռս իմ. և"։
Լսել ինձ զձայն օրհնութե քո. և"։
Տր սիրեցի զվայելչութիւն տան քո"։
Մի՛ կորուսաներ ընդ ամբարշտ"։
Որոց ձեռք իւրեանց յանօրէնու"։



( Կարէն Միրզա-բէկեան )

Ես յանբծութեան իմում գնացի"։
Ոտն իմ կացցէ յուղղութ̃ն • յեկե"։

Փառք հօր"։ Ես․ ես խա"։ Օրհնու"։

Տ̃ր լոյս իմ և կեանք իմ • ես յու"։
'Ի մերձենալ առ իս չարաց ուտել"։
Եթէ պատրաստեսցի 'ի վ̃ր իմ պա"։
Զ մի խնդրեցի 'ի տ̃նէ', և զայն"։
Տեսանել ինձ զվայելչութ̃ի տ̃ն • և"։
Ծածկեաց զիս 'ի խորանի իւ"։
'Ի վիմէ բարձր արարեր զիս • և"։
Շուրջ եղէց և մատուցից 'ի խո"։
Լ̃ուր տ̃ր ձայնի իմում զի կարդա"։
Մի' դարձուցաներ զերեսս քո"։
Օգնական իմ լեր տ̃ր՝ և մի' անար"։
Հայր իմ և մայր իմ թողին զիս"։
Օրէնսդէտ արա զիս տէր 'ի ճա"։
Ա ս̃ թշնամեաց իմոց մի' մատներ"։
Յարեան 'ի վ̃ր իմ վկայք մեղաց"։
Հաւատացի տեսանել զբարու"։

Փառք հօր և"։ Սաղմ և"։



( Կարգ Մ՚հերու-բեան )

Սուրբ շնորհօքն հարբեր և ողջունեալ Բէլէս 'ի
խորհուրդ չնմարար արեան և ջրոյն, որ էլ
'ի տիգախոց կողէն քո. և տուր Ը արարչին։

բկ Երրորդութիւն անբաժանելի և
զօրութիւն երկնային լոյս ծա-
գեալ յաշխարհ. Նորմա
հանգուցք զօրհնութիւն երգով.
Որ էջն յերկնից այսօր և հան-
գեաւ յառաքեալսն ճշմարիտ Հո-
գին. Նորմա հանգուցք։
Որ ի խորհուրդս փրկական
այսօր ընդ իջանել յառաքելոցն
ծանուցաւ մարգարէիւն. Նորմա։

Սուրբ խաչէս ապաշխարութեան գրեր։

Պահպանեա զնարոտս քո Տէր մեր
ընդ հովան։ Հայր մեր որ։

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։
Քրիստոս Տէր մեր որ զհեռացեալս 'ի քէն
զազգս մարդկան, զանկեալս 'ի դրախ-
տէն փափկութեան ոչ անտես արարեր.

 Այլ

Որ գթացեալ խոնարհեցար 'ի քումմէ բարձրութենէդ 'ի մեր նուաստութիւս, առնլով զբոլոր մեր բնութիւնս բաց 'ի մեղաց։ Չարչարանօք և մահու խաչին զփրկութիւն մեր և զդարձ գնեալ, վերստին շնորհեցեր մեզ կենդանութիւն։ Ընկալ և այժմ մարդասէր տէր՝ զբարէյօժարութիւն ստեղծուածոյս քո, որ դիմեաց մերձենալ 'ի սբ և 'ի ճշմարիտ ածութիւնդ քո քրիստոնեայ անուն յանձին կրելով։ Նորոգեա՛ զսա յա՛մնեղունէ մեղաց. և ազատեա՛ 'ի ծառայութենէ սատանայի։ Տուր սմա զօրութիւն և օգնականութիւն արժանաւորիլ և հասանիլ 'ի մկրտութիւն սբ աւազանին, և 'ի ժառանգութիւն երկնից արքայութեանդ, տերամբ մերով յիւ քիւ։ Ընդ որում հօր՝ միանգամայն և հոգւոյդ սբյ՝ վայելէ փառք իշխանու"։

Ամն խաղաղու"։ Սման երեխայիս աղաչեսցուք զմարդասէրն ած, զի

 ողոր-

( Կարէ Մ՝Նէփա-Ըեան )

ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում. և արժանաւորեսցէ զամ լուսացման վերստին ծննդեան, և զգեստու անապականութե։ Եւ զու-գաթուեսցէ զամ ընդ հաւատացելս անուան իւրոյ. և կեցուսցէ շնոր-հիւ ողորմութե՛ն իւրով։ Ամենակալ տէր Ած մեր կեցուսցէ և ողորմեսցի։

Եւ քահանայն ասէ Գ. տէր ողորմեա։

## Աղօթք.

Ընկալ մարդասէր տէր՝ զընծայեալս քեզ զերեխայս զայս, և սրբեա ըզ-միտս և զխորհուրդս սորա յամ ներ-գործութեց հակառակորդին։ Եւ ար-ժանի՛ արա զսա ՚ի ձեռն մբ աւազա-նին լուանալ զհնութի մեղաց իւրոց, և նորոգիլ լուսով շնորհաց քոց։ Զի և սա մեզ հանդերձ փառա-ւորեսցէ զհայր և զորդի և զսբ հո-գի. այժմ և՛։

Եւ նա խաղաղու՛։ Վասն քաւութե մեղաց և թողութե յանցանաց, և



իշա-

իջանելոյ ողորմութեան քո 'ի վերայ երեխայիս՝ զոր աղաչեսցուք ։

Եւ քահանայն ասէ զՏէր ողորմեա ։

## Աղօթք ։

Տէր Աստուած մեր՝ և փառաւորեալ յամենայն արարածոց, 'ի քո ահաւոր և ամենազօր անուանդ ապաւինեալ ծառայս քո, խոնարհեցոյց զգլուխ իւր անուան քում Տէր ։ որում կրկնի ամենայն ծունր երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց ։ և ամենայն լեզու խոստովան լինի, եթէ Տէր է Յիսուս Քրիստոս 'ի փառս Աստուծոյ հօր ։ Արդ՝ յայդմ ահաւոր անուանէդ մասն հաղորդութեան ընկալցի սա․ որ հալածեաց զխաբէութիւն սատանայի, և զամենայն որոգայթըս մոլորութեան նորա խափանեաց ։ Նայեա՛ Տէր ողորմութեամբ քով 'ի սա․ մերժեա՛ և հեռացո՛ 'ի սմանէ ամենայաղթ կոչմամբ անուանդ քո 'ի վերայ սորա, զխորհուրդս՝ զբանս և զգործըս, և զամենայն խաբէութիւնս չարին, որով



սա-

սովոր է խաբել և կորուսանել զմար
դիկ։ Այլ զի զարհուրեալ ՚ի յաղթող
անուանեդ քումմէ, տագնապեսցի
և տանջեսցի աներևոյթ տանջանօք.
և երկդիմամբ հեռասցի ՚ի սմանէ, այլ
մի ևս դարձցի ՚ի սա։ Այլ զսա երկ
նային շնորհօքդ, և զուարճացո ա
մենաբարի կոչմամբ քրիստոնէից ան
ուանելով. և արժանի արա զսա մկր
տութեան վերստին ծննդեան սբ աւա
զանին։ Այլ ընդունելով զհոգիդ քո
սբ, մարմին և անդամ եղիցի եկեղեց
ւոյ քում սբյ։ Այլ անարատ քրիստո
նէութեան կրօնաւորեալ յայսմ աշխիս,
համբերձելոց բարեացդ հասցէ ընդ
ամ սբս քո։ Փառաւորելով զանփո
փոխելի երրորդութիւնդ քո, այժմ և միշտ
և յաւի՛՛ ։

Ապա քահանայն երեք ծունր կրկնէ և ասէ։

՚Ի քեզ անկայ ես յարգանդէ. յորո
վայնէ մօր իմոյ դու ես այ իմ։



Ապա

(Կարէ Ս՚նջաւ-լեան)

Այգ աւուր շարականն 'ի ձայնն, դասակաց
յարութեան՝ և այլն :

Հրաժարիմք 'ի սատանայէ՝ և յա" .

Այգ դասակաց յարութեան՝ և այլն .

Գոհանամք 'ի լոյս մծ գիտութե .

Հաւատամք յամենասուրբ երրորդու-թիւնն՝ 'ի Հայր, և յորդի, և 'ի սուրբ հոգին։ Զաւետումն գաբրիէլի, զծնունդն քի, զմկրտութիւնն, զչարչարանսն, զխաչելութիւնն, զթաղումն երեքօրեայ, զյարութիւնն, զմծապէս համբարձումն, զնստիլն ը աջմէ հօր, զահաւոր և զփառաւորեալ զմիւս-անգամ գալուստն՝ խոստովանիմք և հաւատամք .

Ալէլուիա Օրհն .

ՄԷՅ Աւետարան ՅԷ 'ԲԷ որ ըստ Մատ" .

Իսկ մետասան աշակերտքն գնացին 'ի գալիլեա 'ի լեառնն՝ ուր ժամա-դիր եղև նոցա յս : Եւ իբրև տեսին զնա՝ երկրպագեցին նմա . և ոմանք յերկ-



մտեա-

ուացան ։ Եւ մատուցեալ յս̃ խօսե֊ցաւ ընդ նս̃ եւ ասէ ։ տուաւ ինձ ա̃մ իշխանութի յերկինս եւ յերկրի․ ո̃պ առաքեաց զիս հայր, եւ ես առա֊քեմ զձեզ․ Գնացէ՛ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՛ք զա̃մ հեթանոսս․ մկրտեցէ՛ք զնս̃ յանուն Հօր՝ եւ Որդ֊ւոյ՝ եւ Հոգւոյն ս̃բյ։ Ուսուցէ՛ք նց̃ պահել զա̃մ՝ որ ինչ պատուիրեցի ձեզ․ Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զա̃մ աւուրս՝ մինչեւ ՚ի կատարած աշխարհի ։

Հաւատամք ՚ի մի ա̃ծ ՚ի հայրն ամե֊նակալ, յարա" ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յա֊ռաջ քան զյաւիտեանս․ եր" ․

Այժմ եւ յա"։ Եւ եւս հաւատով աղա֊չեսցուք եւ խնդրեսցուք ՚ի տ̃նէ ա̃յ եւ ՚ի փրկ"։

Տ̃ր մեր եւ փրկիչ յս̃ ք̃ս․ որ մեծ"։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Խաղաղութեամբ քով ք̃ս փրկիչ"․

Հայր մեր որ յեր" ։

Ալէլուիա ալէլուիա :

Խոստովան եղերուք տ̃ն զի բա՛ :
Ասասցէ տունն իսրայէլի զի բա՛ :
Ասասցէ տունն ահարօնի զի յա՛ .
Ասասցեն երկիւղածք տ̃ն զի յա՛ :
Ի նեղութեան կարդացի առ տ̃ր . և լուաւ ինձ յանդորր : Տ̃ր է իմ օգնական , և ես ոչ երկեայց . զի՞ արասցէ ինձ մարդ : Տ̃ր է իմ օգնական , և ես տեսից ՚ի թշնամիս իմ : Բարի է յուսալ ՚ի տ̃ր քան յուսալ ՚ի մարդիկ . բարի է յուսալ ՚ի տ̃ր քան յուսալ յիշխանս : Ամենայն ազինք շրջեցան զինև , և անուամբ տ̃ն յաղթեցի ն̃ց . Շրջելով շրջեցան զինև , պաշարեցին զիս ՚ի միասին , և անուամբ տ̃ն վանեցի զն̃ս : Շուրջեզեն զինև որպէս մեղուք , վառեցան բորբոքեցան որպ̃ փուշք ՚ի հուր , և անուամբ տ̃ն մերժեցի զն̃ս : Ի մերժելն դրդուեցայ՝ և եղէ մերձ ՚ի գլորիլ . և տէր իմ ընկալաւ զիս : Զօրութ̃ի իմ և օգնութ̃ի իմ տ̃ր , և

եղև

եղեւ ինձ 'ի փրկութի̅ : Ձայն ցըն-ծութե̅ փրկութե̅՝ 'ի յարկս արդարոց . Աջ տն̅ արար զօրութի̅ , աջ տն̅ բարձր արար զիս , և աջ տն̅ արար զօրութի̅ : Ո՛չ մեռայց , այլ կեցից և պատմեցից զգործս տն̅ : Խրատելով խրատեաց զիս տէր , և 'ի մահ ո́չ մատնեաց : Բացէ՛ք ինձ զդրունս արդարութե̅ զի մտից ընդ այն, և խոստովա́ն եղէց տեառն :

Ապա մտանեն յԵկեղեցին ասելով :

Այս դուռն տն̅ է , և արդարք մը-տանեն ընդ սա : Խոստովան եղէց քեզ տր̅ զի լուա́ր ինձ , և եղեր ինձ 'ի փրկութի̅ : Վէմն զոր անարգեցին շինողքն , նա́ եղև գլուխ անկեան : 'Ի տեառնէ եղև այս , և է́ սքանչելի առաջի աչաց մերոց : Այսօր է զոր արար տր̅ , եկա́յք ցնծասցուք և ու-րա́խ եղիցուք 'ի սմա : Ո՛վ տր̅ փրկեա́, ո́ տր̅ առաջնորդեա́ . օրհնեա́լ որ գա-լոցդ ես յանուն տն̅ , և օրհնեցաք ըզ

քեզ ՚ի տանէ տն: Տր ած մեր երևե
աւ մեզ, արարէք տօնս ուրախութն
կանխաւ, մինչև յանկիւնս սեղանոյ:
Ած իմ ես դու խոստովան եղէց քեզ.
ած իմ ես դու՝ և բարձր արարից
զքեզ: Խոստովան եղէց քեզ տր զի
լուար ինձ, և եղեր ինձ ՚ի փրկութի:
Խոստովան եղերուք տն, զի բարի
է՝ զի յաւի":

## Շարական. դկ.

Ողորմութն քո զդուռն բաց մեզ
տր. և արժանի արա զմեզ լուսեղէն
յարկաց քոց ընդ սուրբս քո:
Զպատրաստեալ քո օթևանս սբց
քոց. ընկալ և զմեզ փրկելոց յորդէ
գրութիւն ՚ի դպրութեան կենաց.
Ինստել քո յատենի դատաւոր ահեղ
խնայեա յարարածս քո. բարեխօ
սութբ և աղօթիւք սբ Ճգնաւո
րացն.

Աղաղակեցէ՛ք առ Տ(է)ր ամ(ենայն) երկիր ·
ծառայեցէ՛ք Տ(եառ)ն ուրախութ(եամ)բ ։
Մե՜ եկեղեցեաւս աղաչես"։
Դնէ՛ջ տաճարիս և առաջի ած(ը)ն"։
Երթան դէպ աւազանն ասելով

գձ Ըրեգա՛կն արդարութ(եա)ն ք(րիստո)ս ծա–
գեալ յաշխա՛րհս՝ հալածեաց ըզ
խաւա՛րն անգի՛տութ(եա)ն · և յետ մա–
հու և յարութ(եա)ն համբարձաւ առ
հա՛յր յո՛րմէ ծա՛գեաց՝ · որ երկրպա–
գի յերկնաւորաց և յերկրաւորաց
ընդ հօ՛ր և ս(ուր)բ հո՛գւոյն՝ · վ(ասն)յ և մեք
երկիր պագանեմք հօր՝ որդւո՛յ և
ճշմա՛րտ · Որ փոխանա՛կ ծոցածի՛ն
բանի՛ն որ ե՛ւ յե՛րկինս առաքե–
ցաւ աւետի՛քըն հօ՛ր ի՛ բարձանց հո–
գի՛ն ճըշմա՛րտութ(եա)ն , մխիթարել
զորս յադամայ տըրտմեցելոց և հրա–
զինե՛լ զընտրեա՛լ դասս առաքե՛լոց՝ ·
վ(ասն)որոյ ։ Այսօր տըրտմակա՛ն և գի–

շերոյին լուծան երկունք ծնընդեան
նախամօրն . քանզի ըզ ծնեալըն
մարմնով իմաց և յապականութե .
վերըստին ծնանի հոգւին յորդւոյս լու
սոյ հօրն երկնաւորի . վերոյ և"։

Առնու քահանայն զիւղն օծութեան ՚ի ձեռն
իւր, և սարկաւագն ասէ :

Եւ ևս խաղա"։ Վասն իջանելոյ շնոր_
հաց հոգւոյն սուրբ ընդ իւղոյս այսո_
րիկ՝ զՏէր աղաչեսցուք :

Եւ քահանայն ասէ † Տէր ողորմեա . և ապա
աղօթս :

Օրհնեալ ես Տէր Աստուած ամենակալ, որ ընտրեցեր քեզ նոր ժողովուրդ ՚ի քահանայութի և ՚ի թագաւորութի. յազգ մի, ժողովուրդ սեպհական. ըստ որում նմանութե յառաջագոյն օծեր զքահանայս զմարգարէս և զթագաւորս ամենասուրբ այսպիսի իւղով: Եւ այժմ աղաչեմք զքեզ Տէր բարերար, առաքեա զշնորհս ամենասուրբ հոգւոյդ ընդ իւղոյս: զի որ օծցի, եղիցի նմա ՚ի

՚ի սրբութի հոգևոր խնամատութե. ՚ի նահատակութի և ՚ի յաղթութի հակա֊ ռակամարտին։ ՚Ի զօրութի պատուի֊ րանապահութե առաքինի գործոց, և յամենակատար հրահանգս և ՚ի կր֊ թութիս ածպաշտութե։ Ո՜չ զի լու֊ սաւորեալ մտօք կեցցէ յոյժ աշխար հիս ՚ի փրկութի անձին իւրոյ, ՚ի պատիւ և ՚ի փառս ամենասուբ երրոր֊ դութեդ. Նա արժանի լիցի հաստա֊ նել վիճակի ժառանգութե սրբոց ՚ի լոյս։ Փառաւորելով զհայր և զոր″։

Երգանէ գիշերն յառաւօտն խաղաղանման՝
և ասէ։

Ձայն տն ՚ի վր ջուրց. և ած փա″։
Մատուցէք տն որդիք այ. մա″։
Մատուցէք տն զփառս և զպա″։
Ձայն տն ՚ի վր ջուրց. և ած փա″։
Ձայն տն զօրութեանց. և ձայն″։
Ձայն տն փշրէ զմայրս, և ման″։
Մանրեսցէ զնոսա որպ զմատաղա″։
Ձայն տն հատանէ՛ զբոց ՚ի հրոյ″։
Ձայն տն հաստատէ՛ զեղջիւրս″։



՚Ի

'ի տաճարի նր ամենեքեան ասաս''։
Տէր զջրհեղեղս նստուցանէ՛ և''։
Տէր զօրութիւն ժողովրդեան իւր''։

Ընթերցուած յԵզեկիէլէ մարգարէէ ։

Այսպէս ասէ տր. և ցանեցից 'ի վր ձեր ջուր սբ, և սրբեսջիք յամ պղծութեց ձերոց, և յամ կռոց ձերոց սրբեցից զձեզ։ Եւ տաց ձեզ սիրտ նոր, և հոգի նոր նորոգեցից 'ի ձեզ. և հանից զսիրտ քարեղէն 'ի մարմնոյ ձերոց, և տաց ձեզ սիրտ մարմնեղէն. և զհոգի իմ տաց 'ի ձեզ։ Եւ արարից՝ զի յարդարութիւնս գնասջիք, և զիրաւունս իմ պահիցէք և առնիցէք զնս, և բնակիցէք յերկրին զոր ետու հարցն ձերոց. և եղիջիք ինձ 'ի ժողովուրդ, և ես եղէց ձեզ յած ասէ տր։

Պօղոսի առաքելոյն 'ի գաղատացիս''.

Այս օրէնքն դաստիարակք եղեն մեզ 'ի քս յս, զի 'ի հաւատոցն արդարասցուք։ Այլ իբրև եկին հաւատքն, ոչ ևս ընդ դաստիարակաւ

եմք․ քանզի ամենեքեան որդիք ա՟յ էք, հաւատովք յ՟ս ։ Որք միանգամ ՚ի ք՟ս մկրտեցայք, զք՟ս զգեցեալ էք։ Չիք խտիր, ոչ հրէի, և ոչ հեթանոսի․ ոչ ծառայի, և ոչ ազատի․ ոչ արուի, և ոչ իգի․ զի ամենեքեան դուք մի էք ՚ի ք՟ս յ՟ս․ Ապա եթէ դուք ք՟ի էք, ուրեմն աբրահամու զաւակ էք, ըստ աւետեացն ժառանգք ։

Ալէ" ալէ"։ Տ՟ր հովուեսցէ զիս"։

ԱԷ Ստորնե․ ՅԷ ՚ԲԷ ոչ ըստ Յոհան"։

Եւ էր՝ այր մի ՚ի փարիսեցւոց անտի, Նիկոդեմոս անուն նր՟, իշխան հրէից։ Սա եկն առ յ՟ս ՚ի գիշերի և ասէ ցնա․ ռաբբի՝ գիտեմք թէ յ՟այ եկեալ ես վարդապետ․ զի ոչ ոք կարէ զայդ նշանդ առնել՝ զոր դուդ առնես․ եթէ ոչ ա՟ծ իցէ ընդ նմա ։ Պատասխանի ետ յ՟ս՝ և ասէ ցնա․ ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ մտանել յարքայութին ա՟յ։ Ասէ ցնա Նիկոդիմոս․

զի՞արդ կարէ մարդ ծնանիլ՝ որ ծնե՛լն իցէ։ միթէ մա՞րթ ինչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել եւ ծնանիլ։ Պատասխանի ետ յս՝ եւ ասէ. ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ՚ի ջրոյ եւ ՚ի հոգւոյ, ո՛չ կարէ մտանել յարքայութիւն այ։ զի ծնեալն ՚ի մարմնոյ՝ մարմին է, եւ ծնեալն ՚ի հոգւոյ՝ հոգի է։ Մի՛ զարմանար, թէ ասացի քեզ, պա՛րտ է ձեզ ծնանիլ վերստին. զի հողմն ուր կամի՝ շնչէ. եւ զձայն նր լսես, այլ ո՛չ գիտես ուստի՞ գայ, կամ յո՞ երթայ։ Նոյնպէս եւ ամ ծնեալն ՚ի հոգւոյն։

Նաեւս խաղաղութե զտր աղա"։

Վն ՚ի վերուստ խաղաղութե եւ փրկութե անձանց մերոց զտր ա"։

Յար տր եւ աղաչեա՛։

Վն սրբելոյ զջուրս զայս ներգործութբ հոգւոյն այ, զտր աղա"։

Վն որդիս լուսոյ առնելոյ զոր ՚ի սմա մկրտեն, զտր աղա"։

Վն ածային զօրութի զգեցուցանելոյ

նելոյ սորա՝ ընդդէմ հակառակամար-
տին օծմամբ իւղոյս այսմիկ, զՏէր":

Վասն անօթ սրբութեան լինելոյ սորա առ ըն-
դունելութեան Աստուածատուր խորհրդոցն, զՏ":

Վասն գտանելոյ սորա յարժանաւոր հրա-
ւէր վերստին կոչման յոր կոչեցաւն,
զՏէր աղաչեսցուք:

Վասն ամուր և հաստատուն շնորհել
սորա զխոստովանութիւն առաքելական հա-
ւատոյ, զՏէր աղաչեսցուք":

Վասն ժառանգորդս առնելոյ զսա
արդարոցն խոստմանց, զՏէր":

Վասն փրկելոյ զսա և զմեզ յամենայն նե-
ղութենէ, 'ի բարկութենէ, 'ի վշտաց՝ և 'ի
վտանգից, զՏէր աղաչեսցուք":

Ընկալ կեցո և ողորմեա: Օ ամենա
սրբուհի Աստուածածինն", ողոր":

Եւ քահանայն ասէ Ժ Տէր ողորմեա. և ապա
Աղօթս:

Դու Տէր՝ զօրութեամբ քով մեծաւ արա-
րեր զծով և զցամաք, և զամենայն որ 'ի
նմա արարածք իցեն. որոշեցեր և կա-
ցու-

ցուցեր զՋուրն 'ի վերայ քան զեր-
կինս՝ 'ի բնակութիւն երկնաւոր զուարթ-
նոցն, որ կան յանդադար փառաբա-
նութեան քում։ Առաքեցեր եւ զմեր
զառաքեալսն քո, տալով նոցա հրաման
քարոզել եւ մկրտել զամենայն հեթանոսս՝
յանուն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն
սրբոյ։ Այլ եւ սահմանեցեր անսուտ
բանիւ քով՝ ոչ ծնելոցն 'ի ջրոյ եւ 'ի
հոգւոյ ոչ մտանել յարքայութիւն Աստուծոյ։
Յորմէ բանէ զարհուրեալ ծառայս
քո, եւ փափագելով մշտնջենաւոր
կենացդ, եկն կամաւ 'ի մկրտութիւն
հոգեւոր ջրոյս այսորիկ։ Արդ՝ աղա-
չեմք զքեզ տէր, առաքեա զհոգիդ քո
սուրբ 'ի ջուրս յայս, եւ սրբեա զսա, որպէս
սրբեցեր զյորդանան իջանելով քո
'ի նմա՝ ամենասուրբդ 'ի մեղաց տէր մեր
յիսուս քրիստոս, յօրինակ այսմ աւազանի
մկրտութեան՝ վերստին ծննդեան
ամենայն մարդկան։ Եւ շնորհեա սմա
զջուրս զայս յորում մկրտի այժմ, 'ի
թողութիւն մեղաց՝ եւ յընդունելութիւն
հոգ-



(Կարգ Մկրտութեան)

Հոգւոյդ ս͞բոյ, յորդեգրութի͞ն Հօրդ երկնաւորի՝ և ՚ի ժառանգութի͞ն արքայութե͞դ երկնից։ Ո͞պ զի սրբեալ ՚ի մեղաց, ՚ի հաճոյս կամաց քոց կեցցէ յայսմ ա͞շխս. և ՚ի հանդերձելումն զանսպառ բարիսն ընկալցի ը͞ն ա͞մ ս͞րբս քո. և ուրախութ͞բ գոհասցի և միշտ փառաւորեսցէ զքեզ ընդ Հօր՝ և

Ս͞բ Հոգւոյդ. այժմ և միշտ և":

Եւ ապա քահանայքն տանին ՚ի մկրտարանն եկեղեցւոյն. և բերեն զեկեղեցւոյն մերձ առ ընթեր քահանայքն. և առեալ քահանային զն͞ր մանուկն ՚ի յետս. և խաչակնքէ ՚ի վ͞ր ջրոյն ասելով:

Ալէլուիա" ասէ: Օրհնեսցի և սրբեսցի ջուրս այս, նշանաւ":

Հեղու զս͞բ միւռոնն յաւազանն խաչանման ասելով:

Առաքելոյ աղաւնւոյ իջանելով":

Նիւթական աղաւնի՝ . անքըն":

Օրհնութի͞ ՚ի բարձունս՝ երգին":

Եւ քահանայքն կանգնին մերձ յաւազանն. և քահանայն ասէ զաղօթսն:

Որ կոչեցեր զծառայս քո Տ͞ր ՚ի սըր բութի͞ և ՚ի լուսաւորութի͞ մկրտու-

թն, աղաչեմք զքեզ տէր՝ արա զսա
րժանի մեծի շնորհաց քոց. Սեր_
կեամ 'ի սմանէ զձեռն մեղաց, և նո_
րոգեամ 'ի կեանս նորա. և լցո զօրութէ
հոգւոյդ սբյ 'ի նորոգումն փառաց
քն քոյ. Զի քեզ հզօրիդ՝ և միածնի
որդւոյ քո՝ և ազատիչ սբ հոգւոյդ
վայելէ փառք՝ իշխա":

Հարցանէ քահանայն. Երեխայս զինչ
խնդրէ: Կնքահայրն ասէ. Հաւատք,
Յոյս, Սէր, և Սրբութիւն:
Սրբիլ և արդարանալ. սրբել 'ի մե_
ղաց, ազատիլ 'ի դիւաց, և ծառայել այ.
Երիցս կրկնէ, Եւ ասէ քհնայն. Տր հա_
ւատոց քոց եղիցի քեզ: Ապա իջուցանէ
զերեխայն 'ի ջուրն, և դնէ զանուանն ասելով.
Այս անուն ծառայս այ, եկեալ յերե_
խայութէ 'ի մկրտութի, մկրտի յանուն
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ:
Գնեալ արեամբն քն 'ի ծառայութէ
մեղաց, ընդունի զորդեգրութիւն
հօրն երկնաւորի, լինիլ ժառանգա_
կից քն, և տաճար հոգւոյն սբյ:

 Օ այս

Ո՛ւյս միանգամ առեալ՝ երիցս թաղէ զերե_
խաչն 'ի ջուրն, յօրինակ երեքօրեայ թաղմանն
ջն ։ Ասէ արդ՝ ցանելին, Յանուն Հօր ,
ընկղմե միանգամ . ցանելին , և Որդւոյ ,
ընկղմե միանգամ ևս . և ցանելին , Հոգւոյն
Սրբոյ, ընկղմե դարձեալ։ Եւ այսպէս յիշումն
անուանն ամենասուրբ երրորդութեան լինի միանգամ,
և ընկղմումն երեք անգամ ։ Եւ հանեալ 'ի
ջրոյն՝ ասէ ։

Որք 'ի Քրիստոս մկրտեցայք , զՔրիստոս զգե_
ցեալ էք . ալէլուիա ։ Որք 'ի Հայր
լուսաւորեցայք, Հոգին բերկրես_
ցի 'ի ձեզ . ալէլուիա ։

Բազում նեղութիւնք են արդարոց" ։

Փառք Հօր և Որդւոյ և" ։

Ապա ասէ շարական . գձ ։

Որ համագոյն ես Հօր և Որդւոյ՝
անճառաբար բղխումն իմիշտ էին .
այսօր բղխեցեր ջուր կենդանի
յերուսաղէմ . հոգւոյ ... ոլ ... րմեա ։
Որ արարչակից ես Հօր և Որդւոյ .
որով կենդանածնեալք ի ջրոյ ... բա_

ըմբռնածք․ ա՜ յաճր որդիս ո՟յ ծնանիս
ե՛ջուրց․ հո՜․ Ո՛ր փառակից ես հօր
և որդւոյ․ և քննես ըզխոր՛րս աստու-
ծոյ․ ա՜ յաճր խորագէտս իմաստից
զմիմ՛րս աշխարհի արա՞րէր․ հոգի։

Պօղոսի առաքելոյն 'ի Հռովմայեցւոց" Ե․Զ"։

Եթէ ոչ գիտէք, զի որ միանգամ մկրտեցաք 'ի քս՟ յս՟, 'ի մա՛հ անդր նր՟ մկրտեցաք։ Թաղեցաք ընդ նմին մկրտութե՟ն 'ի մահ։ զի ոպ՟ յարեաւ քս՟ 'ի մեռելոց փառօքն հօր․ նոյնպ՟ և մեք 'ի նորոգութիւն կենաց շրջեսցուք։ Զի եթէ տնկակից եղեաք նմանութե՟ մահուն նր՟․ այլ և յարութե՟' նր՟ լինիցիմք։ Զայս գիտասջիք զի հին մարդն մեր խաչակից եղև նր՟, զի խափանեսցի մարմին մեղացն, մի' ևս ծառայել մեզ մեղացն։ զի որ մեռանին' արդարացեալ է 'ի մեղաց անտի։ Իսկ եթէ մեռաք ընդ քի՟, հաւատամք թէ և կեցցուք ընդ նմա։ Գիտեմք եթէ քս՟ յարուցեալ է 'ի մե-

մեռելոց. այսուհետեւ ոչ մեռանի, եւ մահ նմա ոչ եւս տիրէ։ զի որ մեռաւն, մեղաց մեռաւ մի անգամ, եւ որ կենդանին է՝ կենդանի է այ։ Նոյնպէս եւ դուք համարեսջիք զանձինս մեռեալս մեղացն, եւ կենդանիս այ ՚ի

քս յս ՚ի տր մեր։

## Աւետարան Մտթէ։

[illegible]

Յայնժամ գայ յս ՚ի գալիլեէ ՚ի յորդանան առ յովհաննէս՝ մկրտիլ ՚ի նմանէ։ Իսկ յովհաննէս արգելու զնա՝ եւ ասէ, ինձ պիտոյ է ՚ի քէն մկրտիլ, եւ դու առ իս գաս։ Պատասխանի ետ յս՝ եւ ասէ ցնա, թո՛յլ տուր այժմ, զի այսպէս վայելէ մեզ լնուլ զամ արդարութիւն. եւ ապա թոյլ ետ նմա։ Իսկ իբրեւ մկրտեցաւ յս, ել վաղվաղակի ՚ի ջրոյ անտի. եւ ահա բացան նմա երկինք. եւ ետես զհոգին այ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի եւ գայր ՚ի վր նր։ Իսկ ահա ձայն յերկնից՝

նից՝ որ ասէ, դա՛ է որդի իմ սիրելի·
ընդ որ հաճեցայ·

Ճաշու Մէջ որ չէր"·

Նա· չնհէ · Հ տրաջան ·

Աղբիւր կենաց բաշխող շնորհաց հոգեւոր իջեալ ի բարձանց · զանապա‿կան պարգեւս քո բաժանեցեր յա‿ռաքելոցն · Որ ի վերայ ջուրցն գոլով ստեղծօղ նէիր զարարածս · իջեալ ի ջուրս աւազանին ծնանիս որդիս ա̃յ · Որ զարդարեալ նորո‿գես միշտ ըզնոր քո զեկեղեցի · պէս պէս շնորհաց քոց պարգեւօք փայ‿լեն մանկունք սորա ·

Աղօթ. ·

Որ լուսաւորեցեր զարարածս քո ք̃ս ա̃ծ, ծագելով զլոյս ա̃ծգիտութ‿եան յանձինս մեր· և այժմ ազատեցեր ըզ‿ծառայս քո զայս, սրբեցեր և արդա‿րացուցեր, և ետուր սմա զորդեգ‿րու‿



( Կարէ Մ՝նէրաբէան )

րութե՛ պատիւն ։ Շնորհեա՛ սմա
տր՝ և զկենացն հաւատարութի, և
պարգևեա՛ զհանապազօրդն անապա-
կանութի, խառնելով զսա ընդ արդա-
րըս քո՝ և՚ի թիւս սբց քոց․ և ընդ
նոսին փառաւորել զքեզ ընդ հօր՝
և ընդ սբյ հոգ"․

Խաչաշուքին աղնեյուն ։

Տէր որ մեծդ ես և մշտնջենաւոր՝
և տմ դաղտնեաց գիտակ․ որ սբ
ես և՚ի սբս հանգուցեալ, փրկիչ տմ
մարդկան ։ Որ շնորհեցեր զխոուն
ճշմարտութե քո՝ տմ հաւատացելոց․
և ետուր իշխանութի լինել որդիս այ՝
՚ի ձեռն վերստին ծննդեան ջրոյ և
հոգւոյ ։ Որ և զծառայս քո զայս-
անուն՝ նորոգեցեր քաւութե սբ աւա-
զանի քո ։ Դու արա զսա տր՝ ճշմար-
տութե քով, և լուսով շնորհաց սբ
հոգւոյդ․ զի եղիցի տաճար և բնա-
կարան տծութեդ քո․ և կարասցէ
գնալ յամ ճանապարհս արդարութե․

և կալ համարձակութ առաջի ահա-
ւոր բեմի միածնի քո՝ տն մերոյ յի-
քի։ Ընդ որում քեզ հօր ամենակա-
լի, և կենդանարար և ազատիչ սբ-
հոգւոյդ՝ վայելէ։

Լնու ժողովոյն զատուցեք երգն ՚ի ժամն երգ
և ասէ Շարական․ ԳԺ․

Որ յառաջագոյն յօրէնս․ յօրինակ
միածնի քո հայր երկնաւոր եսուր
զօրութի ՚ի յեւղ սրբութե օծումն
օծելոց․ հեղ ընդ իւղոյս այս
զերկնային քո զշնորհս։ Որ խոնար
հեցար ՚ի մեզ իւղ թափեալ անուն
օծեալդ աստուծոյ․ խառնելով
զածութիդ օծեալ ընդ մարդկայինս
առեր բընութին․ հե․ Որ ՚ի
վերնատանն սբ՝ իջանելով յառա-
քեալսն օծումն օծելոց․ և օծման
բըս այսու՝ վերաստեղծեր նորքք ընդ
հողեղէնքս որդիս աստուծոյ․ հե։

Ո՛ր զարդարեալ սովաւ 'ի հանդերձս
լուսափայլս և գերապայծառ ճռուս ընդ
հարսանացեալ եկեղեցի քո ամ՝՝ուրբ.
մանկունք սորա՝ ընդ հրեշտակս
օրհնեն նմբ զերրորդութիւնդ ։

Ապա կնքէ սուրբ իւղովն զճակատն, ասելով՝

Իւղ անոյշ յանուն յի քի, հեղեալ
'ի վե՛ քո՝ կնիք երկնաւոր պար-
գևացն անապականութե ։

զԱչսն ✱ Կնիքս յանուն յի քի,
լուսաւորեսցէ զաչս քո. զի մի՛ եր-
բէք ննջեսցես 'ի մահ ։

զԱկանջսն ✱ Օծումն սրբութե
եղիցի քեզ 'ի լսելութիւն ածային
պատուիրանացն ։

զՌնգունսն ✱ Կնիքս յանուն յի
քի, եղիցի քեզ հոտ անուշութե
կենաց 'ի կեանս ։

զԲերանն ✱ Կնիքս յանուն յի քի
եղիցի քեզ պահպանութի բերանոյ
և դուռն ամուր շրթանց քոց ։

զՁեռսն ✱ Կնիքս յանուն յի քի



եղիցի

եղիցի քեզ պատճառ բարեգործութե֊
ամ առաքինի գործոց և վարուց ։

զՍէրն ❋ Կնիքս ածային , սիրտ
մր հաստատեսցէ ՚ի քեզ՝ և հոգի
ուղիղ նորոգեսցէ ՚ի փորի քում ։

զՃաշակն ❋ Կնիքս յանուն յի քի
եղիցի քեզ վահան ամրութե ․ որով
կարասցես զամ նետս մուխս չարին
շիջուցանել ։

զՈտսն ❋ Կնիքս ածային ուղղես֊
ցէ զգնացս քո ՚ի կեանսն յաւիտե֊
նից ․ զի մի սասանեսցիս ․

Նոյն ապա ասէ , Խաղաղութի ընդ քեզ
փրկեալդ այ ․ Խաղաղութի ընդ քեզ
օծեալդ այ ։

Նոյն քահանայքն ասէ , Եւ ընդ հոգւոյդ
քում ։

Նոյն ապա շփեցուցանէ զանդերձ ալբեաց և
նորա, և հագէ շնորհօքն, և ապա զերկու փակեալ
մոմեղէնս ՚ի ձեռն ․ և քահանայքն ասէ զԿնքն ․ գ․ ձ ։

Աստուած խօսեցաւ ի բարձանց ․
լուարուք բոլոր նմանկինչք երկրի ․ որ ելին


և

և փրկեաց զամենայն արարածս՝ . զի
զանուն տն կարդասցուք և տուք
օրհնութի ի բարձունս։ Որ ինքն կո-
չեցաք ի քս . եղեաք բաժին տն և
ժառանգակից քի . զի զա։ Ի վիմէն
կենդանութե ճաշակեցաք զի քաղցր
է տր . և յիւղ օրհնութե օծաք հաւա-
տով . զի։ Ի քեզ եմք ապաւինեալ որ
մայրդ ես և աղախին քի . լեր բարե-
խօս վասն մեր՝ . զի զանուն տրն
կարդասցուք և զքեզ մե ծարեալ
պատուեսցուք ։

Այս այլ շարօն ։

Օրհնեալ ես բարեխնամօղ տծ , որ
զգեցուցեր ծառայի քում հանդերձ
փրկութե և պատմուճան ուրախութե .
և եդեր սաղաւարտ փրկութե և պսակ
շնորհաց ՚ի գլուխ մր , և զէն անվթար
ընդդէմ հակառակամարտին ։ Ա՛ռ
որոյ և մեք գոհութի փառաւորես-



ցուք

( Ասէ Մխիթարեան )

ցուք զքեզ ընդ որդւոյ և ընդ սբյ
Հոգւոյդ":

## Խաղաղութիւն ամենեցուն.

Խաղաղութիւն և հաստիչ խաղաղութեան յս քս, օծեալ և երկրպագելի և քա-հանայապետ յաւիտենից. Ահա ընկալաւ այս անձն ծառայս քո՝ զօծումն սրբութեան քո. վս որոյ աղաչեմք զքեզ տր, մի՛ ջնջեսցի սա ՚ի դպրութենէ քումմէ կենաց. Եւ մեզ արժանի լիցուք երկնային փառաց քոց, յոր-ժամ պսակես զսբս քո և զսիրելիս անուան քում սբյ. և անդադար փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և սբյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յա-ւիտեանս յաւիտե".

## Ասէ ՚ի բեմին շնորհածայն՝ և ասէ.

Մտից առաջի սեղանոյ ած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ. Դատ արա ինձ ած, և խնամ արա ինձ ՚ի դատաստանի իմում.

Սա՝ ծնրի խոնարհեալ՝ ասէ երիցս։

Այս անուն ծառայս քո՝ եկեալ յեր[illegible]
խոյանէ ՝ի մկրտուե, ՝ի մկրտութե
յերկրպագութի։ Երկրպագէ ս̄բ
սեղանոյս. երկրպագէ ս̄բ խորանիս.
երկրպագէ ս̄բ աւազանիս. որ մեր-
կացաւ զանօրէնութի, և զգեցաւ
զլոյս ա̄ծ գիտութե.

Սա հաղորդէ զնորընծայն ՝ի ս̄բ խորհրդոյ և
օրհնէ զնա. և ասէ քահանայն զաղօթս։

Տէր ողորմեա՛, Տէ̄ր ողորմեա՛, Տէ̄ր ողորմեա՛։

Փառք քեզ Թագաւոր յաւիտենա-
կան. որ արժանացուցանես և լցուցա-
նես զեկեղեցի քո լուսով հաւատոյ
անհամար փրկելոցս ՝ի ձեռն ճշմա-
րիտ ա̄ծածանօթութեան ք̄ի քո։
Զորս վերստին ծննդեամբ արժանի
արարեր որդեգրութե հօրդ երկնա-
ւորի. հաղորդելով մարմնոյ և արե̄ն
միածնի քո։ Նաև արդ տ̄ր՝ պահեա՛
զսա սրբութ̄ե հոգւոյդ ս̄բյ, աճել
անարատութ̄ե զկամս քո, և անմեղու-
թ̄ե



(Կարգ Մկրտութեան)

թէ ժամանել ՚ի կեանսդ յաւիտե-
նից։ Նաև զմեզ զամենեսեան զմերձա-
ւորքս մր օրհնեա՛ շնորհօք և մար-
դասիրութե տն մերոյ յի քի։ Ընդ
որում քեզ հօր, և հոգւոյդ սրբոյ
վայելէ փառք՝ իշխա՛։

Եւ տայ զնորընծայն ՚ի գիրկս կնքահօրն. և
քահանայն խաչն ՚ի ձեռս կալեալ, և [illegible]-
[illegible], որ [illegible] զտր։
Եւ քահանայն ասէ զաղօթս.

Որք մկրտեցան և լուսաւորեցան և
ետուր նց զզօրութի քո տր, տո՛ւր և
հաստատութի, կալ միշտ ՚ի սրբութե
քում, և պայծառանալ ՚ի լոյս ած-
գիտութե քո։ Պահեա՛ զսա հաստա
տուն ՚ի շնորհս քո զոր ետուր. հեռա-
ցո՛ զսա ՚ի մոլորութէ թշնամւոյն, և ՚ի
պատրանաց նր, և ՚ի գործոց անօրէ-
նութե. զի լուսով գիտութե քո
գնասցէ ՚ի պատուիրանս քո. և ու-
ղիղ վարուք հասցէ ՚ի խոստացեալ
հանգիստն քո յաւիտենից։ զհրեշ-
տակ խաղաղութե քո առաքեա՛ տր,


որ

որ եկեալ պահեսցէ զսա։ Եւ մեք ամենեքեան արժանի լիցուք սպասել յուսով յայտնութեան տն մերոյ յի քի։ Ընդ որում քեզ Հօր՝ և Հոգւոյդ"։

Համբուրեն զնոր Դրօշակն՝ և ասեն.

Ո՛ր անտե՛ս և անքը՛ննելին քառակերպիցըն վեհագոյն՝. ՚ի փրկել ըզմեզ եկեա՛լ անմահի՛ց Թագաւո՛րն. Օ՛րհ_
նութի առաքողի՛ն.

Նուաքի հրեշտակապետն առ սե"։
Մըկըրտի ՚ի յորդանան վըկայե"։
Փառք Հօր և Որդւոյ և"։

Եւ յերևանել նոր ՚ի ջրոյն ահա՛ բա_ ցան նըմա երկինք. Եւ Հոգին ա՛ղաւ_ նակերպ գայր ՚ի վը կենա՛րարի՛ն,
օրհնութի առա"։

Եւ ապա ասէ ձայնս.

Սբ խաչի՛ւս աղաչեսցուք զտր"։
Պահպանիչ և յոյս"։ Հայր մեր"։

Եւ երգեան ՚ի նոյն ասելով,

Լոյս ՚ի լուսոյ ՚ի Հօրէ"։ 40

Իսկ յետ խ̅ աւուր՝ գան ՚ի դուռն եկեղեցւոյն. և մայրն իւր ծունր կրկնէ, և առնու զտղայն ՚ի գիրկն. Եւ քահանայն ասէ զաղօթս զայս.

ՏԷՐ ՄԵՐ, ՈՐ եկիր ՚ի փրկութիւն ազգի մարդկան, նայեա՛ ՚ի վերայ աղախնոյս քո այսորիկ. և տո՛ւր սմա ապաւինել ՚ի սբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի քո. և արժանացո՛ զսա մտանել ՚ի տաճար սբ քո, և հաղորդել փրկական մարմնոյ և արեան քո: Ի բաց լուա՛ զաղտ մարմնոյ և զբիծ հոգւոյ սորա ՚ի լրումն կատարման քառասնօրեայ աւուրցս. և սրբեա՛ զսա ՚ի ձեռն պատուիրն ուխտի քահանայիցս. և արժանացո՛ մտանել ՚ի սրբութի տաճար քոյ, և վայելել զանսպառ բարիսն որ ՚ի քեզն. և քեզ վայելէ:

Աղաղակ ընդ ամենեցուն ։

Որ նորոգութիւնդ ես ծնացելոց, և կեանք՝ մանկանացու ազգի մարդկան. դու ես զօրութիւն և օգնութիւն ապաւինելոցս ՚ի քեզ։ Հաստատուն լիցի շնորհք ողորմութեան քո ՚ի վերայ տղայիս, որ եկեալ կայ քառասնօրեայ յերկրպագութիւն մեծ տաճարիդ. զի եղիցի հզօր և աներկիւղ ՚ի թշնամւոյն ներգործութեան՝ պահպանութեամբ աջոյդ քո մեծի. զի դու ես մերձ յամենեսին՝ և բարերար ամենեցուն։ Պահեա զսա և սրբեա ճշմարտութեամբ քով. և արժանացո ընդունիլ զմարմին և զարիւն քո սուրբ, և զանհաւատչեայ հոգւոյդ մեծի։ Աղաչեմք զքեզ տէր, զի եկեսցէ ՚ի սա հոգի մեծ, հոգի հեզութեան, հոգի ճշմարտութեան, հոգի որդեգրութեան. լինել անբիծ և անարատ. պատկեր խաչին քո ընդ աջմէ քումմէ յարքայութեանդ երկնից։ Եւ քեզ ընդ հօր և մեծ հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ"։

Ձա՛ յօրհնեն ջերջերեցին ասելով·

Մ՛տից առաջի սեղանոյ Այ առ Այծ որ ուրախ առնէ զ″։ Գփոխ ընդ ասա։

Ամե եկեղեցեաւս աղաչեմ″։

Ի մէջ տաճարիս և առաջի Այծ ըմ″·

Ձա՛ փոխի տեղ ՚ի խորանն ասելով·

Մ՚արմնացեալդ ՚ի կուսէն նախամա-
րտեան բանդ`· այսօր ՚ի տաճարին
եկիր կատարել զօրէնս վն փրկու-
թեան հեթանոսաց։ Որ յանար-
ուեստ աթոռ նստիս՝ բարեբա-
նեալդ ՚ի հրեշտակաց`· այսօր ՚ի սի-
մէօնէ բառնալով ՚ի գիրկս· որ ըն-
ծայեսցես ըզ մեզ ՚ի կենդանութ յաւի-
տենից։ Որ արձակիչդ ես կապելոց
պարգևատու ամենեցուն· այսօր հայց
մնմք ծերունոյն արձակեալ և զես
ըզ բազմամեղս ՚ի կապանաց մահու
՚ի կենդանութ յաւի″·



Բ.հէ

## Ղուկասու Օրհն.

### Մեծ [illegible]

Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նոցա ըստ օրինացն Մովսիսի, ածին զնա յԵրուսաղէմ յանդիման առնել Տեառն. որպէս եւ գրեալ է յօրէնս Տեառն, թէ ամենայն արու որ բանայ զարգանդ՝ սուրբ Տեառն կոչեսցի. Եւ տալ պատարագս՝ ըստ ասացելոյն յօրէնս Տեառն, զոյգս տատրակաց, կամ երկուս ձագս աղաւնեաց։ Եւ ահա՝ էր այր մի յԵրուսաղէմ, որոյ անուն էր Սիմէոն. եւ էր այրն այն արդար եւ երկիւղած, եւ ակն ունէր մխիթարութեանն Իսրայէլի, եւ Հոգի սուրբ էր ի նմա։ Եւ էր նորա հրաման առեալ ի Հոգւոյն սրբոյ՝ մի՛ տեսանել զմահ, մինչեւ տեսցէ զօծեալն Տեառն։ Եւ եկն Հոգւովն ի տաճարն։ Եւ իբրեւ ածին ծնողքն զմանուկն Յիսուս, առնել նորա ըստ սովորութեան օրինացն ի վերայ նորա. եւ նա՝ առ ընկալաւ զնա ի գիրկս իւր, եւ օրհնեաց զԱստուած, եւ ասէ. Արդ՝ արձակես զծառայս քո Տէր ըստ բանի քում ի խաղա-



ղու-

ղութի · զի տեսին աչք իմ զփրկութի
քո · զոր պատրաստեցեր առաջի ամ
ժողովրդոց ։ Լոյս 'ի յայտնութի հե_
թանոսաց , և փառս ժողովրդեան
քում իէլի ։ Եւ էին հայրն և մայր
նր զարմացեալ 'ի վերայ բանիցն , որ
խօսէին զնմանէ ։ Եւ օրհնեաց զնս
սիմէոն , և ասէ ցմարիամ մայրն նր ·
ահա սա կայ 'ի գլորումն և 'ի կանգ_
նումն բազմաց 'ի մէջ իէլի , և 'ի նշան
հակառակութե ։ և ընդ քո իսկ անձն
անցցէ սուր · զի յայտնեսցին 'ի բա_
զում սրտից խորհուրդք ։

Նոյն ասէ զաղօթս առաջի խորանին ·

Տր մեր յս քս , որ կեցեր զաւուրս
քառասուն՝ ըստ օրինացն մովսէսի ,
եկիր 'ի տաճարն 'ի յընծայումն՝ հան_
դերձ մարիամաւ մարբն քով , և 'ի
գիրկսն սիմէօնի դրդունեցար ։ Աղա_
չեմք և խնդրեմք 'ի քէն , պահեա
զտղայս զայս , և աճեցո շնորհօք՝ ան_
տեսանելի զօրութե քով · և արժանի՛
արա զսա մասին ժառանգութե ընտ_
րե_

րելոց քոց. և պահպանել զմեզ հովանեաւ աջոյ քո։ Եւ քեզ ընդ Հօր և Սբ"։

Եւ ասէ Ճ արաջան. փձ.

Աստուածայի՛ն երկնայի՛ն դասուն ածայի՛ն ձայնի՛ն աւետարանէր հրեշտակն. ուրախ լեր բերկրեալդ Տր ընդ քեզ։ Զքերոբէս բազմեալ ընդ Հօր՝ անապականաբար բնա՛կե՛լ հանգեցաւ ի՛ քում որովայնի՝. ու"։

Որ բո՛ցեղէն սրոբէիւք շուրջափա- կեալ պահիւր, այսօր ի մէջ մարդ- կան ՚ի գիրկս հողեղինի յայտնեալ. ուրախ լեր բերկրեալդ".

Եւ ապա քահանայն տանի զտղայն ՚ի խորանն՝ և ասէ.

Այս անուն ծառայս քի, եկեալ յեր- կրպագութի. երկրպագէ սբ խորա- նիս. երկրպագէ սբ սե".

Սբ խաչիւս աղաչեմ".

Պահպանիչ և"։ Հայր մեր որ"։



Սա

(Արքէ Բաստառոնօբէէն)

## Կանոն Կուսի Պատկին։

Նախ զան ըսէ բերելն ըհաղան ասաղէ զա_ հանայէն. և զահանայն խունկ արկանէ և ասէ Շարական. Ճկ։

Ա՛ՅՍՕՐ ԵՐԿՆԱՅինքն ուրախացան ընդ երկ_ րաւորացս նոր"։

Ա՜յսօր հողանիւթեայ բնութիւն"։

Ա՜յսօր մանկունք եկեղեցւոյ"։

Ո՛ր զմիաբանեալս յաշտարա"։

Ո՛ր էջ հոգին ո՛ն և առաջնոր"։

Ո՛ր ելից հոգին ո՛ն ըղ բեսէլի"։

Մ՛այր լո՛ւսոյ մարիամ անհարս"։

Օ՛ լոյսն ա՛նըստուեր յարգան"։

Մ՛ի դադարիր վասն մեր բար"։

Ի՛ վերայ վիմի հաւատոյ շինեցե"։



Ո՛ր

Ո՛ր շնորհեցե՛ր ողորմութի՛ն 'ի"։
Ի՛ տաճարի՛ փառաց սրբութե՛ն"։
Փա՛ռք հօր և որդւո՛յ և"։
Սիրո՛յ անմահ փեսայի՛ն եղե՛ր դու-
մայր Մարիամ. լե՛ր բարեխօս անդա-
դար վասը՛ն մերո՛յ փրկութեա՛ն։

Նոյն ասէ շարօնս։

Օրհնեա՛լ քո՛ անձ մեր՝ հոգևոր օրհ-
նութի՛ք զհայլաւս զայս հարսանեաց.
զի որք զգեցցի՛ն զա՛յ, մի՛ իշխեսցէ
մերձենալ 'ի նա՛ չար ապանդ դիւաց
կամ կախարդաց։ Նաև ամրացեալ
զօրութի՛ք սբ. խաչի քո, փրկեսցի՛ն
յա՛մ օրոգայթից սատանայի։ և քեզ
վայելէ փառք"։

Սբ. խաչի՛ն ասաչես"։
Պահպանիչ և յոյս"։ Հայր մեր որ"։

Նոյն ասէ երբեան 'ի տուն հարսին, և բերէն
ըհարսն տա քէսայն. և տանեն ժահանայն
շոչ յետն հարսին, և տայ յաջ յետն քե-
ասյին և ասէ։

Առեալ զձեռն եւային՝ տուեալ 'ի յաջն ադամայ, և ասէ ադամ. այս այժմ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին 'ի մարմնոյ իմոյ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ.

Վ̃նկ Թողցէ՝ այր զհայր իւր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ. և եղիցին երկոքեան 'ի մարմին մի. Արդ՝ զոր ա̃ծ զուգ".

Նա․ տուր շարական. Գ̃կ.

Նայեա՛ 'ի մեզ և ողորմեա՛ մեզ".
Որ հայրդ ես որբոց և դատաւոր".
Որ պսակիչդ ես որբոց. լո՛ւր".
Մայր և կոյս". Մաքուր աղաւ".
Բև հաձե". Յաղթօղ և զնոր".
Որ է կն 'ի լոյ". Փառք հօր և".
Այսօր և մեք տօնեսցուք զնա".

Նա․ տուր շարակն.

Տէր ա̃ծ յաւիտենական, որ զան-զոյգս և զբացորոշեալս զուգակցես



( Կատէ Պաւնձէ )

միաւորութե՟, և կայցես անքակ֊
տելի ։ Որո՟վ օրհնեցեր զԻսահակ և
զՌեբեկ, և ժառանգ զնո՟ քո՟ աւե֊
տեացն երևեցուցեր ։ Դու տէր
օրհնեա՛ զծառայս և զաղախինս քո,
առաջնորդելով նց՟ 'ի գործս բարիս.
ողորմած և մարդասէր ա՟ծ մեր ։

Եւ քեզ վայելէ"։

Սե՟ խաչիւ"։ Պահ"։ Հայր մեր"։

---

Եւ ապա երթան 'ի տուն եկեղեցւոյն. և
հարսն և փեսայն երեք ծունր կրկնեն. և քա֊
հանայն խոստովանեցնէ' զնո՟. և ապա ոլորէ
զնարօտն ։ Երգէ զփեսայինն ողորմէ' ասէ ։

Տէ՟ 'ի զօրութե՟ քում, ուրախ եղ"։

Եւ երգէ զհարսինն ողորմէ' ասէ ։

Տարցին թագաւորի կուսանք զ"։

Եւ ապա տայ զչեան 'ի չեան' և ասէ որ՟
'ի տանն ասայ ։ Եւ ապա ասէ զերգս ։

Տեսէք որդեակք, ա՟ծային հրաման֊
նաւն' և կանոնիւք ս՟բ հայրապե֊
տացն եկեալ էք 'ի ս՟բ եկեղեցիս պը֊
սակել օրինօք 'ի ս՟բ ամուսնութի ։

ա՟ծ

Ած զձեզ միաբան սիրով պահեսցէ, 'ի խոր ծերութի հասուսցէ, և անթառամ պսակին արժանացուսցէ։ Այս տեսէք, որ յաշխարհիս վերայ պէսպէս փորձութիք կան. թէ հիւանդութի, եթէ աղքատութի, և թէ այլ ինչ նեղութի. Ած զձեզ յամ փորձութէ հեռի պահեսցէ։ Բայց Այ հրամանն այս է, որ դուք երկոքեանդ մինչև 'ի մահ միմեանց օգնութիւն պիտի անէք.

Ապա հարցանէ փեսայէն և ասէ.

Որդեակ իմ, մինչև 'ի մահ Տր ես։ Նա ասէ, Այո հայր սբ, տր եմ հրամանաւն Այ։

Ապա հարցանէ հարսէն և ասէ.

Որդեակ իմ, և դու մինչև 'ի մահ հնազանդ ես։ Նա ասէ նոյնպէս։ Ապա ասէ Քահանայն. Այս բանիս վկայ Քս է՝ որ աներևութապէս 'ի վերայ սբ սեղանոյս բազմեալ է. Այլ և մեր պահապան հրեշտակքն,



այս

([illegible])

ոյս տր եկեղեցիս , տր խաչս և տր
աւետարանս . դասք քահանայից , և
երամք ժողովրդոց . սոքա ամքն վկայ
լինին մի ։ Եւ նոքա ասեն ։
Լ.յր հայր տր , վկայ թող լինին .
Եւ ասէ քահանայն ։ Ած ՚ի մէջ սոցա , և
սոքա մի՛ սասանեսցին . օգ"։
Մանէն չէնէղէցէն , և ասէն ժամամուտ ։
Օ խաղաղութիւն շնորհեա եկե"։
Ճառ" փծ ։ Ողորմխ լեր տր եկե"։
Խնդամ յոյժ"։ Ընդ դամս երկ"։
Փառք հօր և"։ Ողորմխ լեր բերկ"։
Պաշտօնեայք ։ Այժ ած՝ տր և հզօր ,
տր և անմահ , որ մարմնացար"։
Եւ նա խօսա"։ Վ ասն խաղա"։
Ա.չէ" ուրէ"։ Տր ՚ի զօ"։ Հ{}ան"։
Ընթերցուած ՚ի ծննդոց ։
Եւ ասաց ած . արասցուք մարդ ըստ
պատկերի մերում և ըստ նմանութե ,
և իշխեսցեն ձկանց ծովու , և թռչ
նոց երկնից , և ամ անասնոց , և ամ
սողնոց որք սողին ՚ի վերայ երկրի .


Եւ

(Կոսու Պոռչնէ)

Եւ արար ած զմարդն ՚ի պատկեր իւր. ըստ պատկերի այ արար զնա.

### Գուարջեալ ՚ի ծննդոց:

Եւ եարկ տր ած թմրութիւն ՚ի վր ադամայ, եւ ննջեաց. եւ եառ մի ՚ի կողից նր՝ եւ ելից ընդ այնր մարմին: եւ շինեաց տր ած զկողն զոր եառ յադամայ՝ ՚ի կին, եւ եած զնա առ ադամ: Եւ ասէ ադամ. այս այժմ ոսկր յոսկերաց իմոց, եւ մարմին ՚ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ: Վն այսորիկ թողցէ այր զհայր իւր՝ եւ զմայր իւր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ. եւ եղիցին երկոքեան ՚ի մարմին մի:

### Ընթերցուածս յեսայեայ մար":

Եւ ծանիցի ՚ի մէջ ազգաց զաւակ նց, եւ ծնունդք նց ՚ի մէջ ժողովրդոց: ամենքին որ տեսանիցեն՝ ճանաչիցեն զնս՝ եւ ասասցեն. սոքա են զաւակք օրհնեալք յայ. եւ ուրախութբ ուրախ լիցին ՚ի տր: Ցնծասցէ անձն

անձն իմ՚ի տ͞ր, զի զգեցոյց ինձ հան-
դերձ փրկութե͞՝ և պատմուճան ու-
րախութե͞ . իբրև փեսայի եդ ինձ
պսակ, և իբրև հարսն զարդու զար-
դարեաց զիս. Եւ իբրև երկիր որ
աճեցուցանէ զծաղիկս իւր, և իբրև
զպարտէզ որ բուսուցանէ զսերմա-
նիս իւր. այնպէս ծագեսցէ տ͞ր զար-
դարութի͞ իւր, և զցնծութի͞ առաջի
ազգաց. Վ͞ս սիոնի ոչ լռեցից, և վ͞ս
ե͞ղմի ոչ ներեցից. մինչև ծագեսցի
իբրև զլոյս արդարութի͞ ն͞ր, և փրկու-
թի͞ ն͞ր իբրև զլապտերն վառեսցի. և
տեսցեն հեթանոսք զարդարութի͞ քո,
և թագաւորք զփառս քո. և կոչես-
ցի քեզ անուն նոր զոր տ͞ր անուա-
նեսցէ. Եւ եղիցիս պսակ վայելչութե͞
՚ի ձեռին տ͞ն, և թագ արքայութե͞
՚ի ձեռին ա͞յ քոյ. և ոչ ևս կոչեսցիս
լքեալ, և երկիրն քո ոչ ևս կոչեսցի
աւերակ. Զի քեզ անուն կոչեսցին
կամք իմ, և երկրին քում շինութի͞
բնակութե͞ . զի հաճեցաւ տ͞ր ը͞ն քեզ,



և

( Կյուսէ Պաշնէ )

Եւ երկիրն քո խնամեսցի 'ի բնակութի՟ իւրում։ Ո՜վ որ օրինակ բնակեսցի Երիտասարդ ընդ կուսի, այնպ՟ բնակեսցին որդիք քո 'ի քեզ։ Եւ եղիցի զոր օրինակ ուրախ լինի փեսայ առ հարսին իւրում, այնպէս ուրախ լիցի տ՟ր 'ի քեզ։ Եւ 'ի վ՟ր պարսպացն քոց եղէմ՝ պահապանս կացուցից․ զօրն ողջոյն և զգիշերն ա՟մ․ որ մինչև ցայգ մի՛ դադարեսցին յիշել զտ՟ր․ զի

ո՛չ գոյ նման քեզ։

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է ընթերցուածս։

Կանայք՝ իւրեանց արանց հնազանդ լիցին իբրև տ՟ն․ զի այր է գլուխ կնոջ, որպ՟ և ք՟ս գլուխ է եկեղեցւոյ․ և ինքն է փրկիչ մարմնոյ․ այլ որպ՟ եկեղեցի հնազանդ լինի ք՟ի, նոյնպէս և կանայք իւրեանց արանց յա՟մի․
Արք՝ սիրեցէ՛ք զկանայս ձեր․ որպ՟ և ք՟ս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վ՟ն նր՟․ զի զնա սրբեսցէ՛



սրբ-

(Կիւրի Պաչնէ)

սրբութ̃ աւազանին բանիւ. զի կա-
ցուսցէ ինքն իւր յանդիմանս փառա-
ւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի արատ
ինչ՝ կամ աղտեղութի՝ կամ այլ ինչ
յայսպիսեաց. այլ զի իցէ սբ̃ և անա-
րատ. Նոյնպէս պարտին արք սիրել
զիւրեանց կանայս, որպ̃ զիւրեանց
մարմինս. Որ սիրէ զկին իւր՝ զանձն
իւր սիրէ. զի ո՛չ երբէք ատէ զանձն
իւր, այլ սնուցանէ և դարմանէ ըզ-
նա, որպ̃ և ք̃ս զեկեղեցի. զի անդամք
եմք մարմնոյ նորա, և ոսկր ոսկերաց
նր̃. Վ̃սկ թողցէ այր զհայր իւր և
զմայր իւր՝ և երթիցէ զհետ կնոջ
իւրոյ, և եղիցին երկոքեան ՚ի մար-
մին մի. Խորհուրդս այս մեծ է.
բայց ես ասեմ ՚ի ք̃ս և յեկեղեցի.
այլ և դուք նոյնպէս մի ըստ միոջէ՛.
զի իւրաքանչիւրոք զիւր կին այնպ̃ս
սիրեսցէ՝ իբրև զիւր անձն. և կինն
երկնչիցի յառնէ՛ իւրմէ՛.

Ալէլուիա ալէլուիա.

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ՛՛.

# Օրհնէ · Խաղաղութեան ածնէ".

## Աւ. Մատթէոսի · ԺԹ ԳԼ. ու ըստ Մատ".

Եւ գնացին զհետ նր՟ ժողովուրդք բազումք, և բժշկեաց զնս՟ անդ. Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն, փորձէին զնա՝ և ասէին. եթէ արժա՟ն իցէ ումեք արձակել զկին իւր ըստ ա՟մ վնասու. Պատասխանի ետ նց՟՝ և ասէ. չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն ՚ի սկզբանէ՝ արու և էգ արար զնս՟՝ և ասէ. վ՟նկ թողցէ՛ այր զհայր և զմայր՝ և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի. Ապա ուրեմն ոչ են երկու, այլ մի մարմին. արդ՝ զոր ա՟ծ զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ. Ասեն ցնա. իսկ Մովսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ՝ և արձակելոյ. Ասէ ցնս՟ յս՟. Մովսէս՝ վասն խստասրտութե՟ ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր. այլ ՚ի սկզբանէ ոչ եղև այնպէս.



Բայց

Բայց ասեմ ձեզ, զի ամ՟ որ արձակէ զկին իւր՝ և ոչ վ՟ս պոռնկութե՟ն, և առնիցէ այլ՝ շնայ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ։

Վասն ուղղելոյ զգնացս մեր ՚ի"։
Վասն ցրելոյ ՚ի մէնջ զամ՟ խոր"։
Վասն պարգևելոյ մեզ առողջ"։
Վասն պահելոյ զմեզ ընդ հով"։
Վասն խորտակե"։ Վասն հոգ"։

Նոյն աւէ՟ ղուկ՟ու։

Տէր ած՟ զօրութեանց և արարիչ ամ՟ արարածոց, որ առեր հող յերկրէ և ստեղծեր զմարդն ըս՟ պատկերի քում և ըստ նմանութե՟ն։ և եդեր զնա ՚ի դրախտին փափկութե՟ն։ Արու և էգ արարեր զնս՟՝ և օրհնեցեր զնս՟ ասելով, աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր, և տիրեցէք դմա։ Նա՟ խաստրպեցան խնամք արարչական սիրոյ քո յարարածս քո ՚ի ձեռն միածնի որդւոյ քո տն՟ մերոյ յի՟ քի՟․ գալ ծնանիլ ՚ի սբյ՟ կուսէն, և նորո֊



(Նոյն Պաշտն է)

դել զշնութիւն առաջնաստեղծ մար_
դոյն. Ունելով սկիզբն նշանաց ՚ի
կանա գալիլեացւոց ՚ի հարսանիսն.
և ամենայն սքանչելեօքն զա՛նարձա_
ցուցեալ զհարսնարանն՝ զջուրն ՚ի
գինի փոխելով։ Իւ այժմ աղաչեմք
զքեզ տէր՝ օրհնեա ✳ զամուսնութիս
զայս ով զտէր նախահարցն. անարատ
պահելով զսոսա հոգևոր սիրով միա_
բանութեամբ ՚ի կեանս յայսմիկ։
Օրհնեա ✳ տէր և զպտղաբերութի
որդէծնութե սոցա ՚ի ժառանգութի
վարուց առաքինութե ՚ի փառս ամե_
նա՟բ անուան քո։ Որ՟պ զի խաղաղա_
կան կենօք՝ և բազմաժամանակեայ
ծերութե յերկարեալ յայսմ աշխար_
հիս, և յանզրաւական ուրախութիւն
՚ի վերին հարսնարանին արժանաւո_
րեսցին հասանիլ ը՟ ամ՟ տբս, շնոր_
հօք և մարդասիրութե տն մերոյ և
փրկչին յի քի. Ընդ որում օրհնեալ_
ես հայր ամենակալ՝ հանդերձ կենդա_
նարար և աղատիչ սբ հոգւովդ",



Խո_

(Կոտուբ Պաշտն է)

## Խաղաղութեան աղօթքն ։

Օրհնեալ ես տ՟ր ա՟ծ արարիչ ա՟մ արարածոց, որ դու միայն ես բարերար և կարող. որ արարեր զա՟մ արարածս հրամանաւ քով՝ զերկինս և զերկիր, և զամենայն ինչ որ 'ի նո՟ ։ Զերկինս արարեր իմաստութ՟բ. զերկիր հիմնեցուցեր կարողութ՟բ. և ըղձով պատրաստեցեր ողորմութ՟բ ։ Զարեգակն ճառագայթեցեր 'ի լուսաւորութ՟ի տուընջեան. զլուսին և զաստեղս պայծառացուցեր 'ի զարդ գիշերոյ. և զտարերս զուգակարգեցեր առ 'ի կենդանութ՟ի արարածոց քոց։ Խորհեցար հայր անսկիզբն՝ ը՟ միածնի որդւոյ քո՝ և ը՟ կենդանարար ս՟բ հոգւոյդ՝ և ասացեր. արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութ՟ե, և իշխեսցէ 'ի վ՟ր երկրի։ Առեր հող յերկրէ, և ստեղծեր ա՟ծային աջով քով մարդ. և կերպարանակից քեզ արարեալ՝ կացուցեր զնա տ՟ր և իշխան 'ի վ՟ր ա՟մ



արա

արարածոց քոց երկրաւորաց ։ Նաև
ապա հայեցեալ 'ի միայնութի նր' ասա
ցեր . ոչ է բարւոք մարդոյդ միայն լի
նել . արասցուք դմա օգնական ըստ
դմա ։ Նա արկեալ զքուն թմրութե 'ի
վր ադամայ , առեր զմի 'ի կողից նր ,
և շինեցեր զնա 'ի կին . և ետուր մար
դոյն բանից կցորդ , և կենակից 'ի
զուգաւորութի որդեծնութե . և
օրհնեցեր աճեցէք և բազմա
ցարուք և լցէք զերկիր , և տիրեցէք
դմա ։ Իսկ նախաստեղծ մարդոյն
մարգարէական հոգւով ծանուցեալ
ասէ 'ի տեսանելն . այս այժմ ոսկր
յոսկերաց իմոց , և մարմին 'ի մարմնոյ
իմմէ . սա կոչեսցի կին , զի յառնէ'
իւրմէ' առաւ ։ Վն այսորիկ թողցէ
այր զհայր իւր և զմայր , և երթիցէ
զհետ կնոջ իւրոյ . և եղիցին երկոքեան
'ի մարմին մի ։ Նա յաղագս միաւո
րութե այդա ծնան նահապետք ,
քահանայք , թագաւորք , մարգարէք .
աճեցան և բազմացան տոհմիւք իւ
րեանց



( Կասէ Պաչն է )

րեանց՝ յածային օրհնուէդ, յասելդ
քո արարողեդ կենաց, թէ բազմա-
ցուցից զզաւակս ձեր ոպ զաստեղս
երկնից, և իբրև զաւազ առ ափն ծո-
վու: Որդ՝ ոպ օրհնեցեր զամուս-
նութի նախահարցն և զնախամարցն,
զաբրահամուն և զսառային, զսահա-
կայն և զռեբեկային, զյակոբայն և
զհռաքելին, զյովսեփայն և զասանե-
թին, զյովակիմայն և զաննայն, զզա-
քարիային և զեղիսաբեթին. և ոպ
օրհնեցեր զպսակս արդարոցն քոց:
Նոյնպ օրհնեա * զպսակս զայս յա-
մուսնութի ծառայից քոց. զի դու
ժամանեցուցեր զսոսա յօրհնութի
քաղցրութե քո, և եդեր 'ի գլուխ
սոցա պսակ 'ի քարէ պատուականէ':
Եւ ոպ օրհնեցեր զհարսանիսն 'ի կա-
նա գալիլեացւոց. և ածային սքան-
չելեօք զջուրն 'ի գինի փոխելով,
ծանուցեր աշակերտացն քոց զածային
քո զփառս. և քարոզեցար ած և
փրկիչ ազգի մարդկան: Ոչ եթէ խո-

տե

(Կյուռ Պյուռչնէ)

տեցեր զամուսնութիւն, այլ քահա_
նայապետաբար օրհնեցեր, և հաստա_
տեցեր անսուտ բանիւդ քո, եթէ զոր
ած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ ։
Այլ պարտին արք սիրել զիւրեանց
կանայս՝ որպէս զիւրեանց մարմինս ։
նոյնպէս և կանայք հնազանդ լինիցին
արանց իւրեանց իբրև տն ։ Որ
և սբ առաքելոյն գոչէ 'ի մէջ եկե_
ղեցւոյ, թէ ոպ եկեղեցի հնազանդ
լինի քի, նոյնպ և կանայք՝ իւրեանց
արանց յամէ ։ զի այր է գլուխ կնոջ.
որպէս և քս գլուխ է եկեղեցւոյ ։
Յաղագս որոյ պատուական է ամուս_
նութի, և սբ են անկողինք նոցա ։
Դու տէր՝ որ սուրբդ ես և 'ի սբս
հանգուցեալ, սբ պահեա զանկողինս
ամուսնութե սց ։ և միաւորեա զսո_
սա զուգակցութբ ընդ լծով վիճակի
քո ։ որ զի մի՛ յայսմհետէ կոչեսցին
երկու, այլ՝ մի մարմին ։ միաւորեալ
հոգւով հեզութե ։ սիրել զմիմեանս
պարկեշտ վարուք, ամբիծ հոգւով,



ա_

առանց ամօթոյ առանց լկտութեան
պատրաստ լինել 'ի գործս բարիս .
Ով զի զերծեալք յորոգայթից թշ
նամւոյն՝ առողջ հոգւով և մարմնով
պահպանեսցին հրեշտակական պահ_
պանութեբ , և նշանաւ ամենայաղթ
խաչին քո . Այո տր ած մեր՝ լեր պաշտ
պան ծառայից քոց , և տուն ապաւէ
նի զամենայն աւուրս կենաց սոցա .
Փրկեա զսոսա յօտարոտի խորհրդոց ,
և պատսպարեա 'ի տուէ և 'ի գիշերի
ողորմութեբ քով . Տնկեա զսոսա որպ
ձիթենի պտղալից 'ի տան այ . Ով զի
կեցեալք արդարութեբ , սրբութեբ , և
ածպաշտութեբ ընդ հաճոյից կամաց
քոց բարեսիրաց , տեսցեն զորդիս որդ
ւոց իւրեանց . և եղիցին քեզ ժողո
վուրդ՝ և փառաբանիչ անուանդ քում
սբյ . և անդադար օրհնեսցեն զամե_
նասբ Երրորդութիդ , զՀայր և զՈր_
դի և զսբ հոգիդ . այժմ և".

Կ,տոտուցանէն զերեսոյն և ասէն Տ ար".

Ով երանելիդ ամենեցուն տիե".



(Կոուոէ Պաշնէ)

Ճաշնէ, Խաղէ, փառք։
Այլ խաչիւս աղա"։ Պահպանիչ"։
Հայր մեր որ յեր"։
Ընթանք ՚ի տուն տեառն. Արեգական"։
Նաև Խաղաղաւոր գոլով"։

Կանոն Զատկի Վերացուցանելոյ։
Բերել՝ ժամանակն լծառքն և լքեւայն և դնել կերակուր գլխոյ. Հանել զնացն ՚ի թաղեալն և դնել Մաշտոցն ՚ի վերայ գլխոյ նոցա. և ասէ Շարական զայս.

Այսօր մարտիրոսաց դասքըն ցընծացեալ բերկրելին ընդ ա-ռաջաւորեան քո որդւոյն այս։ Զայն ՚ի յերկնից վոչ կոյեալ աստ եկայք օրհնեալք հօր իմոյ ժա-ռանգեցէք երկնից խորանացն։ Ընծայեք ընդ տեղի անկեղծն առա-ջնորդական Թընձնամուտն որ ՚ի յերկնից վայր անկեալ։



(Կցուրդ Պատճէն է)

Մայր և կոյս"։ Յաղթող և զ"։
Փառք հօր և"։ Ընթանաւամ պըսակն
ձեզ աւանդեալ մընոյ՝ · քան զակա-
նըս պատուականըս գերա"։
Ալէ" ալէ"։ Աթոռ քո ած յաւէ"։
Բղխեսցէ սիրտ իմ զպատգամս քո"։

Ընթերցուած յԵրեմիայ մարգարէէ։

Այսպէս ասէ տր · եղիցի ինձ իբրև
զցօղ, և ծաղկեսցի իբրև զշուշան և
արձակեսցէ զարմատս իւր իբրև զլի-
բանան · Արձակեսցին ոստք նր, և
եղիցի իբրև զձիթենի պտղալից, և
բուրեսցի հոտ նր իբրև զկնդրուկի ·
Դարձցին և նստցին ը յարկաւ նր ·
կեցցեն և հաստատեսցին ցորենով,
և ծաղկեսցին իբրև զորթ․ և իբրև
զգինի լիբանանու եղիցի եփրեմ։

Պօղոսի առաքելոյն ՚ի Տիմոթէոս Բղ"։

Կամիմ լինել զկանայս ՚ի զարդ խո-
նարհութե · ակնածութբ և զգաստութբ
զարդարել զանձինս · մի ՚ի հիւսս ոս-
կեմանս ընդելուզեալս մարգարտով,


կամ

( Կրոնք Ակըչն է )

կամ 'ի հանդերձս պաճուճանելս. այլ որպ՟ վայելէ կանանց՝ զա՟ծպաշտութի՟ յանձն առելոց գործովք բարեօք։ Կին մարդ ցածութ՟ ուսցի, ա՟մ հնազանդութ՟։ այլ ուսուցանել՝ կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, և ոչ ձոխաբուն լինել քան զայր մարդ · այլ՝ 'ի լռութեան կալ։ զի Ադամ նախ ստեղծաւ, և ապա Եւա։ Եւ Ադամ ոչ պատրեցաւ, այլ՝ կինն պատրեցաւ և յանցեաւ։ Բայց կեցցէ վ՟ն որդեծնութեան, եթէ կայցեն 'ի հաւատս և 'ի սէր և 'ի սրբութի պարկեշտութեամբ։

Մ.շէ" ուշէ"։ Կացցէ դշխոյ ընդ աջ"։

ՍԷՋ Մ.տրնի. ՅԷ ՙԲԷ որ ըստ Յոհան"։

Յաւուրն երրորդի հարսանիք էին 'ի Կանա Գալիլեացւոց, և անդ էր մայրն յի՟ · կոչեցաւ և յի՟ և աշակերտքն նորա 'ի հարսանիսն։ Եւ 'ի պակասել գինւոյն՝ ասէ մայրն ց յի՟ · գինի ոչ ունին։ Ասէ ցնա յի՟ · զի՞ կայ իմ և քո՝ կին դու, չև է հա

սեալ

սեալ ժամանակ իմ։ Ասէ մայրն ցսպասաւորսն. որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջիք։ Անդ էին Թակոյկք կըճեայք վեց՝ ըստ սրբութեն հրէից. տանէին մի մի 'ի նոցանէ մարս երկուս կամ երիս։ Ասէ ցնս՟ յս՟. լցէք զթակոյկսդ ջրով. եւ լցին զնս՟ մինչեւ 'ի վեր։ Ասէ ցնոսա, արդ՝ առէք եւ բերէք տաճարապետիդ. եւ նոքա բերին։ Եւ իբրեւ ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի եղեալ, եւ ո՛չ գիտէր թէ ուստի՛ իցէ։ բայց սպասաւորքն գիտէին որք արկին զջուրն։ Խօսի ընդ փեսային տաճարապետն՝ եւ ասէ. ամենայն մարդ զանոյշ գինի յառ՟ջագոյն պաշտէ. եւ յորժամ արբենան՝ յայնժամ զյոռին. դու պահեցեր զանոյշ գինիդ մինչեւ ցայժմ։ Զայս արար սկիզբն նշանաց յս՟ 'ի կանա գալիլեացւոց, եւ յայտնեաց զփառս իւր. եւ հաւատացին 'ի նա աշակերտքն նր՟։

ԿԵՂ Լուիցէ տր՟ ձայնի աղաչանաց մե-



րոց,

( [illegible] )

րոց , ընկալցի զխնդրուածս սրտից
մերոց , թողցէ՛ զյանցանս մեր , ո_
ղորմեսցի ՚ի վերայ մեր ։

Տ ա̃ծ մեր՝ որ յա̃մ ժամ ընդ մեզ ա̃ղ
ես , և ո՛չ երբէք թողուս ՚ի ձեռա_
նէ՛ քումմէ զայնոսիկ , որք ճշմար_
տութե̃ խոստովանին զանուն քո ս̃բ ։
Օ քեզ աղաչեմք՝ և առ քեզ կար_
դամք՝ և ՚ի քէն խնդրեմք մարդասէր
տ̃ր , քոյին հրամանաւդ օրհնեցուք ըզ
պսակս զայս ամուսնութե̃ սոցա ՚ի
խորանի քում սրբութե̃ առաջի ս̃բյ
սեղանոյ քո ։ և արդ՝ տէ՛ր բարերար՝
քոյին հրամանաւդ առնումք զնարոտ
պսակիս ՚ի գլխոց սոցա , և օրհնեմք
զսոսա նշանաւ ս̃բ խաչին ✱ Նայեա՛
տ̃ր քաղցրութե̃ քով ՚ի սոսա ։ և առա_
քեա՛ զհրեշտակ խաղաղութե̃ քո , որ
եկեալ պահեսցէ զսոսա ս̃բս և անա_
րատս , միաշունչս և միախորհուրդս ։
Շնորհեա՛ մզ̃ տ̃ր՝ և զաւակս ըստ
կամաց քոց ։ քաղցրացո՛ զվայելչութի
կենաց մզ̃ քոյով առատ բարերարու_
թե̃դ



( Կյուսէ. Պաշնէ )

Թէդ. զի կեցցեն անբիծ և անարատ վարուք յայսմ աշխարհիս մինչև 'ի խորին ծերութի, և արժանաւորք ե-ղիցին երկնից արքայութեդ, և անթա-ռամ պսակացն։ Եւ քեզ ամենազօ-րիդ այ վայելէ փառք իշ".

Եւ ապա բաժակ մի գինի առնու քահանայն 'ի ձեռն իւր՝ և տայ զուգոցն.

Տէր այծ մեր, որ զամ բնչ իմաստութ արարեր, և հաստատեցեր զտիեզե-րս, և զարդարեցեր զհարսանիսն 'ի Կանա Գալիլեացւոց. Ինքնին տէր՝ օրհնեա զպսակս զայս ողորմութե քով. և մեք յամ ժամ գոհասցուք զպարգևաց քոց. Եւ քեզ հանցուք զօրհնութի և զփառս հօր և որ".

Եւ տայ նոցա զբաժակն առնուլ.

Օրհնութի գոհութի և փառք հօր".

Սէ խաչիւս աղաչեսցուք".

Պահպանիչ և յայս".

Հայր մեր որ".



( Կուսէ Պսակն է )

# Կանոն Երկրորդ Պսակի .

Քահանայն բերէ՝ զեօթն օրհնեցէքն՝ և խառ_
նակեցուցանէ . և ապա տայ շէքան 'ի
չէքան , և հարցանէ՝ որ յաւաշն գրեցաւ . և
ապա ասէ ։

Տէր 'ի զօրութեն քում ուրախ եղև" ։
Զ ցանկութի սրտի նր՛ ետուր" ։

Գործք պօղոսի . Աւետարան մատթէի . Քա_
րոզ՝ վս ուղղելոյ . Այնոք են որք 'ի կանոն
պսակին կան ։ Եւ ապա ասէ շարակնս .

ՏԷՐ ՄԵՐ , ՈՐ
'ի հրեշտակաց խօսեցար՝
և 'ի մարգարէիցն քարո_
զեցար՝ և յառաքելոցն աւետարանեցար .
որ անարատ յայտնութե քով կեանս
աշխարհի պարգևեցեր . Օրհնեա՛ տր
և այժմ զամուսնութի ծառայիս քո
և աղախնոյս , որպ օրհնեցեր զջուրն
'ի

՚ի կանս գալըստեանց՝ և արարեր գի-
նի․ սքանչելագործելով պատուեցեր
զամուսնութիւն։ Օրհնեա և այժմ Տէր
զծառայքս քո զզուգաւորեալքս այժ-
մոյս դարձեալ յերկրորդ ամուսնու-
թի․ ոչ զի ընդունելով զերկրորդ
ամուսնութիւնս զայս յանձինս իւրեանց,
միաւորեսցին հաւատով և յուսով և
սիրով ընդ մէջ եկեղեցւոյ․ և յառա-
ջեալք ՚ի պատուիրանս քո՝ եղիցին
միաւորեալք ընդ միմեանս հոգւով
և մարմնով։ Պարգևեա սոցա որդե-
ծնութիւն ողորմութեամբ քով․ թող Տէր
զմեղս և զյանցանս սոցա, զկամայ և
զակամայ․ ընկալ զաղօթս և զխունկ ըն-
ծայս սոցա․ սրբեա զսոսա զհոգի
և զմարմին․ և շինեա զսոսա ոչ առա-
ջին վարուքն կեալ ընդ միմեանս գոր-
ծովք բարութեան յոյժ Տէր։ Օրհնեա
Տէր և զծնունդս որովայնի սոցա, զի
եղիցին ՚ի հաճոյս քեզ արարչիդ և
Աստուծոյդ մերոյ։ Զի դու ես որ օրհնես
և սրբես զանձինս մեր ամենեցուն․ և
քեզ վայելէ փառք"։ 72

(Նշխարք Պատէ)

Խնդրեսցուք հաւատով միաբա″։

Դնէ շպաւէն և ասէ։

Տէր մշտնջենաւոր, որ զօրութ՛ք քով՛ և միածնի որդւոյ քո՝ և ամենասուրբ հոգւոյդ՝ արարեր յոչնչէ զամ՛ արարածս քո, զծով և զցամաք, և զամ՛ որ ՚ի նոսա։ Ընկեցեր զդրախտն փափկութե՛, և տնկեցեր ՚ի նմա զփայտն կենաց։ որև ՚ի վախճան ժամանակի ՚ի ձեռն սբյ որդւոյ քո սիրելւոյ՝ տեառն մերոյ յի քի՝ նոյն կենաց փայտի՛ն ազատեցեր զանկեալսն ընդ պատրանօք բանսարկուին։ Դու նոյն ինքն տր մեր՝ և ած ամցուն, օրհնեա և սրբեա զերկրորդ պսակս զայս յամուսնութի ծառայիս քո և աղախնոյս. պահելով զսոսա անարատ սիրով և միաշունչ խորհրդով։

Օրհնեա տր և զպտղաբերութի որդեծնութե՛ն սցա. զի աճեսցին խաղաղական կենօք, և ապրեսցին շնորհօք քովք. և հանդերձել բարեացն հանդիպելով՝ փառաւորեսցեն զքեզ ընդ



(Նուէրոտ Պաշ)

որդւոյ և ընդ սրբոյ հոգւոյդ · այժմ և միշտ և"։

## Խաղաղութեան ամենեցուն ։

Տէր Աստուած մեր, որ գաղտնեաց մարդկան գիտակ ես, և զծածուկս մեր ճանաչես · զի քեզ յայտնի են խոր_հուրդք առն, և ճանապարհ կնոջ · նոյնեւ բարերարութեամբ քով 'ի ծառայքս քո, և տուր սոցա զլուծ սիրոյ քո · զի ընկալցին զերկրորդ պսակս, և հրա_մանաւ քով բնակեսցին ի միասին միով խորհրդով 'ի սուրբ անկողինս իւրեանց· հեռասցին 'ի չար գործոց, և կաց_ցեն ամօթխածութեամբ առ միմեանս · և առաքինի գործովք քաղաքավարեսցին, արժանաւորք եղիցին հանդերձեալ բարեացդ · և քեզ հանցեն զօրհնու"·

Սէ խաչիւս աղաչեմ"·

## Կանոն Հաղորդ Տալոյ ։

Յետոյ քահանայն շրջի և դառնայ առ ժողովուրդն և ցուցանէ զխորհուրդն՝ և երկիւղ ա... ... ։ և ասէ զաղօթս յաւէտեան ...

Ի նեղութե իմում ես առ Տր կար ։

Զփոխն ըստ աւուր ։

Յետ խոստովանեցուցանէ զնա զհաւատոյն ։ և ապա ասէ զաղօթս զայս ։

Օրհնեալ ես Տր ած մեր Յս Քս արարիչ ամ արարածոց, որ արժանի արարեր զամ հաւատացեալս՝ հաղորդել մարմնոյ և արեան քո ։ Արժանաւորեա և այժմ զծառայս քո զայս յետին Թոշակիս, որ հեռանի 'ի կեանսն յաւիտենից ։ զի դու իսկ ասացեր ամենատր բերանովդ, եթէ ոչ կերիջիք զմարմին իմ, և արբջիք զարիւն իմ, ոչ ունիք կենս յանձինս ձեր ։ Արդ՝ 'ի ձեռն Տր

մարմ_

մարմնոյ և արեան քո՝ ազատեմ զսա
'ի յանցանաց մեղաց, և սրբեմ զսա շը
նորհիւ քո. զի ճաշակելով 'ի կենա-
րար մարմնոյ և արենէ քումմէ՝ ար-
ժանի լիցի կենացն յաւիտենից.
Փառաւորել զքեզ ընդ Հօր և ս͞բ"։
Ամենակալ քաւեա զմեղս իմ. զի
աստուած ես ապաշխարողաց։
Եւ զհոգիդ ս͞բ մի հաներ յի-
նէն. զի աս"։ Եւ փրկեա զիս՝
յահագին հրոյն. զի աս"։
Ս͞բ ա͞ծ, ս͞բ և հզօր, ս͞բ և անմահ,
որ խաչեցար վ͞ս մեր, ողորմեա"։
Ա͞ն 'ի վերուստ խա"։
Ալէ" ալէ"։ Ողորմեա ինձ ա͞ծ"։
Առաւել լուա զիս յանօրէնութ"։
Ընթերցուածս զհաւատոյ նոր"։
Եւ եղև յամին յորում մեռաւ Ոզիա
արքայ, տեսի՛ զ͞տր նստեալ յաթոռ
բարձրութե͞ն և վերացելոյ. և լի՝ էր
տունն փառօք նորա։ Եւ սրովբէք
կային շուրջ զնովաւ. վեց թևք միոյ՝
և

և վեց թևք միոյ. երկուքն ծածկէին զերեսս իւրեանց, և երկուքն ծածկէին զոտս իւրեանց, և երկուքն թռուցեալ։ Աղաղակէին մի առ մի և ասէին. սո՛ւրբ. սո՛ւրբ. Տէ՛ր զօրութեանց՝ լի՛ է ամ երկիր փառօք նորա։ Եւ վերացաւ դրանդն ՚ի ձայնէն զոր աղաղակէին, և տունն լի՛ եղև ծխով։ Եւ ասեմ, վա՜յ է ինձ՝ ես այր տառապեալ զի՞արդ կամս, հիացեալ։ զի մարդ եմ՝ և պի՛ղծ շրթունս ունիմ, և ՚ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես. և զթ̃ր զօրութեանց տեսի աչօք իմովք։ Եւ առաքեցաւ առ իս մի ՚ի սրովբէից անտի, և ՚ի ձեռին իւրում ունէր կայծակն. զոր առեալ ունելեօք ՚ի սեղանոյ անտի, եբեր մերձեցո՛յց ՚ի բերան իմ, և ասէ. ահաւասիկ մերձեցաւ ա՛յդ ՚ի շրթունս քո, և հանցէ զանօրէնութիւս քո, և զմեղս քո սրբեսցէ՛ ՚ի քէն.

Յօհաննու առաքելոյն ՚ի [illegible]։

Եղբարք՝ մարմին և արիւն որդւոյն



ար՝

[illegible]

ո՜յ՝ սրբէ՛ զմեզ յա՜մ մեղաց։ Եթէ ա-
սիցեմք թէ մեղս ինչ մեք ո՛չ ունիմք, զանձինս խաբեմք. և ճշմարտութի՜ ՚ի մեզ ո՛չ գոյ։ Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար՝ առ ՚ի թողուլ զմեղս մեր, և սրբել զմեզ յա՜մ անօրէ-
նութե՜։ Եթէ ասիցեմք՝ եթէ ոչ ինչ մեղաք, սուտ առնեմք զնա. և բանն նո՜ր ո՛չ է ՚ի մեզ։ Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի՛ մեղիցէք. և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ հ՜ծ զյս՜ քս՜՝ զարդարն և զանարատն։ և նա՛ է քաւութի՜ մեղաց մերոց.

Ալէ՛՛ ալէ՛՛։ Տ՜ր մի՛ սրտ՛՛.

Սբ Աւ-տրն Յի Քի որ ըստ Յով՛՛.

Տ՜րն մեր յս՜ քս՜.

Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ո՛չ կե-
րիջիք զմարմին որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ո՛չ ունիք կեանս յանձինս։ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, ունի զկե՛նս



յա-

յաւիտենականս. և ես յարուցից
զնա յաւուրն յետնում։ զի մար-
մին իմ՝ ճշմարիտ կերակուր է, և ա-
րիւն իմ՝ ճշմարիտ ըմպելի է։ Որ
ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն
իմ, նա յիս բնակեսցի, և ես ՚ի նմա։
Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր,
և ես կենդանի եմ վն Հօր. և որ ու-
տէն զիս՝ և նա կեցցէ վն իմ։ Այս
է հացն որ յերկնից իջեալ. ոչ որպ
կերան հարքն ձեր զմանանայն՝ և մե-
ռան. որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ
յաւիտեան։

Սարկաւագն ասէ զհաւատամքն, և զ[illegible]
[illegible], և զաղօթսն. և Հայր մեր"։
Սարկաւագն, Որ կազմեցեր սեղան"։
Տայ զՔն խորհուրդն [illegible],
և ասէ զաղօթս։

Գոհանամք զքէն Հայր ամն մերոյ յի-
քնի, որ արժանի արարեր զմեզ երկ-
նաւոր պարգևացս այսոցիկ՝ կենարար
մարմնոյ և արեան միածնի քո։ Աղա-
չեմք զքեզ տր, մի՛ լիցի սա մեզ ՚ի
դա-

դատապարտութիւն վասն բազում յան-
ցանաց մերոց : այլ եղիցի սա մեզ
յառողջութիւն հոգւոյ և մարմնոյ, 'ի
զգաստութիւն խորհրդոց, և 'ի կատա-
րումն բարեգործոց առաքինութեան :
Որպէս զի սրբեսցէ զսորա միտս և ըղ-
ձունջս, և անուանեսցի տաճար սրբոյ
երրորդութեան՝ առ 'ի գտանել զողոր-
մութիւն առաջի քո: Եւ գոհանալով
փառաւորել զքեզ ընդ որդւոյ և
ընդ սբ. հոգ":

Ամէն. խաչիւ աղաչեսցուք զտէր":
Պահպանիչ է": Հայր մեր որ":
Եւ բէ չափն, տառ Փարատեցո":

Կանոն Գիշեր ժամու աղօթից՝ որ կատարի ՚ի վր ծանր հիւանդաց, ՚ի բժշկութիւն ցաւոց՝ ՚ի քաւութիւն յանցանաց.

Հայր մեր որ յէր"։

Առաքեա տր զլոյս քո և զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ՚ի լեռն սբ և ՚ի յարկս քո։ Մտից առաջի սեղանոյ այ առ ած. որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։ Խոստովան եղէց քեզ օրհնութբ ած ած իմ։ Ընդէ՞ր տրտում ես անձն իմ. կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ ած, խոստովանեսցուք նմա. փրկիչ երեսաց իմոց ած է։

Փառք հօր և"։ Եւ ևս խաղա"։

Օրհնութիւն և"։

Եկեսցէ ՚ի վր իմ ողորմութիւն քո տր, և փրկութիւն քո ըստ բանի քում։ Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք. զի ես ՚ի բանս քո

Օ



յու

յուսացայ։ Մի՛ ՚ի բացեայ առներ ՚ի
բերանոյ իմմէ զբան ճշմարտութ՟ն
մինչեւ յոյժ. զի յիրաւունս քո յու-
սացայ։ Պահեցի զօրէնս քո յամ՟
ժամ, յաւիտեան եւ յաւիտեանս յա-
ւիտենից։ Գնայի ես յանդորրու,
զի զպատուիրանս քո խնդրեցի։
Խօսէի զվկայութ՟իս քո առ՟ջի թագա-
ւորաց, եւ ոչ ամաչէի։ Խորհէի ՚ի
պատուիրանս քո զոր սիրեցի։ Համ-
բարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս քո
զոր սիրեցի. եւ խորհէի յարդարութ՟ն
քում։ Յիշեա՛ զբան ծառայի քո,
յոր եւ յուսացուցեր զիս։ Սա մխի-
թարեաց զիս ՚ի խոնարհութ՟ն իմում։
զի բան քո կեցոյց զիս։ Ամբարտա-
ւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ
յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։
Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից
տր՟, եւ մխիթարեցայ։ Տրտմութ՟ի կա-
լաւ զիս ՚ի մեղաւորաց, եւ որք թողին
զօրէնս քո։ Գովելի են ինձ իրաւունք
քո, ՚ի տեղւոջ պանդխտութ՟ն իմոյ։



Յիշե-

( [illegible] )

Յիշեցի 'ի գիշերի զանուն քո տր.
և պահեցի զօրէնս քոյ: Այս եղև ինձ
ճանապարհ 'ի կեանս. զի զարդարու-
թիւս քո խնդրեցի: Զանօրէնս ատե-
ցի, և զօրէնս քո սիրեցի: Օգնական
և փրկիչ իմ ես դու. և ես 'ի բանս
քո յուսացայ: 'Ի բաց եղերուք յի-
նէն չարք. և քննեցից զպատուիրանս
այ իմոյ: Օգնեա ինձ ըստ բանի
քում, և կեցո զիս. և մի յամօթ առներ
զիս 'ի յուսոյ իմմէ: Օգնեա ինձ, և
ապրեցո զիս. և խորհեցայց զիրա-
ւունս քո յամ ժամ: Անարգեցեր
զամենեսեան՝ որք ապստամբք եղեն
յարդարութեանց քոց. զի անիրաւութ
էին խորհուրդք նց: Յանցաւորս
համարեցայ զամ մեղաւորս երկրի.
վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս
քո: Բևեռեա ընդ երկիւղ քո ըզ-
մարմին իմ. զի 'ի դատաստանաց քոց
երկեայց յոյժ: Մերձեսցին խնդր-
ուածք իմ առաջի քո տր. ըստ բանի
քում իմաստուն արա զիս: Մտցեն



աղօթք

( Պ...է... ... )

աղօթք իմ առաջի քո Տր . եւ բանի՛ քով փրկեա զիս ։ Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո , յորժամ ուսուցանես ինձ զարդարութիւնս քո ։ Խօսեսցի լեզու իմ զբանս քո . զի ամ պատուիրանք քո արդարութիւն են ։ Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս . զի զպատուիրանս քո ընտրեցի ։ Ցանկացայ փրկութե քում Տր . եւ օրէնք քո խօսք իմ էին ։ Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ . եւ իրաւունք քո օգնեսցեն ինձ ։ Տուր զօրութի ծառայի քոյ . կեցո՛ զորդի աղախնոյ քոյ . եւ արա՛ առ իս նշան բարութե . Տեսցեն ատելիք իմ եւ ամաչեսցեն . զի դու Տր օգնեցեր ինձ , եւ մխիթարեցեր զիս ։ Փառք Հօր եւ Որդւոյ եւ" ։

Մաղթանք ։

Անձն իմ ՚ի ձեռս քո է յամ ժամ . եւ ՚ի Տր խաչ քո յուսացեալ եմ . թագաւոր երկնաւոր՝ զառագմութի Տէց քոց բարեխօս ունիմ առ քեզ , որ երկայնամիտ ես առ ամենեսեան ,

մի՛

մի՛ անտես առներ զապաւինեալս ՚ի
քեզ, այլ պահեա՛ պատուականաւն և մեծ
խաչիւ քո ՚ի խաղաղութեան ։

Ես ասացի ՚ի վերինալ լինելն աւուրց իմոց. թէ գնացի ես ՚ի դրունս դժոխոց։ Թողի զամս յետին իմ, և ասացի՝ թէ այլ ոչ ևս տեսից զփրկութիւն յերկրին կենդանեաց. և ոչ ևս տեսից զմարդ բնակչօք խուռնք հանդերձ։ Պակասեցայ ես յազգատոհմէ իմմէ. այսուհետև թողի լքի զամս բղ կեանս իմ։ Ել գնաց՝ մեկնեցաւ յինէն հոգի իմ, որպէս զայն որ քակէ զտաղաւար. և եղէ ես որպէս զոստայն սատարագ՝ մերձ ՚ի հատանիլ։ Յաւուր յայնմիկ մատնեցայ ես յառաւօտէ որպէս ՚ի ձեռս առիւծու. այնպէս խորտակեաց մանրեաց զոսկերս իմ. զի յառաւօտէ մինչ ՚ի գիշեր մատնեցայ։ Որպէս ծիծառն՝ այնպէս ձայնեցի, որպէս զաղաւնի՝ այնպէս մնչեցի. զի նուաղեցան աչք իմ ՚ի տեսանելոյ։ Հայեցայ ՚ի բարձունս առ տէր Աստուած իմ, որ փրկեաց զիս.



(Գուլշէր Մատան)

զիս . և փարատեցոյց յինէն զցաւս անձին իմոյ: Տ՟ր մ՟ այսօրիկ պատմե_ ցաւ քեզ . զարթուցեր զանձն իմ, դարձուցեր զհոգի իմ . մխիթա_ րեցայ և կեցի: Ահա՛ 'ի խաղաղու_ թե՟ դարձաւ դառնութի՟ իմ . փրկե_ ցեր զանձն իմ, զի մի՛ կորեայց, և ընկեցեր յետոյ զամ՟ զմեղս իմ: Զի ո՛չ թէ որք 'ի դժոխս են, խոստովան անիցին առ քեզ. և ո՛չ մեռեալք օրհ_ նեսցեն զքեզ, և ո՛չ յուսասցին 'ի ճշմարտութ՟իս քո ամենեքեան, որք իջանեն 'ի դժոխս: Այլ կենդանիքս օրհնեսցուք զքեզ՝ տ՟ր . որպ՟ և ես այ_ սուհետև մանկունս ծնայց, որք պատմեսցեն զարդարութ՟իս քո տէր փրկութե՟ իմոյ: Ես ո՛չ ևս դադարեցից օրհնել զքեզ յօրհնութի՟ նոր զամ՟ ա_ ւուրս կենաց իմոց՝ յանդիման տա_ ճարիդ այ՟ : Փառք հօր և որ":

Աղբանք .

Յոյս կենդանու". Արդարասէր տ՟ր":

### Քարոզ.

Այլ եւ խաղաղութե՟ն զՏ՟ր աղա՟:

Վասն ՚ի վերուստ խաղաղութեա՟ն եւ փրկութեա՟ն անձանց մերոց՝ զՏ՟ր՟: Այլ եւ վ՟ն հիւանդիս այս տան որ յուսացեալ է կոչել զանուն Տ՟ն Ա՟յ՝ եւ զզօրութի՟ն նո՟ր ՚ի յօգնութի՟ն եւ ՚ի բժշկութի՟ն հոգւոյ եւ մարմնոյ իւրոյ. Ա՟յ զի ապրեսցի եւ կեցցէ, եւ վերըստին նորոգեսցի քահանայակին աղօթիւք ձերովք՝ եւ կարողութե՟ն Ա՟յ, զՏ՟ր՟: Զամենասրբուհի զա՟ծածինն՝ զմիշտ կոյսն մարիամ՝ հանդերձ ա՟մ ս՟րբովք, յիշելով զՏ՟ր աղա՟: Այլ եւ միա՟: Զանձինս մեր՟: Ողորմեա մեզ Տ՟ր՟:

### Աղօթք.

Տէր որ ողորմութե՟ քո բժշկես զբեկումն հոգւոց եւ մարմնոց մերոց, բժշկեա զա՟մ ախտս եւ զհիւանդութիւն հոգւոյ եւ մարմնոյ այս տան ծառայի քո. զի փառաւորեսցի ամենաս՟բ անուն քո. զի քո է ողորմել եւ կեցուցանել զա՟մ մեր: Այլ քեզ փառս մատու֊



(Կեղէր Մա[illegible])

տուցանեմք՝ Հօր և Որդւոյ՝ և Հոգ"։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ կեցո և ողորմեա։

Օրհնեա՛ Տր։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ"։

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։ Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և ի մեղաց իմոց սրբեա զիս։ Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. և մեղք իմ առաջի իմ են յամժամ։ Քեզ միայն մեղայ Տէր, և չար առաջի քո արարի։ Որպէս արդար եղիցիս ի բանս քո, և յաղթող ի դատել դատաստանի։ Անօրէնութեամբ յղացայ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ։ Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս և զծածկեալս իմաստութեան քո յայտնեցեր ինձ։ Ցօղեա յիս մշտկաւ, և սրբեցայց. լուա, և քան զձիւն սպիտակ եղէց։

եղէց • Լսելի՛ արա ինձ զցնծութի՟ և զուրախութի՟, և ցնծասցեն ոսկերք իմ՝ տառապեալք • Դարձո՛ զերեսս քո 'ի մեղաց իմոց • և զա՟մ անօրէնութի՟ս իմ քաւեա՛ յինէն ։ Սիրտ ս՟բ հաստատեա՛ յիս ա՟ծ, և հոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի իմում։ Մի՛ ընկենուր զիս տ՟ր յերեսաց քոց, և զհոգի քո ս՟բ մի՛ հաներ յինէն ։ Տո՛ւր ինձ ցնծութի՟ փրկութե՟ քոյ, և հոգւով պետութեան քոյ հաստատեա՛ զիս ։ Ուսուցից անօրինաց զճանապարհս քո • և ամբարիշտք առ քեզ դարձցին ։ Փրկեա՛ զիս յարենէ ա՟ծ ա՟ծ փրկութե՟ իմոյ • ցնծասցէ լեզու իմ յարդարութե՟ քում։ Տ՟ր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութի՟ս քո ։ Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք • բայց դու ընդ ողջակէզս իսկ ո՛չ հաճեցար • Պատարագ այ՟ հոգի խոնարհ • զսիրտ ս՟բ և զհոգի խոնարհ՝ ա՟ծ ո՛չ արհամարհէ ։ Բարի՛ արա տ՟ր կամօք քովք



սիո-

( [illegible] )

սիօնի. և շինեսցին պարիսպքն երուսաղէմի։ Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութե, ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս։ Փառք հօր և"։

## [illegible]. ՃՁ։

ո Ձայր բարձրում ողորմ խոստովանիմ առ քեզ ով զանմահ որդին. Թող ինձ ըզմեղս իմ և ողորմեա։ Տէր որ գթացար 'ի կինն քանանացի. գըթա և յիս խմեղաւորս և ող. Տէր որ դարձուցեր ըզմաքսաւորն 'ի գիտութի ճշմարտութե, դարձո և զիս ըզ մոլորեալս և ող։

Է ա Յիսուս և յարութի ազգի մարդկան Քս աստ. զհիւանդութի հոգւոյ իմոյ կենդանացո. որպէս երբեմն զեզեկիայն. Ո չարչարանս և ըզ մահ յանձն առեր կենդանատու ամենեցուն. զհիւանդութի հոգւոյ իմոյ առող_



( [illegible] )

առողջացո. որպ՟ երբեմն։ Առ քեզ ապա–ւինիմք. խորան եւ տաճար աստու–ծոյ բանին մարիամ մայր եւ կոյս. բարեխօսեա առ Ք՟ս Ա՟ծ անձանց մերոց:

Քարոզ:

Լուիցէ տ՟ր ձայնի աղաչանաց մերոց բարեխօսութ՟բ ս՟բ ա՟ծածնին, եւ իջա–նելոյ ՚ի վ՟ր մեր ողորմութ՟ե եւ գթու–թ՟ե տ՟ն ա՟յ. ամենակալ տ՟ր ա՟ծ մեր կեցուսցէ եւ ողորմեսցի: սրկ

Ընկալ տ՟ր զաղաչանս մեր բարեխօ–սութ՟բ ս՟բ ա՟ծածնին, անարատ ծնո–ղի միածնի որդւոյ քո, եւ աղաչանօք ա՟մ ս՟բց. լուր տ՟ր եւ ողորմեա, ներեա, քաւեա եւ թող զմեղս մեր. արժանա–ւորեա գոհանալով փառաւորել զ–քեզ ընդ որդւոյ եւ ընդ ս՟բյ հոգ՟ւ: քհ

Ես ասացի տ՟ր ողորմեա ինձ, բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ: Երանի որ խորհի զաղքատն եւ զտնանկն, յա–ւուր չարի փրկէ զնա տ՟ր:



Յա–

(Գիշեր ժամու)

Յակոբու առաքելոյն ՚ի կաթողիկեայց
թղթոյն է ընթերցուածս.

Խոստովա՛ն եղերուք միմեանց զմեղս, և աղօ՛թս արարէք ՚ի վր միմեանց, որպ զի բժշկեսջի՛ք. քանզի յո՛յժ զօրաւոր են աղօթք արդարոց յօգնականութիւն։ Եղիա՛յ մա՛րդ էր իբրև զմեզ չարչարելի՛. և յաղօթս եկաց, և ո՛չ անձրեւաց յերկիր զերիս ամս և զվեց ամիս։ և դարձեալ եկաց յաղօթս՝ և ետո՛ւն երկի՛նք զանձրև՝ և բուսոյց երկիր զպտուղ իւր։ Եղբա՛րք իմ, եթէ ոք ՚ի ձէնջ մոլորեսցի ՚ի ճանապարհէ ճշմարտութեն, և դարձուսցէ ոք զնա. գիտասցէ՛ զի որ դարձուսցէ զմեղաւորն ՚ի մոլորութեն ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր ՚ի մահուանէ, և ծածկեսցէ զբազմութիւն մեղաց.

Սղ՛ աղէ՛։ Տր մի՛ սրտմտութբ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութբ քով խրատեր զիս։ Ողորմեա՛ ինձ տր, զի հիւանդ եմ ես, բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։



(Գիշեր ժամու)

Աւետ. Լուսաւորչին ՅԷ ԿԻԷ որ բաւ Մարկ:

Ծերն մեր ՅԷ ԿԻ:

Կոչեաց առ ինքն զերկոտասանսն, և սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս. և տայր նոցա իշխանութիւն ՚ի վերայ այսոց պղծոց: Եւ պատուիրեաց նոցա զի մի՛ ինչ բարձցեն ՚ի ճանապարհ, բայց միայն գաւազան. մի՛ պարկ, մի՛ հաց, մի՛ պղինձ ՚ի գօտիս: այլ ագանել հողաթափս, և մի՛ զգենուցուք աւելի երկուս պարեգօտս: Եւ ասէր ցնոսա. յոր տուն մտանիցէք, անդէն օթեվանս կալջիք՝ մինչև ելանիցէք անտի: Եւ որ ոչ ընկալցին զձեզ և ոչ լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց ՚ի վկայութիւն նոցա: Եւ ելեալ քարոզէին՝ զի ապաշխարեսցեն. և դեւս բազումս հանէին՝ և օծանէին իւղով զբազում հիւանդս, և բժշկէին զնոսա:

Փոխ. ձէղ ՖԵ ՄԾ ԳԵ:

Հաւատամք ՚ի մի Աստուած Հայրն ամենակալ. յարարիչն երկնի և երկրի. և-



րև-

(Պօշէր Ճամոս)

րուեցելոց և աներևութից ։ Նա ՚ի
մի տ՟ր յ՟ս ք՟ս Որդին ա՟յ . ծնեալ յ՟այ
հօրէ միածին՝ այսինքն յէութենէ հօր ։
Ա՟ծ յ՟այ . լոյս ՚ի լուսոյ . ա՟ծ ճշմարիտ
յ՟այ ճշմարտէ ։ Ծնունդ և ոչ արա-
րած ։ Նոյն ինքն ՚ի բնութենէ հօր .
որով ա՟մ ինչ եղև յերկինս և ՚ի վ՟ր
երկրի . երևելիք և աներևոյթք ։
Որ յաղագս մեր մարդկան և վասն
մերոյ փրկութ՟ե իջեալ ՚ի յերկնից
մարմնացաւ մարդացաւ ծնաւ կատա-
րելապէս ՚ի մարիամայ ս՟բյ կուսէն
Հոգւովն ս՟բվ ։ Որով էառ զմարմին
զհոգի և զմիտ . և զա՟մ որ ինչ է ՚ի
մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք ։
Չարչարեալ, խաչեալ, թաղեալ .
յերրորդ աւուր յարուցեալ . ելեալ
՚ի յերկինս նովին մարմնով նստաւ
ը՟նդ աջմէ հօր ։ Գալոց է նովին մարմ-
նովն և փառօք հօր ՚ի դատել զկեն-
դանիս և զմեռեալս . որոյ թագաւո-
րութ՟ենն ոչ գոյ վախճան ։ Հաւատամք
և ՚ի ս՟բ Հոգին . յանեղն և ՚ի կատար-
եալն ։



( Պուէճէր Լուսնա )

եալն։ Որ խօսեցաւ յօրէնս և՛ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն ՛ի յորդանան. քարոզեաց զառաքեալսն. և բնակեցաւ ՛ի սուրբսն։ Հաւատամք և՛ի մի միայն ընդ հանրական և յառաքելական եկեղեցի։ ՛Ի մի մկրտութիւն. յապաշխարութիւն. ՛ի քաւութիւն և՛ի թողութիւն մեղաց։ ՛Ի յարութիւն մեռելոց. ՛ի դատաստանն յաւիտենից. հոգւոց և մարմնոց։ Յարքայութիւն երկնից, և՛ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդի. կամ էր երբեմն յորժամ ոչ էր սբ Հոգի։ կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին այ, և կամ զսբ Հոգին. և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք՝ զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի.

՛Ի սրբոյ լուսաւորչէն մերմէ ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս. երկիրպագանելով սբյ Երրորդութեն և միոյ ածու-



(Գիշէր փառա–)

թեն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն
սրբոյ։ Այժմ և միշտ և․․․

Քարոզ։

սրկ Նաև ևս խաղաղութեան զՏէր աղաչես-
ցուք, ընկալ կեցո և ողորմեա։
Ողորմեա Տէր։

քհ Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ
և Հոգւոյն սրբոյ. այժմ և․․․
Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմ․․․
Զ ձայն ճան տաս։
Շարական. Տէր։

ո Ով կենցաղոյս Հանապազորդ զկեա-
նս կածէ։ Արարչական անկեր թշնա-
մին ինձ յարուցանէ։ Նաւապետ
բարի լեր անձին իմոյ ապաւէն։

ժող Աղաչեցի ըզ բազում ողորմու-
թեան. և լուսոյ ձայնի խընդրու-
ծոց իմոց. զի նուաղեցան աչք իմ ի
տեսանելոյ. և յինէն փարատեցի-
ցես ամանս անձին իմոյ։ Զ թագաւո-
րեալք ի բարեբանեցէք. որ ի



( Գիրքեր ժամու )

յանձն էառ զմահ խաչին՝ և խափան
եաց ըզ մահու թագաւորութիւն. և
յին: Փութացի՛ր յօգնութիւն մե
ա̅ ծածկին. և աղաչեմ զաւ ի քէն
ըզ մարմնացեալդ բան նն տարածեալ.
զի յաշաւոր և խմբակից ամ գամբա
ռեամն նոցա պարգևեսցէ մեզ
ըզ կեանսն յաւիտենից:

Քարոզ:

Լուիցէ Տր ձայնի աղաչանաց մերոց սրկ
բարեխօսութեամբ սբ ածածնին. և ընկա
նելով ի վր մեր ողորմութեն և գթու
թեն ան այ. ամենակալ տր ած մեր
կեցուսցէ և ողորմեսցի:

Ընկալ տր զաղաչանս մեր բարեխօ: քհ

Տր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ
պակասեսցի: Օծեր իւղով զգլուխ
իմ, բաժակ քո որպս անապակ արբե
ցոյց զիս:

Յօհաննու առաքելոյն ի Կաթողիկէ այց
Ըզ Բոյն է ընթերցուածս:

Սիրելիք՝ եթէ սիրեսցուք՝ եթէ մեզ



(Պուէճէր [illegible])

ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խա-
բեմք. և ճշմարտուի՟ ՚ի մեզ ոչ գոյ։
Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս
մեր, հաւատարիմ է նա և արդա՛ր՝
առ ՚ի թողուլ մեզ զմեղս մեր, և սրբել
զմեզ յամ՟ անիրաւութենէ։ Եթէ ասի-
ցեմք՝ եթէ ոչինչ մեղաք, սուտ առ-
նեմք զնա. և բանն նր՟ ոչ է ՚ի մեզ։
Որդեա՛կք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի
մի՛ մեղիցէք. և եթէ մեղիցէ ոք, ու-
նիմք բարեխօս առ ա՟ծ զյ՟ք՟ս՟ զար-
դարն և զանարատ։ և նա՛ է քաւու-ի
մեղաց մերոց. և ոչ եթէ մերոցն մի-
այն՝ այլ ամ՟ աշխարհի։ Եւ յայսմիկ
գիտեմք՝ եթէ ծանեաք զնա, եթէ
զպատուիրանս նր՟ պահիցեմք։ Որ ա-
սիցէ՝ եթէ ծանեայ զնա, և զպատ-
ուիրանս նր՟ ոչ պահիցէ, սուտ է, և
ճշմարտութի ՚ի նմա ոչ գոյ։ Իսկ որ
պահէ զբան նր՟, արդարև ՚ի նմա՛ է
կատարեալ սէրն այ՟։ Այսուիկ ճանա-
չեմք՝ եթէ ՚ի նմա՛ եմք։ Որ ասիցէ
՚ի նմա բնակել, այնպէս պարտի գնալ՝
ոպ՟ նա՛յն գնաց։



( [illegible] )

Ողջ" ողջ"։ Ձայնիւ իմով ես առ տր կարդայի, ձայնիւ իմով առ ա͞ծ. և նայեցաւ առ իս. Յաւուր նեղութե իմոյ զա͞ծ խնդրեցի ձեռօք իմովք. և 'ի գիշերի առաջի ն͞ր ոչ խաբեցայ։

## ՍԷ. Պատմութիւն Յ͞Ի Ք͞Ի որ ըստ Ղուկ.
## Տ͞էրն մեր Յ͞Ս Ք͞Ս.

Եւ մտեալ շրջէր ընդ երիքով. և ահա՝ այր մի անուն կոչեցեալ զակքէոս. և նա էր մաքսապետ. և ինքն մեծատուն. և խնդրէր տեսանել՝ թէ ո՞վ իցէ յ͞ս, և ոչ կարէր 'ի բազմութենէ, զի կարճ էր հասակաւ. Եւ ընթացեալ յառաջս, ել 'ի ժանտաթզենին զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն իսկ անցանելոց էր. Իբրև եկն 'ի տեղին. հայեցաւ 'ի վեր յ͞ս և ասէ ցնա. զա՛կքէ փութա՝ էջ այտի, զի այսօր 'ի տան քում արժան է ինձ ագանել. փութացաւ և էջ՝ և ընկալաւ զնա ուրախութ͞բ. Իբրև տեսին ամենեքին, տրտնջէին և ասէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել.

Այն՝ եկաց զակքէոս՝ և ասէ ցՏր·
Տր՝ ահա զկէս ընչից իմոց տաց աղ-
քատաց. և եթէ զոք զրկեցի, հատու-
ցից չորեքկին: Ասէ ցնա Յս. Այ-
սօր եղև փրկութիւն տանս այսմիկ.
քանզի և սա որդի աբրահամու էր:
Զի եկն որդի մարդոյ խնդրել և
կեցուցանել զկորուսեալն:

Քարոզ:

սրկ Եւ ևս խաղաղութե զՏր աղաչ":
Վս ՚ի վերուստ խաղաղութե և փըր-
կութեան անձանց մերոց զՏր աղաչ":
Եւ ևս վս հիւանդիս այս անուն որ
յուսացեալ է կոչել զանուն Տն":

Աղօթք:

քհ Անսկիզբն Տծ՝ Տր Տբց, որ զմի-
ածին քո որդիդ առաքեցեր բժշկել
զամ ախտս հոգւոց և մարմնոց մերոց·
առաքեա զհոգիդ քո սբ, և սրբեա
զայս անուն ծառայս քո, և ազատեա
յամ մեղաց. զի ողորմած ես և գը-
թած: Եւ քեզ փառս մատուցանեմք՝
ընդ որդւոյ և ընդ սբյ հո":



(Գիշեր մասն)

Քարոզ։

Եւս և խաղաղութեան զտէր աղաչեսցուք, ընկալ կեցո և ողորմեա։ որկ

Օրհնեալ տր։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և"։ քհ

Ողորմեա ինձ այ ըստ մեծի ողոր"։

Զ ձայն [illegible]։

Շարական. Ը Ձ։

Մեղաք մինչև յերկինս և զպարտաւոր եղ ցամաքումըն քո շնորհեցաք ի մեզ. տր ըստ մեծի քում ողորմութեանդ ողորմեա մեզ։ Ինչպէս մինչ ի դրժողս ընկղմեալքս յանօրէնութեան մերում. տր յիշեա եղ գինս արեան որդւոյ քո և ողորմեա։ Հաւատացեալ ի մէնջ տր նր շամաւ խաչի քո զընդդիմամարտս և զաներևոյթ դաւաճանս. և մի տար յա պականութիւն զքո ժառանգութիւն։ ո

Սեղեկեցւոյն քեզ զմաղթեմ հայ ուաչմամբ սրտի իմոյ. որ վն իմ խոնար Երա



(Գիշերի Ժամոց)

նարհեցար ի յերկնից • յոյս կենդա-
նութեան և փրկութեան իմոյ տէր Որ
ի խաչին բարձեր զդատակնիք մա-
հու • տարածելով զբազուկս քո •
արձակեա և զիս ի կապանաց բան-
սարկուին • յոյս կե • Որ յամ ազգաց
երանեցար սրբուհի և կոյս մարի-
ամ • աղաչեմ զառ ի քէն զմարմնա-
ցեալն տէր • ապրեցուցանել զմեզ
ի սպառնալեաց գեհենոյն •

Քարոզ •

սրկ Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց
բարեխօսութբ̄ սբ̄ ածած"•

քհ Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօ"։

Բարձր առնեմ զքեզ տէր զի ընկալար
զիս • և ոչ ուրախ արարեր զթշնամին
իմ յիս • Տէր ած իմ՝ կարդացի առ
քեզ և բժշկեցեր զիս • տէր հաներ ՚ի
դժոխոց զանձն իմ • փրկեցեր զիս
յայնցանէ, որ իջանեն ՚ի գուբ •



(Գիշեր ժամու)

Պօղոսի առաքելոյն ՚ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս։

Եղբա՛րք՝ դուք տաճար Այ կենդան-
ւոյ էք. որպ ասաց Ած, թէ բնակե-
ցայց ՚ի նս, և գնացից ՚ի նս. և եղէց
նց Ած, և նոքա եղիցին իմ ժողո-
վուրդք. Վն որոյ ելէ՛ք ՚ի միջոյ նց
և մեկնեցարո՛ւք, ասէ Տր. և ՚ի պիղ-
ծըս մի՛ մերձենայք. և ես ընկալայց
զձեզ. և ես եղէց ձեզ ՚ի Հայր, և
դուք եղիջիք ինձ յուստերս և՛ ՚ի դըս-
տերս, ասէ Տր ամենակալ. Իսկ որով-
հետև զայս աւետիս ունիմք սիրե-
լի՛ք, սրբեսցուք զանձինս մեր յամն
պղծութենէ մարմնոյ և հոգւոյ. կատա-
րեսցուք զսրբութին ահին Այ.

Ալէ՛ ալէ՛. Երանի որ խորհի զաղ-
քատն և զտնանկն, յաւուր չարի փըր-
կէ զնա Տր.

ՍԲ. Աւետարանէս ՅԻ ՔԻ որ ըստ Մար.
Տըն մեր Յս Քս.

Գնա՛ց ընդ նմա. Երթայր և ժո-



ղո-

(Գ. եւեռէր ժամու)

ղովուրդ բազում զհետ նորա, և նեղէ
ին զնա: Եւ կին մի՝ էր ՚ի տեռատե-
սութեան արեան զերկոտասան ամ, և
յոյժ վշտացեալ ՚ի բազում բժշկաց,
և ծախեալ զինչս իւր զամենայն, և չէր
ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրա-
ցեալ: Որպէս լուաւ զՅիսուսէ, եկն ՚ի
մէջ ամբոխին յետոյ՝ և բուռն եհար
զհանդերձէ նորա: քանզի խորհէր ՚ի
միտ, թէ միայն մերձեցայց ՚ի հան-
դերձս նորա՝ փրկեցայց: Եւ վաղվաղա-
կի ցամաքեցաւ աղբիւր արեան նորա:
և գիտաց ՚ի մարմին իւր՝ թէ բժշկե-
ցաւ ՚ի տանջանացն: Եւ անդէն վաղ
վաղակի՝ գիտաց Յիսուս յանձն իւր զզօ-
րութիւն որ ել ՚ի նմանէ, դարձաւ
յամբոխն և ասէ. ո՞վ մերձեցաւ ՚ի
հանդերձս իմ: Եւ ասեն ցնա աշա-
կերտքն. տեսանես՝ զի ամբոխդ նե-
ղէ զքեզ, և ասես թէ՝ ո՞վ մերձեցաւ
՚ի հանդերձս իմ: Եւ շուրջ հայէր
տեսանել՝ թէ ո՞ զայն արար: Եւ կինն՝
զարհուրեալ և դողացեալ վասն որոյ


գաղտն

գամղոն արար․ քանզի գիտէր զինչ եղև նմա։ Եկն՝ անկաւ առաջի նր̃, և ասաց զա̃մ իրսն ստուգութե̃։ Յս̃՝ ասէ ցնա․ դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ․ երթ՝ ի խաղաղութի, և եղիջիր ողջ ՝ի տանջանաց քոց։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութե̃ զտ̃ր աղա̃։ սրկ

Վս̃ ՝ի վերուստ խաղաղութե̃ և փր-կութե̃ անձանց մերոց զտէր աղա̃։

Եւ ևս վս̃ հիւանդիս այս անուն որ յուսացեալ է կոչել զանուն տն̃։

Քահն։

Տ̃ր մեծ և սքանչելագործ․ որ պա-հես զուխտս քո, և տաս զողոր-մութի սիրելեաց քոց, և զթողութի մեղաց ՝ի ձեռն միոյ որդւոյ քո յի̃ քի̃․ որ նորոգեաց զմեզ ՝ի մեռելուէ մե-ղաց մերոց։ Դու ես որ լուսաւոր առնես զկոյրս, և կանգնես զանկեալս․ Դու հաներ զմեզ ՝ի խաւարէ, և ՝ի ստուերաց մահու․ ասելով ցկապեալս՝ թէ ելէք, և որք ՝ի խաւարին՝ թէ յայտ- քհ



(Գիշէր Լուանա)

յայտնեցարուք․ յորս ծագեաց լոյս
գիտութե՟ օծելոյ քո, որ եկն երևե-
ցաւ յերկրի, և ընդ մարդկան շրջե-
ցաւ․ և որք ընկալան զնա, ետ նոցա
իշխանութի՟ որդիս Այ՟ լինել։ Դու Տ՟ր՝
փրկական աւազանին վերստին ծնըն
դեամբն զորդեգրութի՟ մեզ շնորհե-
ցեր, և հաղորդս արարեր զմեզ ս՟բ
անուանն քո։ Դու ինքն Տ՟ր Ա՟մ՝ նայեա՛
յայս անուն ծառայ քո, զի փրկեալ ՚ի
մեղաց, եղիցի արդարացեալ ՚ի քեզ
կնքեցեալ զՏ՟ր մեր Յ՟ս Ք՟ս։ Զի ողոր
մած և մարդասէր Ա՟ծ ես, և քեզ
վայելէ"։

---

Քարոզ։

սրկ Եւ ևս խաղաղութե՟ զՏ՟ր աղաչես-
ցուք, ընկա՛լ կեցո՛ և ողորմեա՛։

Օրհնեա՛ Տ՟ր։

քհ Օրհնութի՟ և փառք հօր և որդւոյ և
հոգւոյն ս՟բյ․ այժմ և"։

Ողորմեա՛ ինձ Ա՟ծ ըստ մեծի ողոր-
մութե՟ քում․ ըստ բազում գթութե՟


քում

([illegible])

քում՝ քաւեա՛ զանօրէնութիւն իմ։
Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմ-
մէ. և 'ի մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս։
Զանօրէնութիւն իմ ես ինքն գի-
տեմ. և մեղք իմ առաջի իմ են յամ-
ժամ։ Քեզ միայն մեղայ տէր, և չար
առաջի քո արարի։ Որպէս արդար եղի-
ցիս 'ի բանս քո, և յաղթօղ 'ի դա-
տել գաս։ Անօրէնութեամբ յղացայ, և 'ի
մեղս ծնաւ զիս մայր իմ։ Դու տէր
զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս և
զծածկեալս իմաստութեան քում յայտ՛։

զփոխն ըստն ասա՛։

Շարական. ՃԿ.

Յամ ժամ աղաչանք իմ այս է տէ՛ր Ո
'ի մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս տէր։
Յանցանաց իմոց զարհուրի միտս
իմ. աղաչեմ ըզգթեղ թո՛ղ ինձ տէր։
Արտասուաց իմոց մի՛ լռեր տէ-
ր. զի պանդուխտ եմ ես յանցաւոր
երկրի։

 Ան

օրհ Անմահ Թագաւոր որ կամիս ըզ-
կեանս ամ մարդկան որք կարդան
առ քեզ․ լուր աղաչանաց մերոց՝ և
նորոգեա հոգւով գիտութեան․ Որ
զամժամանակեայ ըզգայսն բարձեր
ի մարմնոյն եղև կենաց․ մեծ շնորհենաւոր
ցուցանելով նորա զհոգևորական
առողջութիւն․ լուր աղ․ Անխափան և
բարերգութ՝ ․ բարեխօսութեամբ
սրբուհոյ անարատ մօր քո և կու-
սի․ լուր․

Յորդ․

սրկ Զածածինն և զամ սբս բարե-
խօս արասցուք առ Հայր յերկինս,
զի կամեցաւ ողորմեսցի և գթասցէ
կեցուսցէ զարարածս իւր․ ամենա"։
քհ Ընկալ տր զաղաչանս մեր բարեխօս"։
Ած յօգնել ինձ նայեա, և տր յըն-
կերել ինձ փութա։ Ամաչեսցեն և
յամօթ լիցին որ խնդրեին զանձն
իմ․ դարձցին յետս և ամաչեսցեն
որք խորհէին ինձ չար․ 

### Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է ընթերցուածս.

Աղաչեմ զձեզ ես որ կապեալս եմ ՚ի Տ՟ր, արժանի գնալ կոչմանն յոր կոչեցարուք. ամ՟ խոնարհութ՟բ, եւ հեզութ՟բ, եւ երկայնմտութ՟բ՝ անսալ միմեանց սիրով. փութալ պահել զմիաբանութ՟ի հոգւոյն յօդիւ խաղաղութ՟ե. մի մարմին՝ եւ մի հոգի. որպ՟ եւ կոչեցարուք ՚ի մի յոյս կոչման ձերոյ. Մի է Տ՟ր, մի հաւատք, մի մկրտութ՟ի. մի Ա՟ծ, եւ Հայր ամենեցուն, որ ՚ի վերայ ամենայնի, եւ ընդ ամենեսին, եւ յամենեսին ՚ի մեզ. Իւրաքանչիւր ումեք ՚ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգեւացն Ք՟ի.

Ալէլուիա ալէլուիա.

Դատ արա ինձ Տ՟ր՝ զի ես յանբծութ՟ե իմում գնացի, ՚ի Տ՟ր յուսացայ զի մի՛ եղէց հիւանդ.



([illegible])

Ելեալ անտի յի՟ գնաց ՚ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի։ Եւ ահա՛ կին մի քանանացի ՚ի սահմանաց անտի նոցա՝ ելեալ, աղաղակէր եւ ասէր. ողորմեա՛ց ինձ տր՟ որդի Դաւթի, դուստր իմ՝ չարաչա՛ր դիւահարի։ Եւ նա ո՛չ ետ նմա պատասխանի։ Եւ մատուցեալ աշակերտքն նր՟՝ աղաչէին զնա եւ ասէին. արձակեա՛ զնա՝ զի աղաղակէ զհետ մեր։ Նա պատասխանի ետ եւ ասէ. ո՛չ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի։ Եւ նա մատուցեալ, երկի՛ր պագանէր նմա եւ ասէր. տր՟՝ օգնեա՛ ինձ։ Պատասխանի ետ նմա եւ ասէ. ո՛չ է բարւոք առնուլ զհա՛ց մանկանց՝ եւ արկանել շանց։ Եւ նա ասէ. այո՛ տր՟, քանզի եւ շո՛ւնք կերակրին ՚ի փշրանաց անկելոց ՚ի սեղանոյ տեառն իւրեանց։ Յայնժամ պատասխանի ետ նմա յս՟, եւ ասէ. ո՛վ կին դու՝



( [illegible] )

մեծ են հաւատք քո, եղիցի՛ քեզ՝ որպէս կամիս ։ Եւ բժշկեցաւ դուստր նորա ՚ի նմին ժամու ։

Քարոզ ։

Եւ ևս խաղաղութեան զտր աղա"։ սրկ

Վասն ՚ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց զտր ա"։ Եւ ևս վասն հիւանդիս այս անուն որ յուսացեալ է կոչել զանուն տն և"։

Մաղթ ։

Բարերար և մարդասէր տր՝ որ զամ հիւանդութիս և զամ ախտս բժշկես։ բժշկեա՛ զայս անուն ծառայ քո ։ յարո՛ զսա ՚ի մահճաց ցաւոց ։ ողջ արա՛ ողորմութբ և գթութբ քո ։ փարատեա՛ ՚ի սմանէ զամ տկարութի և զհիւանդութի ։ զի յարուցեալ քո կարող ձեռամբ, ծառայեսցէ քեզ հանդերձ ամ գոհութբ ։ Զի դու ես ամ՝ ամողորմութն և կեցուցիչ. և քեզ մեր տուցանեմք զփառս Հօր և Որդւոյ և Հոգ"։ քհ

Կարգաւ։

որկ Եւ ես խաղաղութեն զոր աղաչես-
ցուք, ընկալ կեցո եւ ողորմեա։

Օրհնեալ տէր ։

քհ Օրհնութիւն եւ փառք հօր եւ որդւոյ եւ
հոգւոյն սրբոյ․ այժմ եւ միշտ"։

Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ողորմ"։

զՓոխն ըստն ասա։

Շարական․ ջձ։

ո Օ անապական ըղհոգեւոր ըղդան-
ձըն յապականմանցու կենցաղըս ծա-
խեցի․ այլ առ քեզ միայն պաղատիմ
բարերար փրկիչ խնայեա ի մեղու-
ցեալ ծառայս։ Ոզանկ հոգւոյ իմոյ
քակտեցի եւ եղէ անբարենակ որթ․
այլ առ․ Աստուածոց եղէ ես ոչ պար-
տուենի, պտղաբերոյ ոչ ձիթենի․
այլ անյի շաչար եւ անխափան փրկիչ
խնայեա ինձ ։

Էստ Ճառաչեցի զանկարելի ըղ հեծութին
առ բարերգութեն տըր ծ․ եւ լուեալ ինձ



(Գրեթէ մաքուր)

ի՝ լեռնէ մեծ խուրձ. և եհան ըզ-
կեանս իմ յապականութենէ: Ոչնչեր-
եաց ըզ մահու կարողութիւն՝ որ
խաչեցաւ վասն մեր. և յարեաւ ի
մեռելոց որպէս յառաջն նոյնի կամօք՝.
փրկելով ըզ կեանս: Ոստուցեալ է տէր
որ ծնաւ ի մշտ կուսէն ի փրկութիւն
ազգի մարդկան՝. լուսաւորելով ըզ
տիեզերս ի գիտութիւն ճշմարտութեան.
և բարեբանեմք ըզ նորա բարեգթու-
թիւն: Զանարատ տն օրհնեսցուք
զաստուածածինն՝ որ կոյս մնաց յետ ծը-
նընդեանն՝. և տարաւ յորովայնի
զանտանելին ամենեցուն զհամաբնա
կիցն հօր և ամենասուրբ հոգւոյն:

Քարոզ:

Սէ զաստուածածինն և զամենասուրբս բարե″: սրկ
Ընկալ տէր զաղաչանս մեր բա″: քհ
Ցնծացէ՛ք արդարք ի տէր՝ ուղղոց
վայելէ օրհնութիւն, խոստովան եղե-
Բ  րուք

րուք տն օրհնութ. տասնաղեաւ սաղ
մոսարանաւ սաղմոս ասացէք նմա։
Օրհնեցէ՛ք զտր յօրհնութի նոր զի
բարւո՛ է, սաղմոս ասացէք նմա օրհ-
նութեամբ։

Պօղոսի առաքելոյն 'ի Հռովմայեցւոց" թղթոյն
է ընթերցուածս։

Եղբա՛րք՝ պարտ է մեզ որ կարօղս եմք՝ զտկարութի տկարացն բառնալ. և մի՛ անձանց և եթ հաճոյ լինել: այլ իւրաքանչիւր ոք 'ի մէնջ ընկերին հաճոյ լիցի 'ի բարիս՝ վասն շինութե։ Քանզի և քս ոչ եթէ անձին հաճոյ եղև, այլ որպ և գրեալ է. նախատինք նախատչացն քոց անկան 'ի վր իմ: բայց որ ինչ գրեցաւն, 'ի մեր վարդապետութի գրեցաւ. զի համբերութ և մխիթարութե գրոց զյոյսն ընկալցուք։ Այլ ած համբերութե և ամ մխիթարութե՝ տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ յի քի. զի միաբանութբ 'ի մի բերան՝ փառաւո՛ր առնիցէք զած և զհայր տն մերոյ յի քի։



(Գիշէր Ժամու)

քն: վն որոյ ընկալարուք զմիմեանս, որպ և քս ընկալաւ զձեզ 'ի փառս այ: Ալէ" ալէ": Ած յանուն քում կեցո զիս, և 'ի զօրութե քում իրաւ ա":

## ԺԷ Կիւրակէ ՅԵ ԲԵ որ լինի Գ...":

Տրն մեր Յս Քս:

Ասէ ցնս․ ով է 'ի ձէնջ՝ որոյ իցէ բարեկամ, և երթիցէ առ նա 'ի մէջ գիշերի, և ասիցէ ցնա․ բարեկամ՝ տուր ինձ փոխ երիս նկանակս․ զի բարեկամ իմ եկն առ իս յուղւոյ, և ոչինչ ունիմ դնել առաջի նր: Եւ նա 'ի ներքուստ տայցէ պատասխանի և ասիցէ․ մի աշխատ առներ զիս, զի դուրքդ փակեալ են, և մանկունքս ընդ ինև կան յանկողնի․ ոչ կարեմ յառնել և տալ քեզ: Ասեմ ձեզ, եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա վասն բարեկամութեն, սակայն վն ժտութեն յարուցեալ տացէ՛ նմա՝ զինչ և պիտոյ իցէ: Եւ ես՝ ասեմ ձեզ․ խնդրեցէք՝ և տացի՛ ձեզ, հայցեցէ՛ք՝ և



գտ

գտջիք, բախեցէք՝ և բացցի ձեզ. զի ամ որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա։ Ո՛ ոք ՚ի ձէնջ հայր՝ խնդրեսցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկանն՝ օձ տայցէ նմա։ և կամ խնդրեսցէ ձու, մի թէ կարիճ տայցէ նմա։ Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ ևս առաւել հայր ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ, որ խնդրեն ՚ի նմանէ։

Քարոզ։

սրկ Եւ ևս խաղաղութե զՏր աղա"։
Վն ՚ի վերուստ խաղաղութե և փրկութե անձանց մերոց՝ զՏր աղա"։
Եւ ևս վն հիւանդիս այս անուն որ յուսացեալ է կոչել զանուն Տն"։

Աղօթք։

քհ Ողորմողորմ և բարերար Տր՝ որ զօրացուցեր զմեզ ՚ի ձեռն սրբց առաքելոցն՝ քահանայական աղօթիւք ըղ հիւանդս բժշկել. աղաչեմք զքեզ,



շնոր-

(Կնքէր [illegible])

շնորհեա բժշկութի և փրկութի այս անուն ծառայիս քո. փարատեցո զամ հիւանդութիս, և սրբեա զաղտեղութիս հոգւոյ և մարմնոյ սորա մարդասիրութբ քոմ: Նաև քեզ փառք և իշխանութի և պատիւ, այժմ և":

Քարոզ:

Նաև ևս խաղաղութե զտր աղաչեսցուք, ընկալ կեցո և ողորմեա: որկ

Օրհնեալ տր:

Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբյ. այժմ և": քհ

Ողորմեա ինձ այ ըստ մեծի ողոր":

Շարական. Ճկ:

Քրիստոս այ ծ մատուծոց. ողո-րմեա: Նորէնուբ ի մեղս երկնեաց զիս մայր իմ. աղաչեմ փրկիչ ողո-: Կ իրաւորեալ մեղք անկանիմ առ քեզ փրկիչ. մի անտես առներ. ողո: ո



Օ ե-

(Պուրշէր Մ...)

Ձաւ Ո՛ղեկիայն քեզ մա՛ղթեմ փր-
կիչ. որ կենարար բանիւ քո լու-
ծեր զերկունս մահու. փարատեա՛
և զիմ զհիւանդութիս. յոյս կենդա-
նութեն մեր կեցո ըզմեզ: Որ անմա
հարար քո մեռելութեն աւերելով
ըզդրունս դժոխոց մեռուցեր ըզ
մահ. կենագործեա և զիս զմեղօք
ըզմեռեալս. յոյս: Մաքուր և ան-
բիծ կոյս յետ ծննդեան. որ
մարմնով ծընար զարձակօղն ի կապից
մահու. բարեխօս լեր վասն անձանց
մերոց փրկել ի սպառնալեաց գեհե-
նոյն:

Քարոզ:

սրկ Լուիցէ տր ձայնի աղաչանաց մե՛:
քհ Ընկա՛լ տէր զաղաչանս մեր բարե՛:
Յարիցէ ած և ցրուեսցին թշ-
նամիք նր, փախիցեն ատելիք նր
յերեսաց նորա:



( Կիրակէ մաղա- )

Պօղոսի առաքելոյն ՚ի Հռովմայեցւոց թղթոյն
է ընթերցուածս ։

Եղբարք՝ աղաչեմ զձեզ գթութեամբն
Այ՝ պատրաստել զմարմինս ձեր պա-
տարագ կենդանի, սուրբ, հաճոյ Այ, ըզ
խօսուն պաշտօնդ ձեր։ Եւ մի կերպա-
րանիք կերպարանօք աշխարհիս այսո-
րիկ. այլ նորոգեցարուք ՚ի նորոգու-
թի մտաց ձերոց, առ ՚ի քննել ձեզ
զայն, և եթէ զինչ են կամքն Այ,
բարին և հաճոյն և կատարեալ։
Զայս ասեմ շնորհօքն Այ որ տուեալ
են ինձ ամի որ է ՚ի ձեզ, մի՛ առա-
ւել ինչ խորհել քան զարժանն խոր-
հելոյ. այլ ՚ի խորհելն զգաստանալ
իւրաքանչիւր, որպէս բաժանեաց Ած
չափ հաւատոյ ։

Ալէ՛՛ ալէ՛՛ ։ Զի՞ բարի կամ զի՞ վայե-
լուչ, զի բնակին եղբարք ՚ի միասին։
Որպէս իւղ զի իջանէ ՚ի գլուխ և ՚ի մո-
րուսն Ահարոնի, ՚ի մորուացն իջա-
նէ ՚ի գրապանս զգեստու նր ։

Տէրն մեր Յս Քս:

Պատասխանի ետ Յս և ասէ ցնոսա. ե-
թէ ունիցիք զհաւատս Այ, ամէն
ասեմ ձեզ, որ ոք ասիցէ լերինս այս-
միկ՝ բարձիր և անկիր 'ի ծով, և ոչ
երկմտիցէ 'ի սրտի իւրում, այլ հաւա-
տայցէ թէ զոր ասէն լինի, եղիցի՛
նմա զոր ինչ և ասիցէ: Վն այսորիկ
ասեմ ձեզ. զամենայն ինչ վասն որոյ
աղօթս արարեալ խնդրիցէք, և հա-
ւատայցէք թէ առնուք, եղիցի ձեզ:
Եւ յորժամ յաղօթս կայցէք, թո-
ղուցուք եթէ ունիցիք ինչ զումե-
քէ. զի և Հայրն ձեր որ յերկինս է,
թողցէ ձեզ զյանցանս ձեր:

Քարոզ:

սրկ Եւ ևս խաղաղութե զՏր աղչ":
Վն 'ի վերուստ խաղաղութե և փրկութե անձանց մերոց զՏր աղչ":
Եւ ևս վն հիւանդիս այս անուն որ յուսացեալ է կոչել զանուն տն":



Եւ ըն-

([illegible])

## Աղօթք ։

Տէր Աստուած մեր՝ որ նստիս 'ի վերայ քերովբէից, և հայիս յանդունդս․ հայեաց յայս անուն ծառայս քո 'ի բարձրութենէ սրբութեան քո, հեռացո 'ի սմանէ զամենայն ցաւս և զամենայն աղտեղութիւնս, և տուր սմա զառողջութիւն զամենայն աւուրս կենաց իւրոց։ Եւ քեզ փառք և իշխանութիւն" ։

---

## Քարոզ ։

Եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկա՛լ կեցո՛ և ողորմեա՛ ։

## Օրհնեա՛ Տէր ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և" ։

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողոր" ։

[illegible] ։

## Շարական ․ ԺԱ ։

Անկանիմ առաջի քո և խնդրեմ ըզթողութիւն յանցանաց իմոց՝ ․ մի՛ անտես առներ հա՛յր զաղաչանս իմ։ Աղաղակեմ ընդ մաքսաւորն․ և հեծեծեմ զար-

 տաս

տասուս ինձ առաջի քո որպէս պոռնիկն. ամն. Յաներևոյթ թշնամւոյն պարտեցոյ. և ի դաղտնի նետից բանսարկուին վիրաւորեցոյ. ամն:

Եա Յո՛յս կենդանութե՛ և փրկութե՛ իմոյ տ͞ր ա͞ծ իմ. յիշեա զիս որպէս երբեմն զեզեկիայն. և դարձո զհոգի իմ ի դրանց դժոխոց: Որ կամաւոր մահուամբ քո մեռուցեր ըզ մահ ք͞ս ա͞ծ. և լուսափայլ յարութե՛ քո կենդանագործեցեր զաշխարհս. կենդանագործեա և զի՛ս զմեղօք ըզմեռեալս: Առ քեզ ապաւինիմք ս͞բ ա͞ծածին. բարեխօսեա անդադար առ որդիդ քո և ա͞ծ մեր. փրկել ըզմեզ ի փորձութենէ և յա͞մ վտանգից մերոց:

Քարոզ.

արկ Ս͞բ զա͞ծածինն և զա͞մ ս͞բս բարեխօս արասցուք առ հայր ՚ի՛:

քհ Ընկա՛լ տ͞ր զաղաչանս մեր բարեխօ՛:

 Որ

(Գեղեցիկ մատեան)

Որ բնակեալն է յօգնութիւն բարձրե-
լոյն, ընդ հովանեաւ այ յերկինս
հանգիցէ։

Յօհաննու առաքելոյն ի Կաթուղիկեայց
թղթոյն է ընթերցուածս.

Եւ դուք օծութիւնք ունիք առ ի
սրբոյն, եւ գիտէ՛ք ամենեքին։ Ոչ
գրեցի ձեզ՝ եթէ ո՛չ գիտէք զճշմար-
տութիւն, այլ եթէ գիտէ՛ք զնա. եւ
եթէ՝ զի ամենայն սուտ ո՛չ է ի ճշմար-
տութենէ անտի։ Իսկ ո՞ իցէ սուտ, ե-
թէ ոչ՝ որ ուրանայ եթէ յիսուս չէ՛ քրիստոսն։
Նա իսկ է նեռն, որ ուրանայ զհայր
եւ զորդի։ Ամենայն որ ուրանայ զոր-
դի, եւ ո՛չ զհայր ընդունի. որ խոստո-
վանի զորդի, նա եւ զհայր ընդունի։
Դուք՝ զոր լուարուքն ի սկզբանէ՝
ի ձեզ բնակեսցէ. զի եթէ ի ձեզ
բնակեսցէ զոր ի սկզբանէն լուարուք,
եւ դուք յորդին եւ ի հայր բնակե-
ջիք։ Եւ այս են աւետիքն զոր աւե-
տարանեաց նա մեզ՝ զկեանսն յաւի-
տենականս։

Ալէ ալէ"։ Երանի՝ ումթողութին եղև մեղաց, և ծածկեցան ամ յան֊
ցանք նորա ։

ԱԻ. Ղուկասու ՅԷ ՎԲԷ որ ըստ Դաւ"։

Աղաչէր ոմն զնա 'ի փարիսեցւոյն՝ զի կերիցէ ճաշ ընդ նմա ։ և մտեալ 'ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ ։ Եւ կին մի էր 'ի քաղաքին մեղաւոր․ իբրև գիտաց թէ բազմեալ է 'ի տան փարիսեցոյն , բերեալ շիշ մի իւղոյ ազնուի․ կայր յետոյ առ ոտս նորա , լայր․ և արտասուօքն սկսաւ թանալ զոտս նր , և հերով գլխոյ իւրոյ ջրն ջէր ։ և համբուրէր զոտս նր , և օծա նէր իւղովն ։ Եւ տեսեալ փարիսե֊ ցոյն որ կոչեաց զնա , ասէր ընդ միտս իւր․ սա թէ մարգարէ ոք էր , ապա գիտէր թէ ով՝ կամ որպիսի ոք կին մերձենայ 'ի սա․ զի մեղաւոր է ։ Պատասխանի ետ յս՝ և ասէ ցնա , սիմոն՝ ունիմ ինչ ասել քեզ ։ և նա ասէ , ասա վարդապետ ։ Եւ ասէ․



եր֊

երկու պարտապանք էին ուրումն փո_
խատուի․ մին՝ պարտէր հինգ հարիւր
դահեկան, և միւսն յիսուն։ և իբրև
ոչ գոյր նոցա հատուցանել, երկոցունց
շնորհեաց․ արդ ասա՝ ո՛վ առաւել
սիրեսցէ զնա։ Ասէ սիմոն․ ինձ այս_
պէս թուի՝ եթէ որում զբազումն
շնորհեաց։ Եւ նա ասէ ցնա․ ուղիղ
դատեցար ։ Եւ դարձեալ 'ի կինն
կողմն, ասէ ցսիմոն․ տեսանես զայս
կին, մտի 'ի տուն քո ջուր ոտից իմոց
ոչ ետուր, իսկ սա՝ արտասուօք ի_
րովք եթաց զոտս իմ, և հերովք ի_
րով ջնջեաց։ համբոյր մի դու ոչ ե_
տուր ինձ, սա՝ ա՛ւասիկ յորմէ հետէ
մտեալ եմ, ոչ դադարեաց 'ի համբու_
րելոյ զոտս իմ։ իւղով զգլուխ իմ ոչ
օծեր, սա՝ իւղո՛վ անուշիւ օծ։ Վ̃ս
որոյ ասեմ քեզ․ թողեա՛լ լիցին սմա
մեղք իւր բազումք, զի յոյժ սիրեաց․
զի որում շատ թողուցու՝ շատ սիրէ,
և որում սակաւ՝ սակաւ։ Եւ ասէ
ցնա․ թողեա՛լ լիցին քեզ մեղք քո։



Եւ

Եւ սկսան որ բազմեալն էին ընդ-
նմա՝ ասել ընդ միտս իւրեանց. ո՞վ է
սա՝ որ զմեղս թողու։ Եւ նա՝ ասէ
ցկինն. հաւատք քո կեցուցին զքեզ,
երթ ՚ի խաղաղութի։

Քարոզ.

սրկ Եւ ևս խաղաղութ̃ե զտ̃ր աղ̃ա։
Վ̃ն ՚ի վերուստ խաղաղութ̃ե և փր-
կութեան անձանց մերոց զտ̃ր աղ̃ա։
Եւ ևս վ̃ն հի̂ւանդիս այս անուն որ
յուսացեալ է կոչել զանուն տ̃ն։

Աղօթ։

քհ Գոհանամք զքէն տ̃ր ա̃ծ մեր, որ
ես բժիշկ բարի՝ անձանց մերոց. որ
զհի̂ւանդութիս մեր բառնաս. որ քո
վիրօք ամենեքեան բժշկեցաք։ Որ հո-
վի̂ւդ ես բարի, և խնդրող մոլորեալ
ոչխարին։ Որ անձանց բեկելոց տաս
մխիթարութի, և կենաց մահացելոց։
Որ զողբիւր արեան տեռատեսին
քղանձի̂ւ հանդերձի քո բժշկեցեր։
Որ զդուստր քանանացւոյն ՚ի դժըն-
դակ դի̂ւացն ազատեցեր։ Որ զպար



տըս

( Պունշէ Լուսին )

տըս երկուց պարտապանացն շնորհե
ցեր. և մեղաւոր կնոջն զթողութի
ետուր: Որ զբժշկութի անդամալու
ծին պարգևեցեր հանդերձ թողու
թե մեղաց նր: Որ զմաքսաւորն բա
նիւ արդարացուցեր. և զաւազակն
'ի վերջին խոստովանութե նր ընկա
լար: Որ զմեղս այ բարձեր, և 'ի
խաչին բևեռեցեր: Զքեզ աղա
չեմք, և քեզ պաղատիմք, ներեա, և
թող զանօրէնութիս և զմեղս սորա
զկամայ և զակամայ, զգիտութե և
զանգիտութե, զոր 'ի գիշերի և զոր
'ի տուընջեան: Այո տր ած՝ լուր
ինձ մեղաւորիս 'ի պահուս յայսմիկ
վս այս անուն ծառայիս քո, անտես
արա երբև անյիշաչար ած զյանցանս
սորա զամ: Զբերան որ քոյին օրհ
նութեդ լցո. զշրթունս սորա բաց
ուր 'ի փառաբանութի անուանդ քում
տէր. զձեռս սր տարածեա 'ի գործս
պատուիրանաց քոց. զոտս սորա ու
յընթացս աւետարանին ուղղեա. և



(Կոչէր [illegible])

զամ̃ անդամս սորա և զմիտս պարփա կեա՛ քոյին շնորհօք ։ Դո՛ւ տ̅ր ա̅ծ մեր՝ որ 'ի ձեռն ս̅րց քոց առաքելոց ծանուցեր մեզ ասելով, թէ զոր կա_ պիցէք 'ի վ̅ր երկրի՝ եղիցի կապեալ յերկինս ։ և արձակեալ՝ եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողցին նմա ։ Դու որ̃ լուար եզեկիայ 'ի նեղութե̅ անձին իւրում 'ի ժամու մահուան նր̅, և ո՛չ անտես արարեր զաղաչանս նր̅ ։ լո՛ւր և ինձ մեղաւոր և անար_ ժան ծառայիս 'ի պահուս յայսմիկ ։ Քանզի դու ես տ̅ր՝ որ եօթանաս_ ներկի եօթն թողուլ՝ որք անկանին 'ի մեղս, հրամայեցեր քոյին մարդասի_ րութե̅դ ։ ապաշաւելով 'ի վ̅ր չարեաց մերոց, և խնդալով 'ի վ̅ր դարձի կո_ րուսելոց ։ Տ̅ր ա̅ծ մեր՝ որ մտեալ 'ի տուն զաքէի ասացեր, այսօր եղև փրկութի̅ տանս այսմիկ ։ դո՛ւ որ̃ մարդասէր և բազումողորմ փրկիչ արա՛ և այժմ փրկութի̅ տանս այսո_ րիկ ։ զի ո՛չ մեծութի̅ քո, նոյնպէս և

ողորմութի̃ քո ։ Եւ քեզ փառք և
երկրպագութի̃ · այժմ և միշտ"։

Յայնժամ կնքէ 'ի ժամանակին կալով ձեռն հիւանդին, և կնքէ 'ի ճակատն. և առաջերէցն էջեալ ըստ ջրաստեանն 'ի վր գլխոյ հի-ւանդին, և ասէ զաղօթս ։

Տէր ամենակալ՝ արարիչ ա̃մ արարա-ծոց. որ առաքեցեր յա̃շ զմիածին որդին քո, որ եկն և փրկեաց զտիե-զերս 'ի մեղաց. և բժշկեաց զա̃մ ախ-տս և զհիւանդութիս ժողովրդեան քում։ ընկղմեաց զմահ, և փոխեաց զմեզ 'ի կեանս և յանմահութի։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր ա̃ծ մեր, դիր զամենակարօղ աջ քո 'ի վերայ հիւանդիս այսորիկ, և բժշկեա զսա 'ի ցաւոց իւրոց։ Զի զքեզ փառա-ւորեացէ զբժիշկդ հոգւոց և մարմ-նոց, և խոստովան լիցի զահեղ ա̃ծու-թի̃ քո. զի քեզ վայել"։

Սաղաղարեան ամենեցուն ։

Տէր յաւիտենական, որ իջեր 'ի ստո-րին կողմ երկրի, և շնորհս ծա-

ւալեալ սփռեցեր յարարածս քո։
Առաքեցեր և զերանելի առաքեալսն քո, հրաման տալով նոցա՝ բժշկել զա̃մ ախտս և զհիւանդութիւնս ժողովրդեան քում։

Եւ արդ՝ ես ծառայս քո տկարս և անարժանս՝ դնեմ զձեռն իմ 'ի վ̃ր հիւանդիս այսորիկ, և կարդամ զահեղ ա̃ծուի̃ն քո, և խնդրեմ յառատ բարերարութենդ քումմէ։ Առաքեա՛ զամենակարող զօրութի̃ն քո, և բժշկեա՛ զախտս և զհիւանդութի̃ս ծառայիս քո այսորիկ՝ նշանաւ ամենայաղթ խաչի քո։ որով բարձեր զտկարութի̃ ազգի մարդկան, և դատապարտեցեր զթշնամին կենաց և փրկութե̃ մերոյ։ Զի դու ես ա̃ծ մեր, և բժիշկ հոգւոց և մարմնոց ծառայից քոց, և փարատիչ ա̃մ ախտաւորութե̃ց մերոց։ Եւ քեզ ընդ հօր ամենակալի՝ և ս̃բ հոգւոյդ ճշմարտի՝ վայելէ փառք իշխանութի̃ և պատի̃ւ։

այժմ և"։



([illegible])

## Քարոզ:

Ս՟ն հիւանդաց և ա՟մ վշտացելոց՝
աղաչեսցուք զփրկիչն մեր ք՟ս, զի ողոր
մեսցի ըստ մեծի ողորմութե՟ իւրում.
և բժշկեսցէ զախտս և զհիւանդու-
թիս հոգւոց և մարմնոց ծառայից
իւրոց. և կատարեալ առողջութ՟ հա-
սուսցէ զա՟մն 'ի մշտնջենաւոր և
յանախտ կեանս: Որ առաքեցաւ 'ի
հօրէ 'ի բժշկութի՟ ազգի մարդկան՝
միածին որդին ա՟յ, տ՟ր մեր և փրր-
կիչ յ՟ս ք՟ս. կեցուսցէ և ողորմեսցի.

## Աղթ՟ք:

Փարատեցո՛ զցաւս և բժշկեա՛ զհի-
ւանդութիս 'ի ժողովրդենէ քումմէ
տ՟ր ա՟ծ մեր. և շնորհեա՛ ամենեցուն
զկատարեալ առողջութիւն նշանաւ
ամենայաղթ խաչի՟ քո. որով բար-
ձեր զտկարութի՟ ազգի մարդկան,
և դատապարտեցեր զթշնամին կե-
նաց և փրկութեան մերոյ: Դու ես
կեանք մեր և փրկութի՟՝ բարերար
և բազումողորմ ա՟ծ. որ միայն կա-
րող



(Գիւլէր Ճաւու)

րող ես թողուլ զմեղս , և մերժել զախտս և զհիւանդութիւս 'ի մէնջ . որում յայտնի են պէտք կարեաց մերոց : Պարգևիչդ բարեաց՝ պարգևեա զառատ ողորմութի քո 'ի վր արարածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից . յորոց հանապազ փառաւորեալ գովի ամենասբ Երրորդութիւն : Այժմ և միշտ և" :

Քարոզ :

որկ Խնդրեսցուք հաւատով միաբանութե 'ի տնէ՝ զի զողորմութե զշնորհս իւր արասցէ 'ի վերայ մեր : Տրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի :

Կեցո տր :

Աղօթք :

քհ Թագաւոր խաղաղութե օգնական և փրկիչ անձանց մերոց՝ քս աձ մեր : Պահպանել պահեա զժողովուրդս քո ընդ հովանեաւ սբ և պատուական խաչիդ քո 'ի խաղաղութե . փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամեաց : Արժանաւորեա գոհութե փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սբյ հո" :

Հայր մր որ յեր" :

( Կէսգիշեր ժամու )

## Կանոն Խաչալուայ առնելոյ, որ կոչի Խաչահանգիստ։

Տէր՝ մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի բարկութեամբ քով խրատեր զիս։ Ողորմեա ինձ Տէր զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։ Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու Տէր՝ մինչև յերբ։ Դարձ Տէր և փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէր՝ ըստ ողորմութեան քում։ Զի ո՛չ ոք է՝ որ ՚ի մահու յիշէ զքեզ. կամ ՚ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։ Աշխատեցայ ես ՚ի հեծութեան իմում. լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։ Խռովեցաւ ՚ի սրտմտութենէ ակն իմ. և մաշեցայ ես ՚ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։ ՚Ի բաց կացէք յինէն ամենեքեան. որք գործէք զանօրէնութիւն։ Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ. լուաւ Տէր աղօ-

թից իմոց, և որ զխնդրուածս իմ
ընկալաւ։ Ամաչեսցեն և խռովեսցին
յոյժ ամ թշնամիք իմ․ դարձցին յետս
և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և
խռովեսցին ․

Տարաչան ․

Ապաւինեցուք ի խաչ քո արարիչ յա-
ւիտենից․ որ ետուր մեզ պահապան
յաղթող ընդդէմ թշնամւոյն․ աղա
չեմք սովաւ փրկիչ պահպանեա զան
ձինս մեր ։ Բարձրեալ թագաւոր
որ վասն մեր ելեր ի խաչ․ և բարձեր
սովաւ զյանցանս նախաստեղծին ա
դամայ․ աղա ։ Դրոշմ սբ հաւատոյ
և փայտ կենաց մարդկան յուսոնեալ․
զոր տեսեալ սատան պղծոյ կործանե
ցաւ անկանգնելի․ աղ․ Դողացաւ
թշնամին ընդ յայտնիլ սբյ խաչին․
և ի յահէ փառաց նր կործանեցաւ
յանդունդս երկրի․ աղ․
Մեղաք մինչև յերկինս և զարդար


ըղ

( Խաչհանգիստ )

ընդ ցասումըն քո շարժեցար ի մեզ.
տէր ըստ մեծի քում ողորմութեանդ
ողորմեա մեզ: Իջաք մինչ ի դըժոխս
ընկղմեալք յանօրէնութեան մերում.
տէր յիշեա ընդ գինս արեան որդւոյ քո
եւ ողորմեա:  Հալածեա ի մէնջ տէր
նըշանաւ խաչի քո զընդդիմամարտն և
զաներևոյթ գազանն. եւ մի տար յա-
պականութիւն զքո ժառանգութիւն:
Փառք հօր և": Տաճար լուսոյ անըստ
ուերին և առագաստ անճառ բա-
նին. որ ընդ նախնոյ մօրն եւայի բար
ձեր զանէծսըն տըրտմալի. հայցեա
յորդւոյ քո միածնէ հօր հաշտութըն
միջնորդի. բառնալ ի մէնջ ընդ
խռովութի և տալ զոգւոյ զխաղա-
ղութիւն.
Այժմ և միշտ և": Երկինք ցնծային
և երկիր ուրախանայր. քանզի փըր
կիչ ցուցաւ տէր խաչիւ և լուսատու
տիեզերաց. աղ:

Ձայն տ՟ն ՚ի վ՟ր ջուրց, և ա՟ծ փառաց որոտաց, և տ՟ր յինքն ՚ի վ՟ր ջուրց բազմաց։ Ձայն տ՟ն զօրուե՟ց, և ձայն տ՟ն մեծ վայելչութե՟ց ։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՍ ՚Ի ՉՈՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵՆԷՍ ։

Եւ ասեն արք քաղաքին ցեղիսէ. ահաւասիկ բնակութ՟ի քաղաքիս բարի՛ է, ո՟պ և տէրդ իմ տեսանէ. և ջուրքս չար, և երկիրս անզաւակ։ Եւ ասէ եղիսէ. առէք առ իս կուժ մի նոր, և դիք այդր։ և բերին առ նա։ և ել եղիսէ յակունս ջուրցն, և արկ անդր աղ և ասէ՝ այսպ՟ս ասէ տ՟ր. բժշկեմ զջուրսդ զայդոսիկ, և մի՛ եւս լիցի անտի մահ և յանզաւակութ՟ի։ և բժշկեցան ջուրքն մինչև ցայսօր ըստ բանին եղիսէի զոր խօսեցաւ ։

Ս.ղէ" ողէ"։ Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան ։



Մէ։

(Խաչահանգիստ)

## ՄԵԾ ՇԱԲԱԹՈՒ ՅԵ ԿԻՐԱԿԷ որ ընդ Յօհան"։

Ի վերջնում աւուր մեծի տօնին, կայր յս՟ աղաղակէր եւ ասէր. եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս՝ եւ արբցէ։ որ հաւատայ յիս՝ ոպ՟ եւ ասեն գիրք, գետք յորովայնէ նր՟ բղխեսցեն ջրոց կենդանւոյ։ Զայս ասէր՝ վս՟ հոգւոյն զոր ընդունելոց էին որ հաւատային ՚ի նա։

### Քարոզ։

Աղաչեսցուք զմարդասէրն ած՟, որ է յոյս եւ ապաւէն անձանց մերոց. որ զամենայաղթ նշան սբ՟ խաչին շնորհեաց մեզ զէն անպարտելի ընդդէմ ներգործութեանց սատանայի. զի զամ՟ ինչ՝ յոր եւ մերձեսցի սա, սրբեսցէ. մանաւանդ զջուրս զայս. եւ շնորհեսցէ սոցա բժշկութի՟ ախտից, եւ փարատումն ցաւոց. ամենակալ տր՟ ած՟ մեր կեցուսցէ եւ ողորմեսցի։

### Աղօթք։

Տր՟ ած՟ ամենակալ՝ արարիչ ամ՟ արարածոց, որ զգեցար մարմին ըստ մե-

 րում

րում հողեղէն բնութեա , և'ի լուա_
ցումն մեղաց սրբիչ և մաքրիչ զՋուրս
կացուցեր . որ և'ի ձեռն մարգարէին
եղիսէի օրհնեցեր զՋուրն չարաշունչ
և մահաբեր . և այժմ տր բարերար՝
առաքեա զշնորհս հոգւոյդ սբյ 'ի
Ջուրս յայս , և օրհնեա ✱ աներևույթ
աջով քով , և զօրութբ ամենայաղթ
խաչի քո։ Տուր սմա շնորհս . զի ամե_
նեքին որք արբցեն 'ի սմանէ՝ եղիցի
նց 'ի բժշկութի ախտից՝ և'ի փարա_
տումն ցաւոց։ Օրհնեա տր ✱ զՋուրս
զայս զօրութբ սբ խաչի քո . զի հօտք
և խաշինք որք արբցեն 'ի նմանէ , ե_
ղիցի նց յանցաւուլի և'ի ծննդակա_
նուլի . Օրհնեա տր ✱ զՋուրս զայս
նշանաւ սբ խաչիս 'ի ձեռն քահա_
նայիս՝ և խնդրուածոց ժողովրդենս,
զի ուր ցօղեսցի 'ի տունկս և'ի բոյսս,
եղիցին անվնասելի 'ի ժանկոյ և'ի
Թրթրոյ՝ և յամ պատահարաց . և ա_
ռաւել ևս պտղաբերեսցին 'ի շահա_
ւէտութի ոգւոց մարդկան , և'ի



սպաս

սպաս պաշտաման քում։ Եւ գոհա-
նալով փառս մատուցանեմք քեզ Ը
Հօր և ընդ ամենասբ Հոգւոյդ ·
այժմ և՛ ։

Ամէն, ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա ։

Օրհնեսցի և սրբեսցի ջուրս այս
նշանաւ սբ խաչիւս, և սբ աւե-
տարանաւս, և աւուրս շնորհիւ,
յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն
սբյ ։ Երիցս անգամ ասա ։

Օրհնութի և փառք Հօր և Որդւոյ՛ ։
Սբ խաչիւս այս՛ ։ Պահպանիչ և՛ ։
Հայր մեր որ յերկ՛ ։

Ապա սբց ժամամուտէ՝ եւէ խաչալուածայն, Տա՛
և ասա Շարականն ։

Հեղմամբ արեան սրբոց վկայիցն ռ
հաշտեաց ընդ մեզ Քս․ և փրկեաց
յամ փորձութ։ Որք նահատակե-
ցան վասն քո Տէր․ վիրաւորեա-
լք յաղթեցին թշնամւոյն․ սոցին
աղաչանօք հաշտ։ Որք միացան ի սէր
ահա-

ահաւոր քո տրուեդ. և մատուցին զանձինս նուրբեանց պատարագ քեզ և զենումն. ամ:

## Անուն Հոգեհանգիստ
## Ասատարելոյ:

Երանի որ խորհի զաղքատն և զտնանկ. յաւուր չարի փրկէ զնա տր: Տր փրկէ զնա և կեցուցանէ. երանելի առնէ զնա 'ի վերայ երկրի. և ոչ մատնէ զնա 'ի ձեռս թշնամեաց իւրոց: Տր օգնական է նմա 'ի մահիճս ցաւոց իւրոց. զամ անկողինս նր դարձուցանէ 'ի հիւանդութէ նր: Ես ասացի տր ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ: Թշնամիք իմ ասացին ինձ չար. Երբ իցէ՝ զի մեռցի, և կորիցէ անուն նր: Մտանէր տեսանել զնանրութի, խօսէր 'ի սրտի իւրում, և ժողովէր զանօրէնութի յանձն իւր: Արտաքս ելանէր և զնոյն խօսէր. զի



նէն

նէն շնջէին ա̄մ թշնամիք իմ։ Խորհեցան չար ՚ի վր̄ իմ. բան անօրէնութե̄ եդին ՚ի վերայ իմ. Մի՛ թէ որ ննջիցէ, եւ այլ ոչ եւս յաւելուցու յառնել. քանզի եւ այրն խաղաղութե̄ իմոյ, յոր եւ ես յուսացայ։ Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց առնել ինձ խաբէութի̄։ Այլ դու տր̄ ողորմեա ինձ, եւ կանգնեա զիս. եւ ես հատուցից նց̄։ Յայսմ ծանեայց՝ թէ հաճեցար ընդ իս, զի մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ։ Այլ զիս յամբծութե̄ իմում ընկալար. եւ հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան։ Օրհնեալ տր̄ ա̄ծ իսրայէլի յաւիտեանս յաւիտենից. եղիցի եղիցի։

[illegible]

Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ ա̄ծ։ Ծարաւի է անձն իմ առ ա̄ծ հզօր եւ կենդանի. երբ եկից երեւեցայց երեսացդ ա̄յ։ Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ՚ի տը

ւէ եւ 'ի գիշերի. եւ այն զի ասէին ցիս
զօրհանապազ՝ թէ ո՞ւր է ած քո.
Զայս որպ յիշէի, տառապէր յիս
անձն իմ. քաջալերէի զի մտից ընդ
յարկաւ սքանչելեաց տանն այ.
Ի ձայն ցնծութե խոստովանութե, եւ
'ի ձայն բարեկենդանութե. Որդ՝
ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ըն-
դէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ած,
խոստովանեա՛ նմա՝ փրկիչ երեսաց
իմոց ած է. Անձն իմ յոյժ խռովե-
ցաւ. վս այնորիկ յիշեցի զքեզ յերկ-
րէն յորդանանու, 'ի հերմոնէ 'ի լեռ-
նէ փոքունէ. Խորք 'ի խորոց կարդա-
ցին առ քեզ, 'ի ձայն սահանաց քոց.
Ամենայն զբօսանք քո, եւ ալիք քո
անցին 'ի վր իմ. 'Ի տուէ պատուիր-
եաց տր զողորմութի իւր, 'ի գիշերի
զօրհնութի նորա. եւ աղօթք իմ առ ած
վն կենաց իմոց. Ասացի այ՝ ընդու-
նելի իմ ես. ընդէ՞ր մերժեցեր զիս,
ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի նեղել
թշնամւոյ իմոյ. 'Ի փշրել ոսկերաց



իմոց

իմոց նախատեցին զիս թշնամիք իմ.
յասել ցիս զօրհանապազ, թէ ու՞ր է
ա՟ծ քո ։ Ընդ՟ ընդէ՞ր տրտում ես
անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս.
յուսա՛ առ ա՟ծ, խոստովանեմ Նմա՝
փրկիչ երեսաց իմոց ա՟ծ է ։

Ալէլուիա ալէլուիա ։

Դա՛տ արա ինձ ա՟ծ, և իրաւ արա՛՛։
Փառք հօր և՛՛։ Այժմ և միշտ՛՛։
Ողորմեա ինձ ա՟ծ ըստ մեծի ող՛՛։
Փառք հօր և որ՛՛։ Այժմ և յաւ՛՛։
Սուրբ աստուած և այլ, Օրհնութի և՛՛։
Այս ամէն Ողորմեա. գ՟ձ ։

Որ երկայնամիտդ ես տ՟ր. քաղ֊ հնգ
ցր և անոխակալ. հանգո՛ ըղ
հոգիս քոց ծառայից. զի մի
դարձցի տնանկ ամաչեցեալ յաւուր
ահեղ ատենին ։ Զյիշատակ հրա֊
ժարելոցն ՚ի հաճոյս քեզ ընկալցիս.
և զուխտս մեր ընկալ որպ զաբելին

 զնոյ֊

զնոյին և զաբրահամու՝ . զէ մի ։
Ի՛ խորան քում սիրողաց հանգու_
ցես ըզ ծառայս քո . և զհոգիս նո_
ցա դասեսցես ընդ սբըս քո . զէ մս ։
ա-կ Ահաւոր ես թագաւոր քրոբէական
շաբ ձայնիւ օրհնեալ՝ . ի յերկինս ի յերկ_
րի և յամ ժամանակի ։ Ահաւոր ես
թագաւոր որ նորոգես զքո զարա_
րածս՝ . հաստատեա ի հաւատս իդէ_
տուն ճշմարտութե ։ Լուսաւորեա
ըզ մեզ քս ի միւսանգամ քո գալըս
տեանդ՝ . յորժամ ծագես ի յերկնից
և նորոգես զքո զարարածս ։
ձ-ր Այսօր յարութիւն քի տօնեցէք
հաւատացեալք՝ . ի մի ած հայր ա_
մնակալ ։ Այսօր և կանայք իւղա_
բերք աւետիս տալով առաքելոցն .
օրհնեն զած հ ։ Այսօր և հրեշ_
տակք ի յերկինըս հոգևոր հընչմամբ
երգով . օր ։



(Հեկեհանգիստ է)

Ո՜վ լուսոյ մայր և կենարար բա- Դ.Ճ
նին բնակարան. քեզ երանիցեն
ազգք և ազինք ամենայն: Ստեղծո-
ղին մայր և հարսն կերպի նորո-
գողին. քեզ երա: Ո՜վ ծագեցաւ-
լիքն՝ նորաստեղծս ՚ի խաւարի. քեզ
երանի":

Փայտ կենաց որ փոխանակ մահա- Ի.Հ.Է
ցու պտղոյն ընդ քրիստոսի պտղաբե-
րեցեր՝ . պարսպեա՛ պահեա զուխտս
հաւատացելոց . Եւ բացաւ մեզ
ճանապարհ ծառոյն կենաց՝ նորոգէ
ափամբ պահպանութենէն . պարս-
պեա՛ պահ :

Փառք հօր և որդ":

Եւ ազատեցաւ նախահայրն ՚ի ճա-
շակմանէ պտղոյն . և քեզ երկրպա-
գեն ամենայն հաւատացեալք՝ . պա-
րսպեա :

Յամ ժամու աղաչանք իմ ոյս":



(Յեղանակ Դաւիթ)

Եւս և խաղ՛։ Աղաչեսցուք զկենսատու փրկիչն մեր Ք՜ս․ որ կամաւոր խաչելութե՛ն իւրով զարարածս փրկեաց․ և հեղմամբ արեան իւրոյ զթողութի՛ն շնորհեաց յուսացելոց իւրոց․ ամէն։

Աղօթք․

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա թէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր՝ կորձա‑կէ՝ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ 'ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի։ Եթէ ոք զիս պաշտեսցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։

Փառաց 'ի փառս բարձրանան"։
Բանհամբք և ժողովուրդք"։

Ի՛դնիլ բեմի՛՛ն բազմի՛՛ փեսա‑յ՛ն և առագաստո՛ն զմ՛րդարի.
գովբրինելեա՛ն փողի՛՛ն գոչ"։

Հոգևոյն հանգուցէ"։ Հայր Տէր որ"։ եղէ



(Նուրբար Չայն)

## Վ. Ձայն.

դկ
հնգ Լոյս ի լուսոյ զմեզ լուսաւո-
րեա · որ փառօք հօր հանդեր-
ձեալ ես գալ ՚ի դատել զեր-
կիր · արժանաւորեա՛ և ըզ մեր
ըզ նընջեցեալսն անճառ խոստմանց
քոց ընդ սուրբս քո ։ Հօր և հոգւոյ
համագոյակից՝ ՚ի տիեզերական ա-
հեղ ատենին · արժան ։ Երկնի և
երկրի արդար դատաւոր · յորժամ
հատուցանես ըստ գործոց իւրա-
քանչիւրոց՝ · արժան ։

հնգ Փառք քեզ սուրբ փառաւորեալ
յաւիտեան · որ կենարարդ ես մարմ-
նոց և գոյացուցիչ հոգւոց մեր
ննջեցելոցն ։ Որ բարձրացար ՚ի
խաչին վասն ադամայ նորոգմանն · և
իջանելովդ քո ՚ի դժոխս աւար ա-

ւեր ընդ գերեալսն։ Ընդ գետն նա ար–
եան քո յիջ...ամ կենդանագործող աշխար–
հի. և հանդստեան արժանաւորեա՛
յերկնից վերին։

Քրիստոս տէր աստուածոյ. ողո– ապշ
որմեա։ Շնորհնութե՛ ՚ի մեղա–
երկնեաց զիս մայր իմ. աղաչեմ փըր–
կիչ ողո։ Վիրաւորեալ մեղօք ան–
կանիմ առ քեզ փրկիչ. մի անտես
առներ՝ ող։

Աղաչաւորն հառաչանօք ՚ի տաճա– ապշ
րին եկաւ ընդ քաղուութիւն. նոյնպէս
ձայնիւն և ես գոչեմ. ողորմեա ինձ
տէր։ Աւազակն աղաղակէր ՚ի խա–
չին՝ յիշեա զիս տէր. նոյնպէս։ Անառակ
որդին աղերսանօք աղաչէր ընդ քեզ.
հայր մեղայ յերկինս և առաջի քո.
նոյնպէս։

Կոյս ՚ի լուսոյ ծննդեան և ծա– ապշ
գումն. որ եկիր ՚ի խնդիր մոլո– նրէէ
րեալ

րեալ ոչխարի բնութեամ · զոր ընդ
խաչին բարձեր ի վերայ ուսոյդ` ·
մաքրեա՛ ըզ մեզ 'ի մեղաց մերոց ։
Սուրբըդ սըրբոց էից մաքրութի·
որ ածե՛ր տան քո աւել 'ի մեղաց
զաշխարհս մաքրելով · 'ի նմա գըտ
եալ զպատկեր քո նորոգեցեր` ·
նորոգեա՛ զմեզ ի հնութէ մեղաց ։
Ընդ անառակին որդւոյ գոչեմք
առ հայրըդ գըթած · մեղաք յերկինս
և առաջի քո քաւիչ յանցանաց · եւ
ընդ առաջ սիրով գըրկեա՛ համբու
րիւ` · մաքրեա՛ ըզ · Աղբիւր կենաց
բըղխեալ յեդեմայ մը ծածկին` ·
որով արբեցաւ երկիր ծարաւուս
հոգւոյն իմաստիւք · տուր մեզ մաղ
թեա՛ աղբիւրս արտասուաց · մաք
րեա ըզ ։
աղւ Շնորհեա՛ մեզ տէր ընդ աղքատաց
իրէ օրինակին ղազարու ժուժկալութի ·



( Շ արա″ Հանգ″ )

զի կամաւոր աղքատութե՛ արքայու_
թեն Երկնից ընդ նըմին լիցուք
արժանի՝ . լո՛ւր մեզ և ո՛ղորմեա՛ քո՛
ալդ : Ո՛ր փո՛ խա՛նակ հացին կարօ_
տութե՛ զհացն անմահութե՛ նըմա
շնորհեցեր՝ . և ընդ մեծատանն ան_
գթութե՝ 'ի գոգն աբրահամու՛ ը՛դ
նա՛ ընկալար՝ . լո՛ւր : Լուսաւո՛րեա՛
զաչըս սըրտից ստանալ մեզ ողորմու_
թե՛ 'ի քէ՛ն տը՛ր զողորմութի . զի մի
ընդ մեծատանըն հայցե՛սցուք 'ի բոց
ծնոցին ծադի՛ն մատի՛ն ջուր 'ի զո_
վացումն՝ . լո՛ւր մեզ :

Ը՛ղ քո՛ յարութիդ օրհնեմը՛ք մար_ ձ..ը
դասէր՝ . աղաղակելով տէր փառըք
քեզ : Զոր օրհնե՛ն սերոբէ՛քն և
զովե՛ն քերոբէքն . աղաղա : Ընդա_
դա՛ր բերանով անհանգիստ բարբա_
ռով . աղաղակե :

Ը՛յսօր ցը՛նծան դասք առաքելոցըն հ..4
դա_

գալըստեամբ հոգւոյն այ · զոր մըխի
թարեաց փոխանակ բանին մարմնա_
ցելոյ եղեալ ընդ նոսա · փառըս տա_
ցուք նմա սրբասաց ձայնիւ ·

Այսօր բըղխեաց ջուր կենդանի յե_
րուսաղէմ · յորմէ լըցան գետք
ա̅ծայինք · և ընթացեալ արբուցին
տիեզերաց զքառավտակ աղբիւրն
եդեմայ · փառ · Այսօր ցօղով իմա_
նալեաւ յամպոց հոգւոյն զուարթա_
ցան բոյսք եկեղեցւոյ · պտղաբերա_
ցան դաշտք արդարութե և գեղեց
կացան անապատք մաքուր կուսու_
թե · փառըս տա ·

մ Մայր և կոյս աղախին քո · որ բա" ·
Մաքուր աղաւնի և հարսն երկ" ·
Եւ հաճեցան իմանալէքն" ·

բչի Ո՛վ պահապան որ ծագեցար յե_
դեմայ · նշան յաղթութե ընդ դէմ
աներևոյթ թշնամւոյն · Պու փա_
կե_



(Շարա" Հանգս")

կերո՛յ դրախտին բացող և առաջ-
նորդ մտա[illegible]կին . որ բոցեղէն սու-
րըն կապեա՛ց ա՛ նեղէն հրամանաւ :
Փառք հօր և" : Եւ ցընծան բառա-
րոյինքս մե՛մ ՚ի միաբանգամ քոյ գա" :

Ա.ւէտարան աւէտարան :

Տէր լո՛ւր աղօթից իմոց՝ աղաղակ" : աւէ
Յաւուր նեղութե̃ իմոյ խոնար" :
ՄԵծ Աւետրնի ՅԻ ՔԻ որ ըստ Ղու" :
Տրն մեր Յս Քս ասէ :

Մի՛ երկնչէք հօտ փոքրիկ . զի հաճեցաւ հօր ձեր՝ տալ ձեզ զարքայութիւնն : Վաճառեցէ՛ք զինչս ձեր , և տո՛ւք զողորմութի̃ . և արարէ՛ք ձեզ քսակս առանց հնանալոյ՝ գանձ անպակաս յերկինս . ուր ո՛չ գող մերձենայ , և ո՛չ ցեց ապականէ : զի ուր գանձն ձե՛ր է , անդ և սիրտք ձեր եղիցին :

Եղիցին գօտիք ձեր պնդե̃լ ը̃ մէջս և ճրագունք լուցեալք . և դուք նմանօղք մարդկան՝ որ ակն ունիցին տն̃


իւր

խուրեանց՝ թէ երբ դառնայցէ 'ի հարսանեաց . զի յորժամ գայցէ և բախիցէ՝ վաղվաղակի բանայցեն նմա ։ Երանի իցէ ծառայից այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս ։ ամէն ասեմ ձեզ, զի գօտի ընդ մէջ ածցէ, և բազմեցուսցէ զնս, և անցեալ պաշտեսցէ զնս ։ և եթէ յերկրորդ՝ կամ յերրորդ պահու եկեսցէ՝ և գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ . Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ, չտայր թոյլ ական հատանել 'ի տան իւրում ։ Եւ դուք՝ եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք՝ գայ որդի մարդոյ ։

Զօրակցեալ անմարմնականքն՝ առ" ։

Ցօհաւորեալ նշան խա" ։

Էբէ Յօրժամ հընչէ՜ւն փողո՜յն լենի՜ ե՜ ղևտակա՜ն գ՜րը՜ն" ։

Հոգւոյն հան" ։ Հայր Տէր որ" ։



Զոր_

(Ա — Ձայն)

Չորրորդ Ձայն.

Ռանգլի զքեզ օրհնեն իշխա_ դՃ
նութիւնք երկնից թագա_ ՀՆԿ
ւոր փառաց . ամենակալ
ամենակարող թող ըզ մեղըս մեր նըն
ջեցելոցն . և հանգո ՚ի խորանի
քում ի յարքայական ի հանգըս_
տեան : Որ ՚ի նախնումն ըզ մարդա_
րէն մովսէս լուսաւորեցեր ա̃ծային
փառօք տեսլեամբ ա̃ծութե̃նըդ քոյ.
լուսաւորեա և ըզ մեր ըզ նըննջե_
ցեալսն . և հանգո ՚ի խո: Բարեխօ_
սութեամբ սուրբ ա̃ծածնի ծըննո_
ղի և մօր քոյ յիշեա զգինս արեան
քոյ տ̃ր . և դասաւորեա յերանա_
ւէտ յանթառամ և յանտըրտում ՚ի
կեանսդ . ՚ի յարքայական ի հանգըս
տեան .



Փա_

հնգ Փառք քեզ Հայր՝ որ կենարարդ
ես մարմնոց և գոյացուցիչ հոգւոց·
ընկալ զօրհնաբանող հոգիս յանմա-
հական քո հանգիստ։ Մարդասիրի
Հօր որդի · որ պատկերակից եղեր
հողեղինացս · և խաչեցար · ընկալ
Ամենազօր սբ Հոգի · որ անդորրիչ
ես ննջելոց՝ և մխիթարիչ
հոգւոց · ըն։

տպղ Համբառնամ առ քեզ տր զանձն իմ·
Նայեա՛ յիս գթութեամբ քո · և
ողորմեա ։ Դու ես յոյս և ապա-
ւէն իմ · զերծո՛ զիս յորոգայթէ
մեղաց · և ող։ Ապրեցուցիչ իմ և
փրկիչ իմ· ապրեցո՛ զիս յորոգայթէ
մեղաց · և ող։

տպղ Ած մարդասէր որ զմաքսաւորն ար-
դարացուցեր· քաւեա զիս ըղ մեղա-
ւորս։ Ո՛ր քղանձին հանդերձի քո
զմերձեցեալն ի քեզ՝ բժշկեցեր· քա

 Ո՛ր

Ո՛ր բանիւ հրամանի քո զանդամա-լոյծն առողջացուցեր. քա:

Ո՛ր զօրէնըս սրբութեան պահոց նախ ՚ի դրախտին աւանդեցեր. զոր ոչ պահելով նախաստեղծիցըն ճաշակմամբ պտղոյն ճաշակեցին ըզ դառնութիւն մեղաց և մահու. վասն որոյ շնորհեա՛ մեզ տէր ճաշակել ըզ քաղցրութիւն քոց պատուիրանաց:

Ո՛ր զանմաքան վերօք մեղաց հարուք յոգւս ի թըշնամւոյն. և ի բազմապատիկ է հի հիմանդութեանս. կարօտացաք մարդասիրիդ բառնալոյ ըզ ցաւս մեր. վն որոյ բըժըշկեա՛ ըզ մեզ քրիստոս որպէս մարդասէր:

Ո՛ր եկեր ՚ի փրկութիւն մարդկան ծնընդեամբ կուսին մարիամու. և կենդանարար քո յարութեամբդ, հրաւիրեցեր ըզ մահացեալսն ՚ի յարութիւն անմահութեան:

վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո
զմեզ փրկիչ:

Հր– Որ 'ի չորեքկերպեան կենդանեաց
փառաբանիս 'ի բարձունս՝ . այսօր
մարդասիրապէս փրկիչ 'ի բեթա-
նիա երթալ յանձն առեր . աղբիւր
կենաց մեր և յոյս ողորմեա մեզ:
Որ յարտասուս մարիամանց գթա-
ցեալ արտասուեցեր և ասացեր ցնոսա.
ուր եդիք՝ ես յարուցից ըզ
սիրելին իմ զղազար . աղբիւր:
Աստուածային արարչագործ ձայնիւդ քո
քո 'ի թաղմանէ կոչեցեր զղազա-
րոս . ցուցեր կենդանեաց և մե-
ռելոց տէր . աղբիւր:

Զոր Անեղակից բանիդ Հօր և եղելոց
պատճառ . որ ծընար 'ի կուսէն . ըզ
քեզ ծանեաք տէր՝ աղաչեմք ողոր-
մեա ազգի մարդկան : Սերոբէիցն
աչաւոր և դատաւոր կենդանեաց
և



(Շարակ" Հանգ")

և մեռելոց՝ որ ՚ի խաւարին բնակեա_
ցար. ընդ քեզ։ Կենդանութեան աղ_
բիւր և պարգևատու առատ ողոր_
մութեան. որ յարեար ՚ի մեռե_
լոց. ընդ քեզ ծա։

Անսկիզբն աստուած մեծ՝ հոգի հոգ
զմարգարէութեանց նախագուշա_
կումն արտափայլեալ լուսազարդե_
ցեր. առատապէս հեղեալ յա_
ռաքեալսն։ Անժամանակ որդի
միածին՝ ընդ խոստացեալ պարգևս
ուետեացն ի վերնատունն առար_
տեալ լցեր. առատա։ Միանական
հայր երկնաւոր. զանբաժանելի
լուսոյդ ընդ ծագումն հողեղէնա_
ցըս շնորհեցեր՝ . առա.

Ընդ քեզ օրհնութիւն մեծացուցա_ մ
նեմք։ Որ ընդ բանին որդի յարգան_
դի կրեցեր սրբուհի անարատ.
և անճառապէս ծնար ընդ վերա_

 ձգօղն

(Չորրորդ Ձայն)

ձգօղն երկնից. ընդ քեզ: Ո՛ր էից
լուսոյն արժանի եղեր բառնալոյ
'ի քո գիրկս. և արեգականն արդա
րութեան եղեր արևելք. ընդ:

Խչէ Զօրութիւն սուրբ խաչի քո քս
որ կանգնեցեր 'ի փրկութիւն աշ
խարհի. սու պահեսցէ ընդ մեզ
յամ փորձութեան: Քանզի 'ի սմա
բարձրացար տէր և 'ի սմա հեղեր
ընդ պատուական քո արիւնդ. սու:
Նու ընդ քո միասանգամն ընդ գալուստ
տեառ նշանաւ խաչի քո ցուցեր
աշխարհի. սու:

Ր.չէ-ր-եա աչէ-ր-եա:

Աղէս Մերձեսցին խնդրուածք իմ":
Մտցեն աղօթք իմ առաջի քո":

Մեծ Նաւարնէ Օէ Պէ որ լոյս Մեր":
Տէրն մեր յու քո աւէ:

Ալ յարուրան յայնոսիկ յետ նե
ղութեանն այնորիկ արեգակն
խա



(Ծարա" Հանգ")

խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր. և աստեղք յերկնից թօթափեսցին, և զօրութիւնք յերկնից շարժեսցին։ Եւ յայնժամ տեսցեն զորդի մարդոյ եկեալ ամպովք, և զօրութե՛ և փառօք բազմօք։ Եւ յայնժամ առաքեսցէ զհրեշտակս իւր, և ժողովեսցէ զընտրեալս իւր ՚ի չորից հողմոց ՚ի ծագաց երկրի մինչև ՚ի ծագս երկնից։ Բայց դուք՝ ՚ի թզենւոյ անտի ուսջիք զառակն. յորժամ ոստքն նո՛ կակղանայցեն, և տերև արձակիցի ՚ի նմա, գիտէք թէ մերձ է ամառն. Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասջիք՝ թէ մերձ է առ դուրս։ Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն եղիցի։ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն։

Ձայնեցեր առ Ղազարոս՝ որով"։
Պօղեալ սարսեաց պահակ"։
Տուն մի էրէ զորն և չամիա։ Հոգւոյն հան"։
Հայր մեր որ յեր"։

 Մերք

(Զուրորէ Զայն)

Ա կղ Ձայն.

դկ Խնդրեմք ՚ի քէն Թագաւոր
հնգ փառաց՝ փառաւորեալդ ՚ի
զուարթնոց. ընդ ննջեցեալսն
մեր ընկալ մարդասէր տէր և հան-
գո ընդ սուրբս քո. Յորժամ գաս
փառօք հօր դատել զերկիր արդա-
րութեամբ արեգակն. ընդ ննջեցեալ:
Ի նստել քո յատենի դատաւոր ա-
ծ հեղ քո փրկիչ մեր և յոյս. ընդ.
հնգ Հայր անսկիզբն բարերարն մար-
դասէր. որ ստեղծեր ես հոգւով
և մարմնով. յիշեա զննջեցեալսն
մեր. և հանգո ընդ սուրբս քո. Որդի
միածին որ գթած ես առ ամենե-
սեան. որ խաչին և արեամբ գնե-
ցեր ընդ քո ժողովուրդս. յիշեա
զգինս արեան քո տէր. և հանգո
ընդ

ընդ Հօր քո ։ Հոգիդ ճշմարիտ · որ աղբիւրդ ես անսպառելի, և բղխեցուցիչ ամենայն բարութեանց ·

յիշեա՛ ։

Քրիստոս Աստուած յոյս ապաշխարողաց · շնորհեա՛ զթողութիւն բազում յանցանաց իմոց ։ Առ քեզ բազմադամ թապաւինեալ կարդամք մի՛ մերժեր զմեզ յողորմութենէ քումմէ ։ Որպէս զաւազակն կին անդամալոյծն առ քեզ · յիշեա՛ և զիս տէր ի քում արքայութեան ·

Ալիք յանցանաց զիս ալէկոծեն · և մեղք իմ բազում, զիս յանդիմանեն ։ Արդ զինչ արարից մեղուցեալ անձամբս, որ չեմ ապրելոց յահագին հրոյն · Մեղայ քեզ Քրիստոս որդի Աստուծոյ · շնորհեա՛ զթողութիւն բազում յանցանաց իմոց ։



Քանն

ապլ նվնի Բանն որ ընդ հօր յէութե և հա-
մագոյն ընդ հոգւոյն . ընդ պատկերն
իւրական խառնեալ ընդ հողանիւթ
բնութեանս . զոր զարդարեալ փա-
ռօք եդ ՚ի դրախտին փափկութե .
Յորում ցնծայր զուարճացեալ ան-
ըմբռնական խնդութե՛ . քանզի զած
տեսանէր միշտ խոնարհեալ ՚ի դրախ
տին . յորմէ զլուսոյն ճաշակայթ
տրպաորէր ի յինքեան . Մ՛ որդւոյ
մղաչեամ մայր այ մարիամ . զմիածին
քո զորդին՝ զի շնորհեսցէ ըստ աւա
զակին , ժառանգել վերըստին մեզ
ըզդրախտին վայելչութի .
Հր- Յիսու՛ս միածինն անմահութեց
պարգեւատուն երևեցաւ ըմեզ .
խափանեաց զզօրութիւն մահու .
Ընդ խմի՛ մբ առաստուաց մարիա-
մու և մարթայի անկեալ առ ոտսն
տեառ՛ն , խնդրէին զնորոգութ



(Ղ.ազար" Հանգստ")

եղբօրն։ Բանին՝ բանն ած կենա_
գործեաց ընդ ղազարոս ՚ի թաղմա_
նէն. և եկեալ արտաքս անապական։

Յարեամբ երևեցար առաքելոցն. և Ձ․ Է
մեզ փրկիչ ողորմեա։ Մեք քո
թագաւորիդ անմահի՝ երկիր պագա_
նեմք. և զյարութիւնդ քո փառաւո_
րեմք։ Փառըք փրկողիդ և միած_
նիդ անմահի. փրկեա զժողովուր_
դըս քո զոր ընտրեցեր պատուական
արեամբըդ քո սրբով։

Ահարաշամբժ մղբերէն անհատա_ Հ․ Գ
հսըրդ վառալ՝ կենդանարար հեր
հոգի. օրհնեալ ես լոյս ճշմարիտ։
Այսօր ՚ի սուրբ վերնատունն եկեալ
ած ճշմարիտ. հրաշագործեաց զա_
ռաքեալսն ՚ի լոյս փառաց քոց հոգի։
Հրձուողական խնդութեան աշա_
կերտացն լցեալ. փառաւորելով
երգելին՝ օրհնեալ ես լոյս գերազանց



(Ա Էջ Ձայն)

Մ Ի քեզ եմք ապաւինեալ. քի մայր ա՜յ մերոյ։ Որքան զերկինս բարձրագոյն մարիամ պարծանք եկեղեցոյ. քի մայր։ Որքան զարեգակն պայծառագոյն մարիամ. մի դադարիր բարեխօսել վասն մեր. քի մայր։

Իշէ Սուրբ զխաչ քո շնորհեցեր զէն եկեղեցւոյ քում սրբոյ. որով դատապարտեալ պարտեցաւ թշնամին։ Սովաւ պահպանեա ըզ ժողովուրդս քո քս. որով երկրպագեմք քեզ ընդ հօր և հոգւոյն։ Փառք հօր և որդ"։ Ի քեզ ապաւինիմք քրիստոս որ գալոց ես խաչիւ. որպէս զի փրկեսցես զմեզ յայնմ աւուր ահեղ ատենին։

Ալէլուիա ալէլուիա։

Ողնա Ի խորոց կարդացի առ քեզ տէր"։
Եղիցին ականջք քո ի լսել"։

Աւ. Աւետարանն ՅԷ. ԳԻԷ. որ ըստ Մատթէոսի'':
Տէրն մեր ՅՈ ԳԻՈ:

Յայնմ ժամանակի պատասխանի ետ յի՛ւ և ասէ. գոհանամ զքէն հայր՝ տէր երկնի և երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց. այո հայր. զի այսպէս հաճոյ եղև առաջի քո: Ամենայն ինչ տուեալ ինձ 'ի հօրէ իմմէ: Եւ ոչ ոք ճանաչէ զորդի, եթէ ոչ հայր. և ոչ զհայր ոք ճանաչէ, եթէ ոչ որդի, և ում որդին կամիցի յայտնել: Եկայք առ իս ամ աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ: Առէք զլուծ իմ 'ի ձեզ, և ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց: զի լուծ իմ քաղցր է. և բեռն իմ փոքրոգի:

Ըստ օրինացն մովսէսի՝ ընծ'':
Թագաւորըդ հրեղինաց՝ որ'':
Տուն Բ Երգ: Հոգւոյն'': Հայր Տէր'':



Օրա

(Մ Ճէշ Ջոյն)

## Գրանք ՚ի վերայ ծոցոյ ողբոյն ։

### ՚Ի բերանոյ ծնողացն ։

Ծաղիկ նորաբոյս՝ տեսլեամբ
նազելի․ ցա՞ն ընդ քեզ եհար՝
թէ խորշակ քամի․ դէմք քո տար–
փալի՝ այլ ոչ ծիծաղի, լեզուդ քաղց
րախօս՝ բնաւ ոչ խօսի ։

Օ՜ ինչ քեզ պատահեցաւ՝ անբիծ աղաւ
նի, աստ որ հանգչիս սիրտ քո ծընողի․
դու ուրախարար՝ անուշակ դի նի,
հօր և մօր քոյին՝ միակ ցանկալ էր ։

### ՚Ի բերանոյ Թոռելոյն ։

Ես էի հօրն իմ՝ բաժակ ցնծալից,
Ես էի մօրն իմ՝ բուրումն անուշից․
մինչ չէի նոցա՝ ես սեղանա կից,
չէին ՚ի ժամուն՝ յոյժ ուրախա լից ։
Ո՜վ անխիղճ՝ աշխարհ ցաւա լից,
ոչ խնայեցեր՝ տղայ հասա կիս․
զիս լոկ պատանօք՝ այժմ առ հեռանիս,

ծնողացս իմ տամ՝ զայս դա՛ռըն կսկիծ ։

՚Ի բերանոյ ծնողացն ։

Սիրելի՛ որդի՝ աստըղ լուսաբեր, կարմիր և ճերմակ՝ վարդ էր քո պատկեր. մինչ յառաւօտուն՝ արևըն ծագէր, դէմքըդ նոր արև՝ գեղեցիկ փայլէր ։ Աչքըդ լի՛ճ լուսոյ՝ պայծառ փողփողէր, յօնքըդ աղեղնաձև՝ կամար յօրինէր. անուշիկ լեզուդ՝ մինչ թոթով խօսէր, իբրև ըղ սոխակ՝ զմեղ ուրախ առնէր ։ Ո՛հ ձըմեռն եհաս՝ կամ ձիւն բքաբեր, որ կոկոն վարդիդ՝ չորացեա̃լ եղեր. ըղ սոխակդ եհար՝ նետըն մահաբեր, զարևդ իմ ծածկեաց՝ սև օր սև գիշեր ։

՚Ի բերանոյ Դաւէլոյն ։

Ո՛վ հայր քաղցրագութ՝ ո՛վ մայր իմ սիրուն, մի՛ առաւելուք՝ զայս իմ տրտմութի̃. ես այժըմ արբի՝ մահուն դառնութի̃, թող տուք ինձ ողբալ՝ զիմ անբաղդութի̃ ։ Անճանաչ ցաւոյ տիրացայ ՚ի այն, դեղ ճար ո՛չ եղև՝ մատնեցայ մահուն. այժմ կապեցաւ՝



իմ

իմ անոյշ լեզուն, գունաթափ եղև՝
իմ գեղեցկութի՛ւն։ Որ չելանէի՝ 'ի
մօրըս ծոցոյն, այժմ երթամ ննջել՝
'ի յատակ հողոյն. փոխան իմ ազնիւ՝
պայծառ զգեստուն, զգեցայ ըզ սոյն՝
պատանք կտաւոյն։ Թողի զոսկեղէն՝
ըզ զարդն իմ գլխոյն, Թողի զամ՝
գոհարն իմ փայլուն. Հոգւովըս
թռեայ՝ յամպըս բարձրագոյն, մար_
մնովըս երթամ՝ 'ի ներքև հողոյն։
Վա՜ւ ես որ յո՛՝ իմ կենդանութի՛,
դու իմ զարդ անդրին՝ դու իմ ցնծութի՛.
յաջողեա՛ ինձ դալ՝ առ քեզ 'ի յերկին,
ցնծալ զմայլել՝ լուսով քո տեսոյն։

Ողանջ 'ի վերայ ժեռայոյն երկրաբարդի։
'Ի բերանոյ մօրն։

Ա՛յ դառըն մահ՝ անգութ սուսեր,
ազնիւ որդւոյն՝ իմ խոցեր ցեր.
ծովակ արեան՝ սիրտս արա ըեր,
ես անորդի՝ մայր եմ և ղեր։
Ես յուսոյի՝ հարսանիս առնել,
ըզ քեզ փառօք՝ փեսայ տեսանել.
այս ինչ ձիւն էր՝ որ գլխոյս բերեր,
ան_

անմխիթար՝ ինձ սուգ թողու ցեր ։

Ի բերանոյ Դաւէլոյն ։

Հերիք ողբաս՝ մայր սիրե լի ,
քիչ մի լռէ՝ որդիդ խօ սի ․
Թո՛ղ ինձ որ լամ՝ ես յիրա ւի ,
որ յաշխարհէս՝ փափագ չա ռի ։
Նըման էի՝ նորատունկ ծա ռի ,
պատահեցայ՝ մահուն տապա րի ․
գեղեցկատես՝ վարդըս նաղե լի ,
Թառամեցայ՝ հողմով խորշա կի ։

Ի բերանոյ Հօրն ։

Ծաղիկ ընտիր՝ տունկ նորա բոյս ,
ուրախարար՝ տրտմեալ հոգ ւոյս ․
դէմքըդ պայծառ՝ հոտ քո ա նոյշ ,
էր չորացար՝ վա՜յ եղկել ւոյս ։
Երբ հայրըդ զիս՝ այրի թո ղուց ,
դուն մխիթար՝ էիր սը գոյս ․
այսուհետև՝ իմ աչաց լոյս ,
ո՛վ փարատիչ՝ լեցի ցա ւոյս ։
Դու իմ որբոցս՝ հայր էիր և յոյս ,
դու տէր էիր՝ տանըս և տեղ ւոյս ․
Թէ չըդայիր՝ գիշեր մի 'ի տունս ,
որք մնային՝ բոլոր զաւա կունքս ։

Դու ով երկինք՝ մթացար խորղձոյս,
ձիւն և կարկուտ՝ մաղեցեր գլխոյս.
սև ամպ պատեաց՝ ըզ լոյսն արևոյս,
չեմ տեսանեմ զերեսըն որդւոյս.

Ի բերանոյ Թադէոսին.

Այժմ երթամ՝ ՚ի հայրե նիս,
այլ ոչ կարեմ՝ գալ ՚ի տե ղիս.
եղբարք և քորք՝ մի՛ հոգայք զիս,
թէ ուր մնաց՝ յերեկոյ իս.
Դու ով շըջան՝ ժամանա կիս,
չողորմեցար՝ իմ հասա կիս.
ես կարօտ եմ՝ իմ ծնո ղիս,
դու զիս յանկարծ՝ առեր տա նիս.
Մայր իմ՝ քոյր իմ՝ ցանկալի եղբարք,
մնայք բարեաւ՝ զիս մի՛ մոռանայք.
երախտաւոր՝ դուք ինձ շատ եղայք,
ինձ ներեցէք՝ չետու փոխա նակ.
Ո՜վ Ք՜ս՝ դու ես գլխոյս թագ,
առ քեզ փութամ՝ հասանիլ արագ.
դու լեր միջնորդ՝ ով Տէ պատարագ,
ըզ սոյն խնդրեմ՝ այս է իմ փրկանք.



Դանչ

Գրանչ 'ի վերայ հարսնացուաց նշանի ։

'Ի բերանոյ ծնողացն ։

Իմ սիրելի դուստըր՝ գեղեցիկ տատրակ, ձայնիկդ անոյշ էր ինձ՝ ոպ լուսինեակ. ընդէր նինջես լռիկ՝ ոչ խօսիս զմուակ, գոչեմ 'ի լսելիս՝ զի ունիմ փափագ ։ Դու էիր իմ սրտին՝ պայծառ արուսեակ, ծագէիր 'ի յայգուն՝ լուսոյ նըմանակ. ընդէր խաւարեցար՝ պատմեմ համարձակ, կարօտ եմ քո տեսոյդ՝ ով ազնիւ թութակ ։

'Ի բերանոյ Դստերացն ։

«Սեւ մահու զիս եհար՝ մինչ ուրախ կայի, կործանեաց զիս յերկիր՝ եղէ ողբալի. ձեռքերըս ոչ շարժի՝ լեզուս կապկապի, անքայլ ոտիւք կերթամ՝ 'ի հող տապանի ։ Ո՛վ ամպ խաւարային՝ ով մահ սոսկալի, եկեալ զիս ծածկեցեր՝ յայսմ առաւօտի. աստղըս լուսատեսիլ՝ գեղով նազելի, գտայ յանկարծակի՝ 'ի խոր գիշերի։



'Ի

Ի բերանոյ Հօրն ։

Աչքըրդ ծովակ լուսոյ՝ պայծառ ծա-
ծանէր, դէմքըրդ յարև Նըման՝
գեղեցիկ փայլէր ․ մազերըդ վարսա-
ւոր՝ ծառոյ Նըմանէր, ծաղիկ վայել-
չագեղ՝ դուստր իմ լուսաբեր ։ Ո՛վ
բաղդ իմ վատաբաղդ՝ այս ինչ արա-
րեր, վարդն իմ չորացուցեր՝ հողմով
բքաբեր ․ ո՞ւր է դէմքըն զուարթ՝ որ
չի ծիծաղէր, ո՞ւր է աչքըն պայծառ՝
որ չի տեսանէր ։

Ի բերանոյ Մեռելոյն ։

Հայր իմ ազնուագութ՝ մայր իմ սի-
րելի, հերիք զիս ողբացիք՝ լռեցէ՛ք
պահ մի ․ լեզուս ոչ կարեմ տալ
ձեզ պատասխանի, հոգիս կը վկայէ՝
ձեր սիրոյն սրտի ։ Յս̄ իմ՝ յոյս իմ
ես՝ աղաչեմ կարի, շնորհեա՛ համբե-
րութիւն՝ իմոյս ծընողի ․ ես նոցին
երախտեաց՝ ինչ ոչ հատուցի, դու-
Նըմին փոխան տուր՝ ըզ վարձըս բարի ։

Ի բերանոյ Ծնողացն ։

Յուսայաք 'ի մօտոյ՝ դուստր իմ ան-



նը-

նըման, ըղ քեզ ուրախութ՝ տալ ՚ի
հարսնութե. հանդերձ քո ոսկեթել
զարդ քո պատուական, վայելուչ յօ_
րինեալ՝ ահա պատրաստ կան: Ո՜վ
զվարդ հեռանաս՝ այդպէս մերկ ան_
դամ, որդանց թողուս ՚ի կեր՝ ան_
տէր անխընամ. ծնողացդ որ խաւար՝
ածես տարաժամ, մեք ցանկամք մե_
ռանիլ՝ քո մահուդ փոխան:

՚Ի բերանոյ Պաւլոյն:

Ես անմահ փեսայիդ՝ իմոյ յի, ըղ
հետ երթամ այժմիկ՝ փրկաւէտ ձայ_
նի. վն իմ աղաչեցէք՝ ծնօղք իմ
բարի, նորին քաղցր տեսոյն՝ եղէց
արժանի: Ո՜վ տր ածածին՝ երկնից
թագուհի, դու ես իմ միայնակ՝ յոյս
ապաւինի. օգնեա ինձ ՚ի դժուար՝
յոյս ճանապարհի, հանդիպիլ քեզ
փառօք՝ ՚ի կամարն երկնի:

---

Պ.անց ՚ի վերայ անուանայէլ երեխաօրդին:

՚Ի բերանոյ Պաւլոյն:

Մայր իմ քոյր իմ՝ եղբարք հոգե_
կից, այս ինչ ցաւ էր՝ որ պատահ

եաց ինձ. Ճարտար բժիշկք՝ եկին տե-
սին՝ չեղև օգուտ ինչ, ափսոս եղև
մանուկ հասակիս: Յաշխարհ մտի՝
ըստացայ որդիս, և չըհասի՝ ոչ մէկ
փափագիս. կինըս այրի՝ որդիքըս որբ՝
թողի խղճալիս, ափսոս եղև՝ ազնիւ
ծնողիս:

՚Ի բերանոյ մօրն:

Սիրուն զաւակ՝ իմ ցաւս է հերիք,
մի խոցեր զիս՝ ոչ ունիմ կարիք. լաւ
է ինձ յոյժ՝ թէ մեռանիմ՝ որդի իմ
քաղցրիկ, քան թէ ապրիմ՝ առանց
քեզ այժմիկ: Դառնացոյք ինձ՝ տա-
րերք և երկինք, ըզ ծաղիկն իմ՝
խորշակաւ հարիք. ըզ սիրտս իմ՝
անշէջ հըրով՝ այրեցիք սաստիկ, ով
լինիցի՝ իմ ցաւոյս բժիշկ: Ով իմ
որդեակ՝ առիւծ կորովի, դու ցնծու-
թի՝ ծընողիդ սրտի. վայ ինձ զի կաս՝
անշարժ անխօս՝ անկեալ 'ի յերկրի,
շիջաւ ճըրագ՝ սըրտիս լապտերի:
Հոգւոյս հոգի՝ գեղեցիկ որդի,
եղուկ եմ ես՝ որ ողջ մնացի. արդ ո՞ւր
իցէ՝

լիցէ՝ փոխանակ քո՝ ես մեռանէի ,
քան թէ այդպէս՝ զքեզ տեսանէի ։

Ի ճերանոց ժողչն ։

Ամնազելի՝ եղբայր անուշակ, ո՞ւր է
քոյին՝ վայելուչ հասակ․ ցաւոյդ կրակ՝
զքեզ չորացոյց՝ որպէս խոտ ցամաք,
ափսո՜ս է մեզ՝ որ այսպէս տեսաք ։
Պրո՜ւ մեր սրտին՝ պայծառ արեգակ,
դո՜ւ մեր հոգւոյն՝ լուսափայլ ճրագ․
խաւարեցար՝ գիշեր պատեց՝ ըզ մեզ
բոլորնդան, աւա՜ղ զի մեք՝ ո՞չ ընդ-
քեզ մեռաք ։ Ա՜նց հրացայտ՝ հաներ
զկայծակ, զիմ սիրելին՝ հարեր շան-
թառաք․ ըզ սիրտըս մեր՝ քակեալ
այսօր՝ եդիր աւերակ, հազա՜ր ե-
ղուկ՝ այս աւուր հասակ ։
Ո՜վ դառըն մահ՝ անգութ մատըռ-
ուակ, մեզ արբուցեր՝ զայս ցաւոց
բաժակ․ արտասուք լցեր՝ ըզ սիրտըս
մեր՝ եղբայր անուշակ, ո՞ւր լինիցի՛
մեզ մխիթարանք ։

Ի ճերանոց վաելոյն ։

Օ քեզ աղաչեմ՝ ո՜վ ազնիւ եղբայր,
դու լինիցիս՝ որբոց խնամ հայր․ երախ

ահեյ քոյ՝ հաստատեսցէ զքեզ՝ Տէրն բարե-
րար, զայսխնդրելն իմ՝ դու մի՛ մոռանար։
Մի՛ բարեկամք՝ շատ եմ շնորհակալ
զի ջանացայք՝ առնել ցաւոյս ճար.
այլ ներեցէք՝ զի ոչ կրեմ՝ տալ նոցին
վըճար, տացէ ա̃ծ՝ ձեզ վարձս անսպառ։
Խռովկ է մեզ՝ անցաւոր աշխարհ,
որ ոչ ունիս՝ բայց ցաւ և աշխար.
ցաւօք մտի՝ ցաւօք ելի՝ երթամ յայլ տե,
ղյս բաժին քո՝ զոր տաս անդադար։
Ո՛վ քս ա̃ծ իմ խաչեալ, ուրախացո՛
զիս յերկնից կամար. ծնողաց իմոց՝
համբերութի՝ տուր ամենակալ, ըն-
տանեացս իմ՝ դու լեր մխիթար։
Մե՛ պատարագ՝ քեզ յուսամ խապառ,
դու ես իմ յոյս՝ կեանք և կենարար.
լեր ինձ միջնորդ՝ առ տր յս՝ խղճալոյս
գթալ, ինձ պարգևել՝ ըղձիցըս անձին։

---

*Վասնզ ՚ի վերայ որդեծին հարսին, կամ կնոջ։ ՚Ի բերանոյ աղջկանոյ։*

Զխթենի պըտղալից՝ բազմաշխատ
տիկին, պըսակ վայելչուե՝ քոյոյ
փեսային. զխորդ դու չորացար, ա-
ւաղ

ւող մեր բաղդին , պայծառ տեսիլ
քոյին՝ եղև տխրագին :

Ի բերանոյ Քրոջն :

Թութակ վայելչագեղ՝ իմ նազելի
քոյր , խօսէիր քաղցրութ̃՝ յերեկեան
աւուր . ընդէ՞ր այժմիկ եղեր՝ դու
անխօս և լուռ , տաս մեզ զինչ
կամիս՝ քեզ ուտել այսօր :

Ի բերանոյ Թռչնոյն :

Սուր պղտոր հաս ինձ դառն հի-
ւանդութ̃ , ոչ դեղք և ոչ բժիշկք՝
եղեն ինձ դարման . անդիտելի ցա-
ւօք՝ յաշխարհէս կերթամ , ոչ կա-
րեմ ուտել ինչ՝ խցաւ իմ բերան :
Հողմըն մահու շնչեաց՝ սաստիկ ձը
մերան , խլեց զարմատս յերկրէ՝ եղէ
անկենդան . ըզ քեզ տէր աղաչեմ՝
արա ինձ խնամ , տնկեա զիս յերկ-
նային՝ քո սուրբ բուրաստան :
Ծնօղք իմ բազմագութ՝ այր իմ
պատուական , խնդրեմ չէ մոռա-
նայք՝ ծոյս անարժան . տուք ողոր-
մութ̃՝ լերուք օգնական , այն է հոգ-


ւոյս

ւոյս բժշկի՝ դեղ առողջութեան ։

Ի բերանոյ քրոջն ։

Ընդէ՞ր մեզ հասուցեր՝ զայս օր տրտմութե՛, ընդէ՞ր մեզ արբուցեր՝ գինի դառնութե՛ . հերիք չէր ցաւըն մեր՝ ծնողին մահուան, որ նոր մեզ յաւելեր՝ զայս ցաւ խիստ քան զայն ։ Նայեցէք եղբարք լացէք՝ արտասուօք արեան, զայս քոյր մեր գովելի՝ ծաղկադեղ շուշան . կին էր ժրրագլուխ՝ խոնարհ քաղցրաբան, որդւոց խնամածու՝ շինութի՛ իւր տան ։

Ի բերանոյ առըն իւրոյ ։

Ես այրըս վատաբաղդ՝ լալի եմ միայն, որ յանկարծ կորուսի՝ զակնըս աննըման . զաւակացս ով լիցի՝ խնամող պաշտպան, որք այժմ որբացեալ՝ հաւաչեն ողբան ։

Ի բերանոյ Մեռելոյն ։

Շնորհակալ եմ յոյժ՝ այր իմ սիրական, զի բժիշկ շատ բերիր՝ ետուր շատ դրամ . այլ ոչ եղև ճարակ՝ իմ հիւանդութե՛, մարմինըս մաշեցաւ՝

ոսկերքս հալեցան ։ Այս զքեզ աղա-
չեմ՝ ո՛վ իմ բարեխնամ, ներեա՛ քո
ծառայիդ՝ զաշխատանքդ համայն ․ ոչ
կարեմ վըճարել՝ քո ջանից փոխան ,
քանզի կոչօղն ահեղ՝ եղև ինձ ժամանն ։
Չեմ տրտմիր՝ չեմ հոգար՝ մահըս տա-
րաժամ, թէ զիս առեալ տանի՝ 'ի
խաւար զընտան ․ այլ զի կարօտ եթող՝
ձերում տեսուե , վասն այն հոգիս
կուլայ՝ բարբառով անձայն ։
Գոհար ակնըս բեկեալ՝ կամ լինել
կոխան , մարգարիտս փշրեալ՝ 'ի հող
մերձենամ ․ աղաչեմ ինձ գթա՛
փրկիչ բարեխնամ , Նորոգեա զիս
փառօք՝ յօր քո գալստեան ։

---

Գանձ 'ի վերայ Միջահասակ ննջ.
'Ի Բերանոյ պատանւոյ ։

Ո՛վ իմ սիրական մայրիկ՝ մեր սիր-
տըն սաստիկ խոցեցեր , որ քո խը-
նամոցդ արև՝ շուտով մի 'ի մէնջ
ծածկեցեր ։ Ինչպէս դու կու համ-
բերես՝ քո թոռունքդ 'ի միտ չես
բերեր ․ որ ժամ մի չէիր թողուր՝

հոգւոյն ցերեկ և գիշեր։ Մայրենի
անոյշ սէրըդ՝ մեզ անշէջ կըրակ է
եղեր, մեր սիրտըն այնպէս կայրէ՝
որ այլ չեմք կարեր հանդուրժել։
Արտասուքըն մեր աչաց՝ որ հոսի
նըմանակ աղբեր, զայս ներքին կրա_
կըն մեր՝ չի կարեր նա շիջուցանել։
Ինչպէ՞ս ցաւ էր քեզ դիպաւ՝ որ
անշարժ անկար մնացեր, քոյին քաղց
րախօս լեզուդ՝ սիրելեաց ցաւըդ չի
պատմեր։ Թաքիեր է դոյն յերե_
սէդ՝ աչքըդ լոյս չունի չի տեսներ,
ձեռքերըդ է թուլացեր՝ ոտքերըդ
քալել չի կարեր։ Մեզ պատմեա՛
անոյշ մայրիկ՝ քո՞ն լինիս թէ ցաւդ
է պատեր, որ յառաջ ոչ հանդչէիր՝
այժմ այսպէս ճարիկդ է հատեր։

### Ի ԲԵՐԱՆՈՅ ԴՍՏԵՐՑՆ։

Մի՛ լայք զաւակունք մի՛ լայք՝ չըլ
լինի որ դուք վշտանայք, իմ ջանքըս
այն էր որդիք՝ չըլ տրտմիք, միշտ ու_
րախանայք։ Դուք որ աստ նստեալ
կուլայք՝ իմ սրտիս նորոգ ցաւ կու_


տայք

տուք, ես շնորհակալ եմ յոյժ՝ զի
վասն իմ շատ աշխատ եղայք։

Ճարտար բժիշկներ բերիք՝ իմ ախ-
տիս ոչ եղև ճարակ. դեղ չէ մնաց ա-
րարիք՝ յարծաթ ոսկի չի նայեցուք։
Ներեցէք ինձ զաւակք իմ՝ ներե-
ցէք ազնիւ ազգականք, որ ձեր ե-
րախտեաց փոխան՝ վճարել չունիմ
ժամանակ։ Ողջօղըն առ իս եկաւ՝ զիս
տանի յայլ անտես քաղաք, աղաչեմ
ըղ ձեզ որդեակք՝ աղօթիւք լերուք
օժանդակ։ Ո՛չ կարացին ինձ օգնել՝
ոսկի զարդք և ակունք գոհարք,
մերկ եկի և մերկ կերթամ՝ թողու-
ցի իմ ինչքն ու ապրանք։

Ի բերանոյ զաւակաց։

Դու մեզ շատ պէտք ես մայրիկ՝ մի՛
թողուր ըղ մեզ անխնամ, քոյին մէկ
աւուր կեանքըդ՝ է մեզ բիւր բար-
եաց գանձարան։ Դու միշտ լինէիր
աշխատ՝ որ մնամք մեք ՚ի հանգստեն,
յուսուհետև քեզ մնայր՝ հանգիստ
կալ մինչև ցվախճան։ Բա՛ մեզ շնչե



ցիք

ցիք տմբերք՝ դառնաշունչ քամ-
խիստ տաժան, որ մեր արմատըն կէ-
նաց՝ խլեցիք յերկրէ տարաժամ։

՚Ի ԲԵՐԱՆՈՅ ՁԵՌՆԵԼՈՅՆ։

Ո՛վ իմ սիրելի զաւակք միտ դրէք
բանից ծնողիս, ո՛չ ոք կարէ կալ համ-
դիստ՝ յանցաւոր և սուտ Տ͞իս։
Ո՛վ եղիտ ըղ ջուր անոյշ՝ յաղտաղ-
տին և ճահիճ տեղիս, ո՛վ էառ ըղ
համշաքարի ՚ի յաղէ լեղի ուտելիս։
Թէ փորըս պարկեշտ ունիս՝ և գոր-
ծես ըղգործըս բարիս, աստ հանգչիս
որչափ ապրիս՝ միշտ հանգչիս անմահ
՚ի յերկինս։ Ո՛վ քահանայք ա͞յ՝ մի՛
իսպառ մոռանայք դուք զիս, ՚ի ժամ
ս͞բ պատարագին՝ յիշեցէք պարտա-
ւոր հոգիս։ Զի նա է իմ ապաւէն՝
նա քաւէ ըղ մեղս ըղ պարտիս, նա
զիս արասցէ արժան՝ լոյս տեսոյն կե-
նարար փրկչիս։

---

ԿԱՆՈՆ ՚Ի ՎԵՐԱՅ ՄԵՌԵԼՈՑ ԱՌՆ ՀՈԳԵՒՈՐԻ։

՚Ի ԲԵՐԱՆՈՅ ԿՆՈՋՆ։

Եկայք բարեկամք տեսէք՝ ո՛ւր է
ձեր ազնիւ սիրելին, արդեօք ՚ի

սեղան բազմի՛ կամ շրջի ՚ի մէջ պար֊
տիզին։ Եկա՛յք և մտէք ՚ի ներքս՝
նայեցէք թէ կանգնի յատին, կամ
հարցէք նմա բան մի՛ արդեօք տայ
ձեզ պատասխանին։ Ո՞ւր է բարեձև
շարժմունքն՝ ո՞ւր զուա՛րթ դեղին
երեսին, զի՞նչ եղև քաղցրախօս լե֊
զուն՝ ո՞ւր ձեռացն անուշակ գինին։
Այն որ միշտ պատի՛ առնէր՝ ձեր
ամէն փոքուն և մեծին, այժմ ո՛չ
ասէ բնաւ՝ թէ բարեաւ եկիք եղ֊
բարք իմ։ Շատ աշխատութի՛ կրեց՝
որ շինեաց զայս տուն և տեղին,
որ քիչ մի հանգիստ լինի՝ վայելէ
հետ բարեկամին։ Գիշեր և ցերեկ
հոգայր՝ զաւակունքն և իւր ընտանին,
որ աղէկ ուտեն հագնին՝ չի նային
՚ի ձեռաքն օտարին։ Աւա՛ղ ու հազար
աւաղ՝ չըհասաւ նա իւր փափագին,
պատանք մի առեր կերթայ՝ կարօտ
մնալով բոլորին։ Ո՜վ աշխարհ ցա֊
ւալից [illegible]՝ շինեցեր ինձ հով մահածին,
զիս անկենդան արարեր՝ ու առեր
տա֊

տարեր զիմ հոգիին ։ Դո՛ւ ով իմ
գլխոյն պսակ , ո՞ւր մնաց քո սէրն
առաջին . որ քո ընտանեացդ ՚ի զատ՝
ո՛չ ուրախ լինէիր ինքնին ։ Դու ինչ
պէս այժմ կերթաս՝ մոռացեալ ըզ
ձեզ գլխովլին . անտէր անխնամ թո‿
ղուս՝ ո՛չ հոգաս թէ ինչ կու լինին ։
՚Ի գործ սբ եկեղեցւոյ՝ աշխատ լի‿
նէիր կամովլին . քան ըզ մարմնաւոր
վաստակ՝ սիրէիր հոգևոր բարին ։
Այսօր ինչպէս կու ննջես՝ ծագե‿
ցաւ լոյսն առաւօտին . որ միշտ յառ‿
նէիր կինուխ՝ երթայիր ՚ի յեկեղեցին ։
Պատմեա՛ ինձ զի՞նչ եղև քեզ՝ որ
դէմքըդ փոխեր երևին . և ո՛չ կոձըղ
անշարժ՝ գտանի բոլոր քո մարմին ։
Ո՞ւր է ժրութիւն անձին՝ ո՞ւր է ան‿
դադար ջանք քոյին . եղո՛ւկ ինձ որ
ողջ մնացի՝ ու տեսի զայս օր խաւարին ։

՚Ի Բէբրանոյ Դարէշոյն ։

Ցաւ մի ինձ յանկարծ դիպաւ՝ ո՛չ
հուր խանձոտեաց նա զիս . օր է օր
սաստիկ զայրացաւ՝ հալեց ու մաշեց

 մար‿

մարմինս ։ Զմուտ բժիշկներ եկին՝
դեղով՝ ճար չեղև իմ ախտիս, այրե-
ցաւ շինուած մարմնոյս՝ որպէս հիւր
գընաց իմ հոգիս ։ Դու իմ նազելի
տիկին՝ հերիք լաս հերիք պաղատիս,
այսպէս էր կամքն այ՝ որ այրի մնաս
յաշխարհիս ։ Դուք իմ սիրելի զա-
ւակք՝ ձեր ողբն կսկիծ տայ սրտիս,
կամք տեառն օրհնեալ եղիցի՝ ձեր
հայրըն աստուած է յերկինս ։

Աղաչեմ ձեզ սիրուն որդիք՝ կատա-
րեալ լերուք այս բանիս, միմեանց հետ
սիրով կացէք՝ մի՛ մոռնայք մօր ձեր
երախտիս ։ Ըզ տունըս շէն պահե-
ցէք՝ յաղքատաց առէք ողորմիս,
տր յս օգնական լինի՝ յաջողէ ձեր
գործն 'ի բարիս ։

'Ի բերանոյ զաւակաց ։

Արդ՝ ո՛վ հայր մեր պատուական՝ քո
սէրըն եղև մեզ սուսեր, սիրտըն մեր
սաստիկ խոցեց՝ ո՛չ կարեմք ցաւոյս
համբերել ։ Զոդւով չափ աշխատե-
ցար, որըղ մեզ յոյս չափս հասուցեր,


պի-

պխտի որ այժմ հանդչէիր՝ դու մահ
ուամբ յՅիսուս ելեր։ Մ՛մահ աւա_
զակ անմահ՝ իբրև գող 'ի տուն մեր
մտեր, զանդին գանձըն մեր առեր՝
կու տանիս ընդ հողով ծածկել։
Մ՛եղ յոյժ ցանկալի էր նա՝ քան զագ
նիւ գոհար և ակներ, մեք ինչպէս
մխիթարիմք՝ որ հօր մեր կարօտ
թողուցեր։

'Ի Բերանոյ Մեռելոյն։

Ո այս խնդրեմ ազնիւ որդիք՝ տուք
առնել վս իմ պատարագ, իմ օրերն
ած ձեզ տայ՝ դուք լինիք բարի յի_
շատակ։ Նա միշտ կենդանի մնամ՝
թէ լինիք գործով բարեկարգ,
ապա թէ լինիք անկարգ՝ ես յայն_
ժամ մեռանիմ անժառանգ։ Աղատիմ
հոգիդ ած՝ դու ես իմ ապաւէն և
կեանք, առաջնորդեա ինձ յերկինս՝
տեսլեամբ քո առնուլ ըզ փափագ։
Տէր որդւոցս համբերութ՝ լեր նց
դու միշտ օժանդակ, գտանել ատէն
շնորհք՝ և անդէն զանթառամ պսակ։

Գանձ ՚ի վերայ տան ծերանոց ։

• ՚Ի բերանոյ որդւոյն ։

Ո՛վ հայր բարեգութ՝ մեզ հազար եղուկ, որ մեզ հասուցեր՝ զայս խաւար և սուգ․ զորթեր և հայեց՝ միանգամ աչօք, ընդ քո սիրելի՝ հարսունքդ և թոռունք։ Տես աչաց նոց̃՝ լի աղերսակունքս, թէ զիա՞րդ հասեն՝ որբեան արտասուք․ քոյին խնամոց՝ կարօտ եմք բազմօք, մի՛ թողուր ընդ մեզ՝ ՚ի քէն որբ և զուրկ ։

՚Ի բերանոյ հօրն ։

Մնացէք բարե՜՝ սիրելի զաւակք, ես ընդ ձեզ թողի՝ հօրս փոխանակ․ զմայր ձեր տկար՝ ձեզ յանձնեմ որդեակք, ՚ի սէրն այ̃՝ արարէք խնամս։ Յորժամ էի ես՝ աստէն կենդանի, ընդ պիտոյսն ձեր՝ ես իսկ հոգայի․ Նա այսուհետև՝ ձեր ձեռքըն հայի, մի՛ թողուք անտես՝ այրի խղճալի ։ Նա աղաչեմ՝ երես ՚ի գետնի, եղբայրսիրութե̃՝ կացէք յաշխարհի․ փոքրըն հընազանդ՝ եղբօր ձեր մեծի,



մե‐

մեծըդ խընամօղ՝ և հայր ամենի ։
Դիւրութըն պատուեցէք՝ գործ ձեր յաջողի , ողորմած լերուք՝ մեղքըն ձեր քաւի . բարի արարէք՝ գըտանէք բարի , տունս չէն լինի՝ մընամ կենդանի . Պատուէրըս պահէք՝ հոգի իմ բերկրի , զօրհնութիս առնուք՝ ա՟ծ ձեզ հաճի . բազմանայք որդւովք՝ կեանք ձեր յերկարի , հոգւոյ և մարմնոյ՝ բարիք ձեր աճի ։

Ի բերանոյ որդւոյն ։

Դու ես հայր գըթած՝ թագ մեր պարծանաց, դու ես գանձարան՝ մեզ անբաւ բարեաց . եթէ այժմ ըզմեզ թողուս հեռանաս , իսկ ո՞վ լինիցի՝ մեզ պսակ փառաց ։ Ո՜վ բարերար՝ գըթած ողորմած , յոյսըն մեր այժմիկ՝ միայն քեզ մնաց . հայր մեր ըստ մարմնոյ՝ եթող և գընաց , ո՞վ հայր երկնաւոր՝ դու արա մեզ այց ։

Ի բերանոյ հօրն ։

Ըզ ձեզ աղաչեմ՝ ազնիւ բարեկամք, արարէք վ՟ն իմ՝ աղօթք աղաչանք .


ով

ով իմ ընտանիք՝ որ շուրջ զինև կայք․
տուք զողորմութի՛ հոգւոյս օժանդակ։
Դուք ով քահանայք՝ փրկչին պաշտօնեայք
յիշեցէք և զիս՝ 'ի մէջ պատարագ․
այն միայն մնաց՝ ինձ վերջին թոշակ,
որով փրկութիւն հասից անվտանգ ։

Ահեղ խորհրդոյ քահանայի՛ն
բազկատարած կայր իբրև մին առա
ջի մէջ սեղանո՛յն․ հուր շիջանի
խաւարի մերժի․ տիրամայր հոգի
բերն ուրախանա՛ն, զի թողութի՛
մեղաց լինի․ ալ։

Հոգւոյն հան'' ։ Հայր մեր որ'' ։

Տաղ Ննջեցելոց ։

Այն եհաս յոր վախճանի ի
մոյ՝ լալոյն ողբումն՝ և աշ
խարումն․ սիրտ իմ խռովեցա
յիս․ և ոսկերք իմ ցամաքեցան․
օգնեա և ինձ'' ։

Ամահի ... իմ զարթուցին զիս



պա

պահպանչօք հոգւոյ իմոյ · տա-
նէիր զիս ՚ի ճանապարհ հեռա-
գոյն զոր ոչ գիտէի · օգն ։

Կուսածին մարդացեալ Ած իմ
յիսուս · յայնմաւուր ահեղ
ատենին ընդդիմնս արեան քո մի
դատապարտեր · օգնեա ։

Արարիչ և մարդասէր անո-
խակալ և բարեգութ · որ գալ-
ոց ի սրօբէից տէր դատաւոր ար-
դարութեան · ընդ սրբոց առաք-
ելոց տէր պսակեա զմեր ննջե-
ցեալսն · ողորմեա ։

Աղօթք վասն հաւատօրէն ննջեցելոց ։
Զոր ասէ քահանայն յետ ասելոյ զ Ի՛ր որ տէրն, և զՀայր մերն ։

Յիշեսցէ՛ բարեգութ և մարդասէրն ած՝ զհոգիս հաւատօրէն հանգուցեալ ննջեցելոցն ։ Մանաւանդ զհոգի հանգուցելոյս մերոյ այս անուն ծառայի քոյ, որոյ վասն զպաշտօնս և զպատարագս մատուցաք ։ Թողցէ՛ տր ած զմեղս նորա զամենայն՝ զկամայն և զակամայն ․ զգիտութե և զանգիտութե ․ զմահացուն և զներելին ։ Ընդ աջին լուսոյն, Գաբրիէլեան փողոյն, Երանաւէտ ձայնին, Ահոյլին տեսոյն, Անթառամ պսակին, Անմատոյց խորանին, Լուսեղէն առագաստին արժանիս արասցէ ։ Եւ զմեզ հաւատացեալս անուան քոյ՝ խաղաղ կենօք պահելով, երկնից արքայութեն արժանացուսցէ ամէն ։

Ապա ասէ, որ բերան առէ 'ի սեղանէ հրաժարմանն ։

 Ընթ

Աւետարանք Ածշնորհութեան ։

Ալէ՛ Ալէ՛ ։ Տր մի սրտ՛ ։ Օղորմեա՛ ։

Սէ։ Աւետրնէն ՅԻ ԿԻ որ ըստ Մատ՛ ։

Տրն մեր Յի Քի ասէ ։

Մատ թ Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, այն իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա՝ եւ ասէր, դուստր իմ արդ եւս վախճանեցաւ․ այլ եկ՛ եդ դիցես զձեռն քո ՚ի վերայ նորա՝ եւ կեցցէ ։ Յարեաւ Յս՝ եւ գնաց զհետ նորա աշակերտօքն հանդերձ ։ Եւ ահա կին մի՝ տառապեալ երկոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ ՚ի դրօշակ հանդերձի նորա ։ քանզի ասէր ՚ի միտս իւրում, թէ միայն մերձենամ ՚ի հանդերձս նորա՝ փրկիմ ։ Իսկ Յիսուս իբրեւ դարձաւ՝ եւ ետես զնա՝ ասէ․ քաջալերեա՛ց դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ․ եւ փրկեցաւ կինն ՚ի ժամէն յայնմանէ ։ Իբրեւ եկն Յս ՚ի

՚ի տուն իշխանին, և ետես զխռով–
ւորսն և զամբոխ յոյժ, ասէ ցնս. ՚ի
բաց գնացէք. զի ոչ եթէ մեռեալ
է աղջիկդ՝ այլ ննջէ։ և ծաղր առնէ–
ին զնա։ Իսկ իբրև ել ամբոխն ՚ի բաց,
եմուտ. կալաւ զձեռանէ նորա, և
յարեաւ աղջիկն։ Եւ ել համբաւս
այս ընդ ամ երկիրն ընդ այն.

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն յս,
զհետ եղեն նր կոյրք երկու, աղա–
ղակէին և ասէին, ողորմեա մեզ որդի
դաւթի։ Եւ իբրև եկն ՚ի տուն,
մատեան առ նմ կոյրքն։ Եւ ասէ ցնս
յս. հաւատայք՝ եթէ կարող եմ առ–
նել ձեզ զայդ։ ասեն ցնա, այո տր։
Յայնժամ մերձեցաւ յաչս նց՝ և ա–
սէ. ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ։
և բացան աչք նց։ Եւ սաստեաց նց
յս և ասէ. զգոյշ կացէք, մի ոք գի–
տասցէ։ Եւ նոքա ելեալ համբաւեցին
զնա ընդ ամենայն երկիրն
ընդ այն.



(Ինծիշխ–Բէան)

Տրն մեր յս քս ։

Ճաշու Ա Եւ փաղփաղակի ելեալ ՚ի ժողովրդենէն, եկն ՚ի տուն Սիմոնի և Անդրէայ՝ յակոբաւ և յոհաննու հանդերձ։ Եւ զոքանչ սիմոնի գտանէր ջերմացեալ. և փաղփաղակի ասեն ցնա վն նր։ Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նր, և եթող զնա տենդն, և պաշտէր զնս ։

Բ Եւ մտեալ դարձեալ ՚ի կափառնայում, յետ աւուրց լուր եղև եթէ ՚ի տան է. և ժողովեցան բազումք՝ մինչև տեղի ևս ոչ լինել, և ոչ առ դրանն. և խօսէր նց զբանն։ Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ ՚ի չորից։ Եւ իբրև ոչ կարէին մերձենալ առ նա՝ յամբոխէ անտի, քակեցին զյարկն ուր էր յս, և բացեալ զառաստաղն՝ իջուցին զմահիճսն յորում կայր անդամալոյծն։ Եւ տեսեալ յս զհաւատս նց, ասէ ցանդամալոյծն. որդեակ՝ թողեալ լի-

լիցին քեզ մեղք քո։ Իսկ էին ոմանք 'ի դպրաց անտի' որ անդ նստէին. և խորհէին 'ի սիրտս իւրեանց. թէ զինչ է դա' որ խօսի սա զհայհոյութիւնս. ով կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ մի Աստուած։ Իսկ գիտաց Յիսուս յոգի իւր' թէ այնպէս խորհին 'ի սիրտս իւրեանց, և ասէ, զի՞ խորհիք զայդ 'ի սիրտս ձեր։ Զի՞նչ դիւրին է ասել ցանդամալոյծն' թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել' արի' առ զմահիճս քո և երթ 'ի տուն քո։ Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ 'ի վերայ երկրի' թողուլ զմեղս։ ասէ ցանդամալոյծն. քեզ ասեմ, արի' առ զմահիճս քո' և երթ 'ի տուն քո։ Իսկ յարեաւ. և վաղվաղակի առեալ զմահիճսն, ել առաջի ամենեցուն. մինչև զարմանալ ամենեցուն' և փառաւոր առնել զԱստուած' և ասել, թէ այսպիսի ինչ երբեք' ոչ տեսաք։



([illegible])

ԱԷ Ղուկաս ՅԻ ՄԻԷ ըստ Դ.

Տրն մեր յս քս ասէ.

Ղուկ Դ Եւ էջ 'ի կափառնայում 'ի քաղաքն գալիլեացւոց, և ուսուցանէր զնոսա 'ի շաբաթուն. և զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի իշխանութեամբ էր բան նորա. Եւ էր 'ի ժողովրդեանն այր մի զոր ունէր այս դիւի պղծոյ, և աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ և ասէ. Թո՛ղ, զի՞ կայ մեր և քո յս նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմ զքեզ ո՛վ ես՝ սուրբ այ. Սաստեաց 'ի նա յս և ասէ. պապանձեաց՝ և ել 'ի դմանէ. Ընկեց զնա դևն 'ի միջի անդ և ել 'ի նմանէ, և ոչ ինչ վնասեաց նմա. Եւ եղեն զարմանալիք 'ի վերայ ամենեցուն. խօսէին ընդ միմեանս և ասէին. զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ և զօրութեամբ սաստէ՝ այսոց պղծոց՝ և ելանեն. Եւ երթայր հռչակ զնմանէ յամ տեղիս շուրջ զգաւառաւն.

Եւ յարուցեալ 'ի ժողովրդենէ անտի



(ԱՂ-Եսպերան)

տի՛ եմուտ 'ի տուն սիմոնի. եւ զզքանչ
սիմոնի տագնապէր ջերմամբ մե-
ծաւ. եւ աղաչեցին զնա վ̃ն նորա ։
Եւ կաց առ նմա, սաստե̃ց ջերմանն,
եւ եթող զնա. եւ վաղվաղակի յարե̃ւ,
եւ պաշտէր զն̃ս ։ Եւ ընդ արեւուն
մտանել՝ ամ̃քեան որոց էին հիւանդք
'ի պէս պէս ցաւս, բերէին զն̃ս առ
նա. Եւ նա՛ իւրաքանչիւր ումեք 'ի
նոցանէ դնէր ձեռս, եւ բժշկէր զն̃ս.
Ելանէին դեւքն 'ի բազմաց, աղաղա
կէին եւ ասէին. եթէ դու ես որդի
ա̃յ ։ եւ նա սաստէր եւ ո՛չ տայր թոյլ
խօսել, զի գիտէին զնա թէ ք̃ս է ։
Եւ իբրեւ տի՛ եղեւ՝ ել գնաց յանա-
պատ տեղի, եւ ժողովուրդքն խնդրէ-
ին զնա. եկին մինչեւ առ նա՝ եւ ար-
գելուին զնա՝ զի մի՛ գնասցէ 'ի նո-
ցանէ. Եւ նա ասէ ցնոսա՝ եւ այլո՛ց
քաղաքաց պա՛րտ է ինձ աւետարա-
նել զարքայութիւն ա̃յ, զի յայն իսկ ա-
ռաքեցայ. Եւ քարոզէր 'ի ժողո-
վուրդսն գալիլեացւոց ։

չօհ Յետ այսորիկ տօն էր Հրէից. եւ ել
ե յս̃ յերուսաղէմ։ Եւ էր յԵմ
'ի պրոպատիկէ աւազանին՝ որ կոչէր եբրայեցերէն բեթհեզդա՝ հինգ սրահս։ Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որ ակն ունէին ջրոյն յուզելոյ։ Եւ հրեշտակ տն̃ ըստ ժամանակի իջանէր յաւազանն եւ յուզէր զջուրսն. եւ որ նախ 'ի շարժումն ջուրցն իջանէր՝ բժշկէր. ոչ ունելով զնշան հիւանդութեան։ Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն եւ ութ ամ էր 'ի հիւանդութեան իւրում։ Զնա իբրեւ ետես յս̃՝ զի անկեալ դնէր, եւ գիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետեւ, ասէ ցնա. կամիս ողջ լինել։ Պատասխանի ետ հիւանդն, տէր. ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն։



( Ա.-Էջմածին )

և մինչ ես դանդաղէիմ, ա՛յլ ոք քան
զիս յառաջագոյն իջանէ. Ասէ ցնա
յս. արի՛ առ զմահիճս քո և գնա։
Եւ ողջացաւ այրն. և յարեաւ, էառ
զմահիճս իւր և շրջէր։ և էր շաբաթ
յաւուրն յայնմիկ. Ասեն հրէայքն
ցբժշկեալն՝ շաբա՛թ է, և ո՛չ էր ար֊
ժան քեզ առնուլ զմահիճս քո։
Պատասխանի ետ նոցա՝ և ասէ. որ
բժշկեացն զիս, նա՛ ասաց ցիս՝ արի՛
առ զմահիճս քո և գնա։ Հարցին
ցնա՝ և ասեն. ո՞վ է այրն որ ասաց
ցքեզ՝ առ զմահիճս քո և շրջեաց։ և
բժշկեալն ո՛չ գիտէր թէ ո՛վ իցէ.
քանզի յս խոյս ետ մջ ամբոխին ՚ի
տեղւոջէ՛ անտի։ Յետ այսորիկ գտանէ՛
զնա յս ՚ի տաճարին, և ասէ ցնա.
Ահաւասիկ ողջացար, մի՛ ևս մե֊
ղանչեր. զի մի՛ չար ևս ինչ լինիցի
քեզ։ Գնաց այրն՝ և պատմեաց հ
րէիցն, եթէ յս էր՝ որ բժշկեացն զիս։

Փառք քեզ տէր ած մր.

## Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն վասն Խոստովանութեան : ԺԲ.

Որդ՝ ես ծնունդս մեղաց, որդիս մահացու երկանց, արդարև անսահման բիւրուց քանքարաց տուժից դող հատուցանող ՚ի միում պուր : Այլ ո՛չ թէ առ փոքրկութն մարդկային մտաց հայցեմ ներողութիւն, այլ առ աննման լիութն փրկչիդ յի քն պաղատիմ մարդասիրութն · որ չէի երբեմն, և ստեղծեր · չմողթեցի, և դու արարեր · չև ևս եկեալ ՚ի լոյս, և տեսեր · ո՛չ յայտնեցեալ եմ, և գիտացար · ո՛չ կարդացեալ, և խնամարկեցեր · ո՛չ համբարձեալ ձեռն, և նայեցար · ո՛չ պաղատեալ, և ողորմեցար · ո՛չ կերպացեալ ձայնիս, և լուար · ո՛չ հեծեծեալ, և ունկնդրեցեր · դիտելով զորդեան դիպուածս, և չանտեսեցեր · նախահայեցող աչօք նկատեալ զպատժապարտս չարագործութիւն և յօրինեցեր :

Արդ՝ զքո արարեալս, և զքև
փրկեալս, և զայսքանեաց խնամոց
յանձանձելս՝ մի՛ իսպառ կորուսցէ
մեղացն հարուած՝ գխուռք բանսարկ
ուին. մի՛ յաղթեսցէ յամառութեան
խմոյ մառախուղ՝ ներողութեան քո լուսոյ.
մի՛ սրտիս կարծրութիւն՝ երկայնամտու
բարութեանդ. մի՛ մահացու մեղքիս՝ ա-
մենակատարդ լրութեան. մի՛ տկարութիս
նիւթոյ՝ անպարտելիդ բարձրութեան։
Ահա կարկառեմ զկարկամեալ բա-
զուկս հոգւոյս յանուն քո՝ հզօր,
արասցես ողջ իբրև զառաջինն, մինչ
'ի դրախտին փափկութեան զպտուղն կե-
նաց կթէի։ Աշխանդեալ գօսացեալ
'ի կոր կործանմամբ ըստ կնոջն տագ-
նապելոյ՝ կոյ անուղղելի հոգւոյս
թշուառութի, ըստ երկիր պշուցեալ
մեղացն կշռամբ՝ սատանայկին բռուն
կապանօքն մի՛ զերկնայնոյդ ընկալ
ցի զողջոյն խոնարհեալց առ իս՝ միայն
ողորմած, որ բարձրացուսցես զփոյ
տրս խոնարհ բանաւոր անկեալ, և



զէ-

(Գրիգորի Նարեկ)

զչորացեալս ծաղկեցուցես 'ի բարի կրօնս վայելչութեան, ըստ ա̃նաբա-նութե̃ ս̃ր մարգարէին։

Որպէս զ'ի ծնէ կոյրն անլուսաւոր' չունիմ տեսարան. որով զստեղծչիդ նկատել զկերպ մաղթեցից' հզօր բա-րեգութ, միայն դու պաշտպան ակ-նարկեալ խնամովք անճառ քոյ սի-րոյ' 'ի շնչական խօսուն քո անօթս, յանէից գոյաւորութի̃ լուսոյ հաս-տեսցես։

Ընդ երկոտասանամեայ չարեօք չար-չարեալ վշտագին կնոջն տանջեցելոյ' գետովք մղանաց արեան հեղեղիմ. հայեա՛ց 'ի բարձանց անմատոյց լու-սովդ պարածածկեալ, ուր ո՛չ է քղանցք ձեռաստեղծական վերարկ-ու̃ի ձործոյոյդ տարածումն հրաշից ամենայն ուրեք զօրացեալ։

Ո'չօծութե̃ իւղով' պատժապարտս ընդ մեղաւորին մատուցեալ առ կեն-դանածիր ոտից գարշապարդ' զկաթ-ըլս աչացս' վարսիւք հերացս ընծայե-



( ԼՀ ԾԷՐ• ՐԻԺՇԻՆ-ՐԻԵԱՆ )

ցուցանեմ, այլ զամբիծ հաւատս՝ ամ-
բարձմամբ բազկացս՝ սոյն դաւան-
մամբ հոգւոյ ողջունիւ՝ շրթանց կը-
փուցմամբ զերկիր համբուրեմ. խոստո-
նել հեծութն աղբերցս արտասուաց,
բժշկութի հոգւոյս աղերսեմ.

Սատանայ մեղանօք հոգւոյս գոյ-
ութի լուծել մեղկութբ, և յերկուց
կողից միայնակողմամբ անհաստատ հե-
տովք, ընթացից գործին՝ նահանջ-
մամբ չարին՝ զհետևականն բարձ-
ութի շինուածոյ մարմնոյս՝ առ ելս
ծառոյն կենսատուրին պտղոյն խափա-
նեցելոյ, պատսպարեցես անդրէն
ներսաքին՝ միայն ճանապարհորդ առ ՚ի
փրկութի.

Ո փառաբանարան հաստուածոյ
կերպիս ՚ի քէն եղելոյ՝ ամբափակ
խցմամբ համրոցոյց արգել հողմբան-
արկուին, հոգիդ քո ազդել մեծ-
ողորմութեամբ, ըստ յաւետարանին
բե՛ չկեցելոյ, հրաշափառապէս բարե-
գործեսցես բանդ կենդանի ինձ խօ-

 սո

(Գրիգորի Նարեկ)

տողութիւն անսայթաքելի ։

Ընկել կամ չարեօք ՚ի մահիճս ախ-
տից ընկողնոց մեղաց՝ դի կենդանի և
խօսուն մեռել, կարեկցեալ խնամ
թշուառութե՛ ողբականօք գքու-
նաց ձայնից, ով բարերար որդի Այ,
օրհնաբանեալ աչացդ ցօղով վերա-
կանգնեսցես ՚ի կենդանութի, իբր
զախրելին ՚ի յանշնչական մեռելու՛։

Մայրդ դառնացօղս ՚ի գբի մեղաց
կամ տարակուսեալ, ձեռն մատու-
ցեալ՝ արձ՛ անստուեր որդի բարձ-
րելոյ, հանցես զիս ՚ի լոյս քումդ
նշուլից ։

Ընդ աղիողորմ թշուառութե՛ կական-
ման ձայնի՝ այրւոյն ՚ի նոյին՝ մօր
մոմօրին, տատանմամբ մատանցն,
կոծմամբ կրծիցն, հոսմամբ արտա-
սուացն, տառապանօք տխրութե՛ դի-
մացն՝ և ես պաղատիմ վերջին հե-
ծութի՛ս, տուր յուսահատելոյս զքա-
ջալերութի՛ մխիթարութե՛ գթած քո-
բանիդ, ասելով և ինձ գովեալդ բա-



( [illegible] )

րի՝ ստեղծիչ աշխարհի , թէ մի՝ լոր
գերի՝ քաղմաց ողբալի · որով ընդ
պատանւոյն կենդանացելոյ՝ ՚ի վշտա-
ցելոյ ծնողին սփոփանս՝ զամենա-
պարտ ոգիս ընկալցուք ՚ի քէն ընդ
նմին կրկին նորոգեալ ·

Ընդ յուսակիր անզգայելոցն՝ դիմա-
լըլուկ և քարակոշկոծ հեղձամղձուկ
եղկելի անձանցն , քստմնելի դիւա-
խըռւի հերացն , վայրենիներեւ բան-
դագուշելոցն՝ ՚ի քէն ողորմեալ փըր-
կիչ բոլորից , իբրև զնայն առ քեզ
դիմեցից · հերքե՛լ մերժեսցես ըղ-
գունդս չարացն ապականողաց ՚ի քո
խորանէս , զի ժամանեալ հոգիդ քո
բարի՝ այսրէն հանդիցէ լցել զմար-
մինս մաքրութբ շնչոյս՝ զգեցմամբ
անդամոցս , զդիմաց արտացես զխելա-
գարեալս ամենաթշուառ ։

Ընդ գերեցել դժոխաբնակաց վը-
տարանդելոցն հոգւոյ՝ արդելեալ
կամ ՚ի փոանդի , զձառագայթ ողոր-
մութե փառաց քոց ծագեալ՝ լոյսդ
իմ

իմ անձկութեն, ՚ի կապանաց օցտողին
զերծնուլ զիս ապրեցուցես։ Պաղտ‿
նորոգայթ աներեւութերակ վրիպակ
արտահետ գարշութ մեղացս Ջրգողե‿
ցեալ ոգւոյս կերպարան, կայ ՚ի
տագնապի. զծածկեցեալն ՚ի տեսո‿
ղութեց՝ զչարագործին նիւթիցն այ‿
տուցմունս, քո ինքնաւորդ զօրե‿
ղութ՝ որդի այ, գթածաբար առող‿
ջացուցես։ Զբազմազան տարապա‿
ցեղեցն զանազանից ախտաւորութեց
մահացուցանողաց՝ իւրականօք կը‿
րըստեան բերլոք՝ դժնդակարմատ
շառաւեղօք հաստատեցելովք ՚ի յան
դաստանի անօրէն մարմնոյս, տարա‿
կորզեցես ՚ի ձեռն ձեռինդ ամենա‿
կալի. որ արօրադրեալ միշտ՝ և մշտ‿
կես զահամանս հոգւոց առ բանիւ‿
կենաց արդիւնաւորութե։

Եւ քանզի անցաւ ըստ նմանութե
օրինակութեց յանցուածոցս վէր,
ըստ Զորախօղն քաղցկեղի, առ բնա‿
անդամս մասնաւորնալ զախտին տա‿



րա‿

( [illegible] )

րածուն, չիք սպեղանի իբր խորոյէ-
ղի՛ առ անչափութի խարանացն մատու-
ցանել. ՚ի խարսխաց բարձից՝ մինչև
ցափն կառուցման լրուն անդամոցս՝
չէ՛ առողջութի, այլ ամենևին անբժըշ-
կութի: Իսկ դու՝ ո՛ղորմած բարե-
րար օրհնել, և երկնայնամիտ թագա-
ւոր անմահ, լո՛ւր պաղատանացս ար-
գահատուն սրտիս վտանգիս, որ կար-
դամս առ քեզ տր ՚ի նեղութ:

Լու քեզ փառք յաւիտեանս յաւի-
տենից ամէն.

Ա տ հիւանդաց և տմ վշտացելոց
աղաչեսցուք զփրկիչն մեր. քս վէ ո-
ղորմեսցի լստ մե".

Փարատեցո զցաւս՝ և բժշկեա ըղ-
հիւանդութիս ՚ի ժողովրդենէ
քումմէ տր ած մեր, և շնոր".



(Գրիգորէ Նարէ")

## Աղօթք խունկ օրհնելոյ ։

Ամենակալ Տ՟ր Ա՟ծ մեր, որ ընկալար զխունկն 'ի ձեռաց Ահարոնի և որդւոց ն՟ր. և ոչ հաճեցար ընդ հուրն օտար, և ընդ խունկն օտարոտի. վ՟ն և մեք սարսիմք և դողամք, զի մի՛ զնոյն կրեսցուք պատիժ ։

Արդ այժմ աղաչեմք զքեզ Տ՟ր բարերար, ընկալ զսա 'ի ձեռաց մերոց, որպ 'ի ձեռաց Ահարոնի ընկալար, և զաքարիայի. և պարգևեա մեզ զշնորհս հոգւոյդ ս՟րբ։ Մերժեա 'ի մէնջ ա՟մ անհաւատութիւն խաւարասէր թշնամւոյն. և տուր մեզ առնուլ 'ի մտա-դաս և զերկիւղ ա՟ծութեանդ ։

Շնորհօք և մարդասիրութ՟բ Տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի, որում վայելէ փառք և իշխանութի. այժմ և ։

## Աղօթք վասն երաշտի ։

Տէր Ա̅Ծ մեր, որ յաղագս առ քեզ նախանձուն՝ լուար եղիայի մարգարէին ՚ի ժամանակին յայնմիկ․ և երկնի հրամայեցեր արգելուլ զանձրև, զի մի՛ տացէ երկիր զպտուղ իւր․ և դարձեալ յաղագս խնդրոյ նորա՝ ցօղ պտղաբեր պարգևեցեր ։ Դու տ̅ր ա̅մ՝ շարժեալ ՚ի բարեգթութենէ քումմէ՝ անձրև ըստ կամաց քոց պատրաստեցեր ժառանգութե̅ քում․ և զբազում մեղս մեր անտես արարեր ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ, զանձրևս քո առաքեա՛․ որք պէտս ունին և խնդրեն ՚ի քէն ։ Ուրախ արա զերեսս երկրի յաղագս ժողովրդե̅ն քո, և վ̅ն տղայոց՝ և անասնոց, և ա̅մ կենդանե̅ց․ որք ակնունին առ քեզ տալ նոցա կերակուր ՚ի ժամու ։ Զի դու ես տ̅ր ա̅ծ մեր՝ ա̅ծ բարերար․ և քեզ վայելէ փառք և" ։

# Ցանկ կանոնաց պարունակելոց ի Մաշտոցս հատորի։


Կանոն Մեծի թաղման — Ե։
Կանոն Մեծի այգուց — ԽԲ։
Կանոն Մեծի եօթնաւուր — Կ։
Կանոն Տղայաթաղ կատարելոյ — ԿԶ։
Կանոն Տղայի այգուց — ՂԷ։
Կանոն Տղայի եօթնաւուր, կամ քառասնաւուր, կամ տարելից կամ տարելոյ — Ճ։
Կանոն Վժառարածին յղի կնոջ — ՃԳ։
Կանոն Ս̃ան ոյսահարաց և լուսնոտից — ՃԵ։
Անբիծք ննջեցելոց — ՃԻԵ։
Շարականք հանգստեան — ՃԽ։
Պանձք ննջեցելոց — ՃՂԶ։
Մաղթանք վ̃ ննջեցելոց — ՄԻԱ։
Աւետարանք բժշկութե̃ — ՄԻԵ։
Աղօթք բժշկութե̃ — ՄԼ։
Աղօթք խունկ օրհնելոյ — ՄԼԲ։
Աղօթք վասն երաշտի — ՄԼԹ։